

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2021 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

Հաստատված է
Հայաստանի ազգային ագրարային
համալսարանի հոգաբարձուների
խորհրդի նիստում 01 փետրվարի, 2022թ.
արձանագրություն N

Խորհրդի նախագահ՝ Գ. Գևորգյան

01 փետրվարի, 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2021 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	6
ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ	12
ՀԱԱՀ Ա. ՔՈԶԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ	13
ՀԱԱՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ	14
ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	14
«ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻՎՈՍ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	15
ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	16
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	17
ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC)	17
ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB)	18
ԻՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ	19
«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	19
ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....	20
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	24
«ԱՅԳԵՊՏՂԱՔՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» (ՖՐՈՒՏԵՆԻԱ)	24
«ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ» (ԱԳՐԻՔԵՄՓ)	26
ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ARMENIAN WORKFORCE DEVELOPMENT ACTIVITY)	27
ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՁՈՐԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՅԱՅԻՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ	28
(STRENGTHENING ORGANIC AGRICULTURE IN ARMENIA: PARTICIPATORY HIGHER EDUCATION AND KNOWLEDGE EXCHANGE FOR DEVELOPMENT (SOAA))	28
ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ (SMARTI)	29
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՂՐԴՋՍԱՆՈՒՄ ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ (GEOTAK)	30
«ԳԻՆՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ԴՈՒԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ»	30
«ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ»	31

«ԳՈՄԱՂԲԻ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ»	32
ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	32
ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	36
ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	36
ՈՍԿԵՀԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	37
ՈՍԿԵՀԱՏԻ ԳԻՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	38
ԱԿՈՒՆՔ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	38
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	39
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	40
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ	82
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	83
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	89
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	90
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԹԱՅ	93
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ	93
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	112

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին, ի հակառակ մեր երկրին ու համալսարանին բաժին հասած անօրինակ փորձությունների, փորձեցինք չընկճվել և ամենօրյա նվիրյալ աշխատանքով ապահովել մեր հաջողությունների շարունակականությունը:

Այժմ գոհունակությամբ կարող ենք արձանագրել, որ 2021-ին մենք հասել ենք մեր նախանշած բնագծերին, ըստ էության՝ համալսարանի գործունեության բոլոր հիմնական ուղղություններում՝ ուսումնական, գիտական, խորհրդատվական: Մենք ևս մեկ էական առաջընթաց քայլ ենք կատարել դեպի համալսարանի տեխնոլոգիական ապագան: Կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխման, դուալ կրթության, նորագույն մասնագիտությունների (կայուն գյուղատնտեսություն, ճշգրիտ գյուղատնտեսություն, հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն և այլն) ներդրման և ստեղծված մի շարք արդիական ենթակառույցների (Ագրոճամբար, Ագրոդրոնների լաբորատորիա, Կաթնամթերքի վարպետաց դպրոց, Գարեջրագործության և թորման լաբորատորիա, Հացի-հրուշակեղենի լաբորատորիա և այլն), պրոֆեսորադասախոսական կազմի անընդհատ մասնագիտական վերապատրաստումների միջոցով մեզ հաջողվեց ընդհանուր առմամբ ամբողջացնել կրթական նոր միջավայրը:

Ագրարային համալսարանի մեծ ընտանիքը 2021-ին էլ ավելի ամրապնդվեց ներսից, դարձավ ավելի համերաշխ ու կուռ և ձեռք բերեց նորանոր գործընկերներ, համախոհներ, գաղափարակից ու աջակից ընկերներ թե Հայաստանում և թե երկրի սահմաններից դուրս: Համատեղ ջանքերով մենք կարողացանք հասնել համալսարանի համբավի ու վարկանիշի բարելավմանը:

Հաշվի առնելով բարեփոխումների տեմպը և խորքային բնույթը, մեր գործընկերների ընդլայնվող ցանցն ու պետական աջակցությունը, անբեկանելի է, որ համալսարանում կշարունակվի բարեփոխումների խորացման, նոր ենթակառույցների ստեղծման գործընթացը: Եվ Ագրարային համալսարանը կշարունակի զարմացնել նոր ու տպավորիչ ձեռքբերումներով, նորարարություններով, ինչպիսին է, օրինակ, աշխատանքային կիսամյակի ներդրումը, նոր, ոչ միայն կրթագիտական, մեզանախագծերի իրականացումը, որ զարգացնելու են երկրի գյուղատնտեսության ու ագրոբիզնեսի ամբողջ ոլորտը, ստեղծելու են հազարավոր աշխատատեղեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԵԼ Է 4 ՏԱՐԻՎ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) Հավատարմագրման հանձնաժողովի մարտի 15-ի նիստի օրակարգը վերաբերում էր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրմանը:

Նիստի ընթացքում հավատարմագրման հանձնաժողովի անդամները քննարկել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի արտաքին գնահատման փորձագիտական զեկույցն ըստ հավատարմագրման 10 չափանիշների տիրույթների, դիտարկել դրական և բացասական գնահատված տիրույթները, դրանցում առկա խնդիրները, նախորդ հավատարմագրումից ի վեր արձանագրված առաջընթացը և բարելավման ծրագրի իրագործման արդյունքները:

Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ Հայաստանի ազգային ագրարային համալսարանին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով:

Վերջին անգամ ՀԱԱՀ-ը ինստիտուցիոնալ հավատարմագրում էր ստացել 2015-ին, դարձյալ 4 տարի ժամկետով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2021-2022 ուսումնական տարում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ըստ ամբիոնների կողմից ներկայացված և գործող ուսումնական պլաններով ճշգրտված ծանրաբեռնվածությունների, սահմանված ժամկետների՝ առարկայական ծրագրերի բովանդակությանը և օրացուցային պլաններին համապատասխան՝ կիրառելով ուսուցման և հիբրիդային, և առկա, և հեռավար մոդելները:

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակից սկսած՝ բակալավրի կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցման ձևի առաջին և երկրորդ կուրսերի բոլոր քննություններն իրականացվել են վերակառուցված գնահատման և թեստավորման կենտրոնում. բուհում գիտելիքների ստուգման թեստային եղանակի անցման և բարելավման գործընթացը դեռ շարունակվում է:

Համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկը և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխումը կատարվել է վերափոխված չափորոշիչներին համապատասխան: Ըստ ֆակուլտետների՝ ձևավորվել են գծապատկերում ներկայացված դրույքաչափերը, որոնք իրացվել են բոլոր ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի կողմից՝ լրիվ կամ մասնակի (երեք քառորդ, կես, քառորդ, համատեղության կամ ժամավճարային կարգով) ծանրաբեռնվածությամբ:

2021-2022 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրի, անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով ընդունելությունն իրականացվել է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված տեղերի, քննությունների և ուսման վարձավճարների չափի՝ նախատեսված ժամկետներում:


2021-2022 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրի, անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով 1-ին և 2-րդ փուլերով միասին ՀԱԱՀ է դիմել 259 դիմորդ: Բուհերի ընդունելության հիմնական մրցույթից հետո ընդունվել է 69 ուսանող (51 անվճար, 18 վճարովի):

ՀԱԱՀ դիմորդների ճնշող մեծամասնությունը մարզերից և սահմանամերձ գյուղերից են, ովքեր չեն կարողացել հաղթահարել քննության անցողիկ շեմը, կապված տարբեր պատճառներով՝ մարզային և սահմանամերձ դպրոցներում ուսուցիչների պակաս, կրկնուսուցման անհնարինություն, մասնակցություն գյուղատնտեսական սեզոնային աշխատանքներին և այլն:

Բուհերի ընդունելության լրացուցիչ մրցույթից հետո ընդունվել է 18 ուսանող: 2020 թվականի համեմատ լրացուցիչ մրցույթով ընդունվել է 3 անգամ ավելի շատ ուսանող: 2021-2022 ուսումնական տարում ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման համակարգ է դիմել 448 դիմորդ, ընդունվել է 403 ուսանող: Ընդունելության այս տարվա ցուցանիշը 1,5 անգամ ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:

2021-2022 ուսումնական տարում մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ համալսարան է ընդունվել 168 մագիստրանտ, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 22 մագիստրանտ, որոնցից համապատասխանաբար 22-ը և 10-ը ՀՀ տարբեր բուհերի շրջանավարտներ են:

Գծապատկեր 1-ում ներկայացված է 2020-2021 և 2021-2022 ուստարվա առկա բակալավրի ընդունելությունն ըստ ֆակուլտետների.



Գծապատկեր 1. ՀԱԱՀ առկա բակալավրի ընդունելությունն ըստ ֆակուլտետների:

Ըստ կրթական ծրագրերի՝ ավելի շատ ուսանող է ընդունվել հետևյալ բաժիններում.

1. Ագրոբիզնես և ֆինանսներ՝ 23 ուսանող ($\approx 26\%$):
2. Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա՝ 14 ուսանող ($\approx 16\%$):
3. Պարենամթերքի տեխնոլոգիա՝ 10 ուսանող ($\approx 11\%$):
4. Անասնաբուժություն՝ 9 ուսանող ($\approx 10\%$):
5. Ջերմատնային ագրոտեխնոլոգիա՝ 6 ուսանող ($\approx 7\%$):
6. Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն՝ 5 ուսանող ($\approx 6\%$):
7. Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա՝ 5 ուսանող ($\approx 6\%$):

Բուհում կան որոշ կրթական ծրագրեր, որոնցում ընդունվողների թիվը չի գերազանցել 5-ը: Դրանք են՝

1. Սննդամթերքի անվտանգություն՝ 3 ուսանող:
2. Ագրոէկոլոգիա՝ 3 ուսանող:
3. Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում՝ 3 ուսանող:
4. Հողաշինարարություն, հողային կադաստր՝ 2 ուսանող:
5. Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում՝ 2 ուսանող:
6. Բույսերի պաշտպանություն՝ 1 ուսանող:
7. Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա՝ 1 ուսանող:
8. Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ՝ 1 ուսանող:
9. Կենսագործունեության անվտանգություն՝ 1 ուսանող:
10. Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրոտեխնիկական կառուցվածքներ՝ 1 ուսանող:

Բուհում թափուր մնացած կրթական ծրագրերն են՝

1. Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում:
2. Անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն:

Աշխատաշուկայի պահանջներին ի պատասխան՝ մագիստրատուրայում իրականացվել են կրթական ծրագրերի խոշորացում, ուսումնական պլանների արդիականացում: Արդյունքում ունենք նոր՝ «Մեքենասարքավորումների ճարտարագիտություն», «Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն», «Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ», «Կայուն գյուղատնտեսություն», «Ճշգրիտ գյուղատնտեսություն» կրթական ծրագրերը: «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված են հունական «Արատոս գրուպ» կազմակերպության ներկայացուցիչները, Արևմտյան Մակեդոնիայի համալսարանի դասախոսական անձնակազմը և Լայբնիցի անվան անցումային տնտեսությունների գյուղատնտեսական զարգացման ինստիտուտի դասախոսական կազմը:

2021 թ. Կայուն գյուղատնտեսություն մագիստրոսական կրթական ծրագիրը տվեց իր առաջին շրջանավարտները, որոնց 40 տոկոսը իրենց հետազոտությունները իրականացրել են միջազգային ծրագրերի, մասնավորապես՝ GIZ-ի շրջանակներում: Ծրագրի ներդրման ընթացքում մշակվեցին և հանրությանը ներկայացվեցին 5 ուսումնական ձեռնարկներ՝ «Շրջանաձև տնտեսություն», «Բնական ռեսուրսների կայուն կառավարում», «Կլիմայակայուն խելամիտ գյուղատնտեսություն», «Գյուղատնտեսական թափոնների կայուն կառավարում», «Ներառական գյուղական հասարակություն»:


ՀԱԱՀ-ի և դրա մասնաճյուղերի տարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում (բերված է նաև համեմատական տեղեկատվություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, ինչպես նաև տեղափոխությունների, հեռացումների, ազատումների և վերականգնումների վերաբերյալ):

**ՀԱԱՀ փարբեր կրթական ծրագրերով ուսումնառողների թվաքանակը
31.12.2020 -31.12.2021 թթ.**

Աղյուսակ 1


Ուսուցման ձևը	Ուսանողների թվաքանակը առ 31.12.2020 թ.		Ընդունելություն	Վերականգնում	Տեղափոխություն				Շրջանավարտ	Հեռացում (ազատում)	Ուսանողների թվաքանակը առ 31.12.2021 թ.	
	ընդամենը ուսանող	տարկետում			այլ բուհից	այլ մասնագիտությունից	այլ բուհ	այլ մասնագիտություն			ընդամենը ուսանող	տարկետում
Առկա ուսուցում	1561	381	90	23	2	16		67	353	208	1064	142
Մագիստրատուրա	259	22	190	1					143	57	250	22
Ասպիրանտուրա	39	1	7						0	19	27	0
Քոչինյանի անվան գյուղ. քոլեջ	630	38	238	12					120	71	689	30
Շիրակի գյուղ. քոլեջ	139	9	69	1	2				4	29	178	9
Սիսիանի մասնաճյուղ	185	5	40	3			7		21	37	163	2
Սիսիանի մասնաճյուղ քոլեջ	57	0	46						0	9	94	0
Վանաձորի մասնաճյուղ	303	21	45	10	3				50	24	287	7
Վանաձորի մասնաճյուղ քոլեջ	17	0	0						0	2	15	0
Վարժարան	312	0	85		11		30		91	2	285	0
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	3310	266	403	228	100	70		13	424	717	2957	173
Ընդամենը ՀԱԱՀ	6812	743	1213	278	118	86	37	80	1206	1175	6009	385

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվել է սահմանված ժամկետներում, միջանկյալ քննությունները, ստուգարքները, ամփոփիչ քննությունները, կուրսային և անհատական աշխատանքների հանձնումը, դիպլոմային նախագծերի ու աշխատանքների պաշտպանությունները կազմակերպվել են նախատեսված ժամկետներում և պահանջվող ձևաչափերով: Գծապատկեր 2-ում ներկայացված են միջին գնահատականներն ըստ կիսամյակների և ֆակուլտետների:



Գծապատկեր 2. 2020-2021 ուստարվա ուսանողների առաջադիմությունն ըստ ֆակուլտետների (միջին բալլը):

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, բացի ՀՀ քաղաքացիներից, 2020-2021 ուստարում ուսանել են սփյուռքահայ 16 ուսանողներ՝ 38,0 %-ը Վրաստանից, 31,0 %-ը Լիբանանից, 13,0 %-ը Սիրիայից: Մեկական ուսանող Մոլդովայից և ԱՄՆ-ից:



Գծապատկեր 3. 2020-2021 ուստարվա սփյուռքահայ ուսանողների թվաքանակը, մարդ:

Հաշվետու ժամանակահատվածում բուհի միջոցների հաշվին իրականացվել են ուսման վարձավճարների 20-100 % զեղչեր՝ հետևյալ կատեգորիաներով.

1. Ապրիլյանի ժամանակ մարտական գործողությունների մասնակից
2. Ապրիլյանի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած
3. Մարտական հերթապահություն իրականացրած
4. Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող
5. 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ
6. Սոց. անապահովության միավորից բարձր միավոր ունեցող
7. Սոց. անապահովության միավորից ցածր միավոր ունեցող
8. Բարձր առաջադիմություն ունեցող
9. Երեք և ավելի անչափահաս երեխա, ինչպես նաև տանից երեք և ավելի ուսանող ունեցողներ
10. Հաշմանդամ ծնող ունեցող
11. Զինվորական հաշմանդամ ծնող ունեցող
12. ԲՈՒՀ-ի աշխատող հայցորդ

Առաջին կիսամյակում զեղչվել է բուհի և մասնաճյուղերի 250 ուսանողի, երկրորդ կիսամյակում՝ 124 ուսանողի վարձավճար:

Հաշվետու տարում ՀԱԱՀ գիտխորհրդի հաստատմանն են ներկայացվել կանոնակարգ և ընթացակարգ:

Մեթոդական խորհրդի հաստատմանն են ներկայացվել.

1. Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի 2021-2022 ուստարվա վերանայված ուսումնական պլանները.

- «Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի ուսումնական պլան,
- «Մեքենասարքավորումների ճարտարագիտություն» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսումնական պլան,
- «Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսումնական պլան,
- «Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր» կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա և հեռակա ուսումնական համակարգի ուսումնական պլան:

2. Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի «Ագրարային մենեջմենթ» կրթական ծրագրի ուսումնական պլանը:

3. Բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգերի 2021-2022 ուստարվա նոր ուսումնական պլանները.

- «Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն» կրթական ծրագրի բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պլան,
- «Մեքենասարքավորումների ճարտարագիտություն» կրթական ծրագրի բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պլան,
- «Ճշգրիտ գյուղատնտեսություն» կրթական ծրագրի բակալավրի առկա ուսուցման համակարգի ուսումնական պլան,
- «Տրանսպորտային և լոգիստիկ համակարգեր» կրթական ծրագրի բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պլան,
- «Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ» կրթական ծրագրի բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պլան:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում մեթոդական խորհրդի կողմից երաշխավորվել է հրատարակման ՀԱԱՀ ֆակուլտետների մեթոդական հանձնաժողովների կողմից ներկայացված թվով 31 գրականություն՝ 4 դասագիրք, 7 մեթոդական ցուցում, 12 ուսումնական ձեռնարկ, 1 աշխատանքային տետր, 3 մենագրություն, 2 մեթոդական ուղեցույց, 1 ուսանողի ուղեցույց և 1 աշխատություն:

2020-2021 ուստարում դիպլոմներ են շնորհվել ՀԱԱՀ 1253 շրջանավարտի. բակալավրիատի (առկա և հեռակա) 980 շրջանավարտներից 23-ը, մագիստրատուրայի 143 շրջանավարտներից 43-ը, քոլեջների 130 շրջանավարտներից 15-ը ստացել են գերազանցության դիպլոմ:

ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2021-2022 ուստարում ՀԱԱՀ վարժարանի 10-րդ դասարան է ընդունվել 85 աշակերտ: Ներկա պահին վարժարանի ընդհանուր աշակերտների թիվը 287 է: Վարժարանը 2021թ. իրականացրել է 10-12 թդ դասարաններում ուսումնական

ալանով նախատեսված բոլոր հանրակրթական առարկաների ուսուցումը: Ողջ տարվա ընթացքում կատարվել է աշակերտների հաճախումների ամենօրյա հաշվառում, որոնց արդյունքում ունեցել ենք միջինում 90 % հաճախելիություն:

2021-2022 ուսումնական տարում վարժարանն ունեցել է 25 հիմնական և 4 համատեղությամբ աշխատող աշխատակիցներ, ովքեր տարվա ընթացքում մասնակցել են տարբեր վերապատրաստումների և դասընթացների: Արդեն իսկ վերապատրաստվել է պարտադիր ատեստավորման ենթակա թվով 5 ուսուցիչ (բոլորը հավաքել են անհրաժեշտ կրեդիտները և ստացել համապատասխան վկայագրեր): ԿԳՄՍՆ աջակցությամբ ՀՊՄՀ-ում կազմակերպված կարճաժամկետ վերապատրաստումներ են անցել մաթեմատիկա, հասարակագիտություն դասավանդող բոլոր ուսուցիչները: ԿԳՄՍՆ-ի կողմից այս տարվանից մեկնարկած ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցել և բարձր արդյունքներ են արձանագրել վարժարանի երեք ուսուցիչներ, որոնց աշխատավարձերը հինգ տարի ժամկետով նույնբեր ամսից կավելացվեն համապատասխանաբար 50 (1 ուսուցիչ) և 40 (2 ուսուցիչ) տոկոսով:

Այս ուսումնական տարվանից սկսած՝ վարժարանի սովորողները հնարավորություն ունեն ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների գործնական աշխատանքները անցկացնել հիմնանորոգված լաբորատորիաներում, ինչը նպաստել է այդ առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրության մեծացմանը:

Այս ուսումնական տարում վարժարանի պատմության մեջ առաջին անգամ վարժարանի աշակերտները փորձառու ուսուցիչ Նելլի Խաչատրյանի հետ միասին մասնակցեցին ԿԳՄՍՆ կազմակերպած «Տարվա լավագույնները» մրցույթին և «Լավագույն նախագիծ» անվանակարգում մրցանակակիրների շարքում էին: Վարժարանին շնորհվեց նաև Որակի եվրոպական հավաստագիր «Իթվինինգ» ծրագրում աշխատանքի գերազանցության համար, իսկ ծրագրին մասնակցած աշակերտները ստացան Ազգային որակի հավաստագրեր:

2021 թ. ընթացքում տեղի են ունեցել 15 տարաբնույթ միջոցառումներ, հանդիպումներ և առարկայական բաց դասեր: Կազմակերպվել են այցելություններ ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետներ և ստորաբաժանումներ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով:

ՀԱԱՀ ուսիրհրդի կողմից կազմակերպված միջֆակուլտետային սպորտային, մշակութային և ինտելեկտուալ միջոցառումներին ու մրցաշարերին լավագույնս մասնակցելու համար 2021 թ. դեկտեմբերին վարժարանը ստացել է տարվա գավաթը: Վարժարանն ավարտել է 93 շրջանավարտ, որոնց ավելի քան 40 %-ը ընդունվել է ՀԱԱՀ:

ՀԱԱՀ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՀԱԱՀ-ի Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում 13 մասնագիտությունների գծով ուսուցումն իրականացվում է առկա եղանակով: 2021թ. հունվարի 1-ի դրությամբ քոլեջում ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 592 ուսանող, որից 91-ը՝ վճարովի հիմունքներով: 12 ուսանող ընտանեկան պայմանների պատճառով ազատվել է, իսկ 13-ը՝ կիսամյակային ծրագիրը սահմանված ժամկետներում չկատարելու և անհարգելի բացակայությունների

պատճառով հեռացվել են: Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ նախորդ տարվա համեմատությամբ անհարգելի բացակայությունները նվազել են 6,7 %-ով:

Քանի որ համալսարանը համալրված է գործնական պարապմունքների անցկացման բոլոր հնարավորություններով, քոլեջի դասացուցակը կազմվում է այնպես, որ ուսանողների դասերի որոշ մասը անցկացվում է ՀԱԱՀ-ի հիմնական մասնաշենքերում, որպեսզի նրանք ևս օգտվեն ժամանակակից կահավորված լաբորատորիաներից և ենթակառույցներից:

Քոլեջի 5 ուսանող մասնակցել է Բալաիովիտի կաթնամթերքի վարպետաց դպրոցի տարեվերջյան մեկշաբաթյա դասընթացին

Քոլեջում արդեն ներդրվել է գինու ոլորտում դուալ ՄԿՈՒ կրթական ծրագիրը, որի իրականացման գործընկերները մասնավոր հատվածի հայաստանյան գինեգործական ընկերություններն են:

Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 120 ուսանողներից քննություններին մասնակցել է 117 ուսանող: 2-րդ պետական ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքներով գյուղատնտեսական քոլեջն ունեցել է 117 շրջանավարտ, այդ թվում՝ 15-ը ստացել է գերազանցության դիպլոմ: ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգ է տեղափոխվել 43 ուսանող: 2020-2021 ուստարում ընդունվել է 238 ուսանող, որից 93-ը՝ վճարովի հիմունքներով:

ՀԱԱՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

Հավատարիմ մնալով ՀԱԱՀ-ի առաքելությանը, կարևորելով բուհի 2020-2024 թթ. Ռազմավարական ծրագրում ամրագրված դրույթներն ու զարգացման հիմնական նպատակները, ՀԱԱՀ մասնաճյուղերում 2021 թ. շարունակվել են իրականացվել ուսանողական համակազմի համալրմանը, ուսումնառության և դասավանդման գործընթացի արդիականացմանը, մայր բուհի կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցության ապահովմանը, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների բազմազանեցմանը, գործատու-գործընկեր կազմակերպությունների հետ կապերի զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև մասնաճյուղերի ենթակառույցների հզորացմանը միտված աշխատանքներ:

ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

2021 թ. դեկտեմբերի 21-ի դրությամբ մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 298 ուսանող, ինչպես և նախորդ տարի: Տարվա ընթացքում մասնաճյուղից հեռացվել է 20 ուսանող (նախորդ տարում 37), 1-ը փոխադրվել է այլ բուհից: Համաձայն հաստատված կանոնակարգի՝ 2021 թ. սեպտեմբեր ամսին մասնաճյուղում կատարվել է հեռակա ուսուցման համակարգի դիմորդների փաստաթղթերի ընդունում: Արդյունքում 56 դիմորդից մասնաճյուղ է ընդունվել 53-ը (նախորդ տարում՝ 27): Շրջանավարտների թիվը կազմել է 50 (նախորդ տարում՝ 53): Մասնաճյուղի հեռակա ուսուցման «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Հո-

դաշինարարություն և հողային կադաստր», «Սննդամթերքի անվտանգություն», «Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ», «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա», «Հաշվապահական հաշվառում և հարկում», «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում», «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» կրթական ծրագրով 31 կուրսերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է մայր բուհի հեռակա դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

2020-2021 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով դասավանդել է 82 դասախոս, 44-ը Վանաձոր են գործուղվել ՀԱԱՀ-ից, 6-ը մասնաճյուղի հաստիքային աշխատողներ են, իսկ 32-ը՝ Վանաձոր քաղաքում գործող պետական բուհերից և այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետներ: Դասավանդող դասախոսներից 45-ը ունեն գիտական կոչումներ և աստիճաններ, որը կազմում է 55 %: 2021 թվականին վերապատրաստում են անցել մեկ բաժնի վարիչ և մեկ աշխատակից:

2021 թվին շարունակվել են մասնաճյուղի ենթակառույցների համալրման աշխատանքները: Ամբողջությամբ կահավորվել է հողի անալիզի լաբորատորիան: «Կանաչ արահետ» ՀԿ-ի ու ՀԱԱՀ-ի գործակցության արդյունքում Վանաձորի մասնաճյուղում հուլիսից արդեն հասանելի է Գիտելիքի նորարարական հանգույցը, որի ստեղծման նպատակն է խթանել սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացումը Լոռու մարզում: Նախաձեռնությունը իրականացվում է «EU4Youth Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի զարգացում (SEED) սահմանամերձ շրջաններում կանաչ առաջընթացի համար» նախագծի շրջանակներում:

2021 թ. My forest Armenia բնապահպանական կազմակերպության աջակցությամբ մասնաճյուղում հիմնադրվել է ջերմատուն՝ տարեկան 72000 տնկի աճեցման հնարավորությամբ:

«ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«ՀԱԱՀ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում ուսուցումը իրականացվում է առկա ձևաչափով հետևյալ մասնագիտությունների գծով.

- «1041 – Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)»
- «0721 – Մսի և մսամթերքների տեխնոլոգիա»
- «0728 – Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն»
- «0411 – Հաշվապահական հաշվառում»
- «0413 – Մենեջմենթ (Կառավարում)»
- «0414 – Ապրանքագիտություն»
- «0721 - Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա»
- «0811 - Անասնաբուծություն»

Քոլեջում 2021 թ. հունվարի մեկի դրությամբ ցերեկային ուսուցման համակարգում սովորել է 130 ուսանող (նախորդ տարում՝ 111), որից 5-ը՝ վճարովի համակարգում:

2020-2021 ուստարում քոլեջ ընդունվել է 69 դիմորդ (նախորդ ուստարում՝ 59), որից 18-ը վճարովի ուսուցմամբ, այլ հաստատությունից տեղափոխվել 2 ուսանող:

Հաշվետու ժամանակահատվածում գորակոչվել է բանակ 6 (նախորդ տարում՝ 3) ուսանող, 5-ը՝ վերադարձել տարկետումից (նախորդ տարում՝ 3), և հեռացվել 27-ը (նախորդ տարում՝ 5): Ավարտել և ստացել են որակավորում 4 ուսանող (նախորդ տարում՝ 29):

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների անհարգելի բացակայությունների բավարար ցուցանիշ է գրանցվել:

Քոլեջում ԵՄ ֆինանսավորմամբ և «Մարդը կարիքի մեջ» ԲՀԿ-ի հետ գործակցության շրջանակում իրականացվել են «Պանրագործություն» և «Ֆերմերային գործ, անասնաբուծություն» մասնագիտացմամբ լրացուցիչ կրթական ծրագրեր:

Ստեղծվել են ժամանակակից սարքավորումներով և գործիքներով համալրված կաթնամթերքի արտադրության և հողի անալիզի լաբորատորիաներ, նորարական գիտելիքների հար:

Արտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման համար պայմանագրեր են կնքվել մասնագիտական ուղղվածությամբ կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ Շիրակի մարզի Ազատանի գյուղապետարան, Գյումրու համայնքապետարան, Գյումրիի Սելեկցիոն կայան ՓԲԸ, Անուշարան Գրուպ ՍՊԸ, «Եգան» ՍՊԸ, «Տրանս ակնթարթ» ՍՊԸ, «Իգիթ» կաթնամթերքի գործարան ՍՊԸ, «Չերքեզի Ձոր» ՍՊԸ, ՕԿ ՍՊԸ, ԱՁ Սարոյան, ԱՁ Ալբերտ Դերձակյան, ԱՁ Ա.Գաբրիելյան, ԱՁ Մ. Զաքարյան, ԱՁ Ադամյան:

ՄԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ գործող «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա», «Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա», «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա», «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա», «Հողաշինարարություն, հողային կադաստր», «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունների գծով սովորում է 163 ուսանող (նախորդ տարի՝ 185), այդ թվում՝ 2-ը գտնվում են ակադեմիական արձակուրդում: 2021 թ. մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրի 1-ին կուրս է ընդունվել 40 ուսանող (նախորդ տարի՝ 37): Հաշվետու տարում մասնաճյուղից մայր բուհ է տեղափոխվել 7 ուսանող, հեռացվել (ազատվել) 37 ուսանող, վերականգնվել՝ 3: 2021 թ մասնաճյուղն ունեցել է 21 շրջանավարտ:

Մասնաճյուղում միջին մասնագիտական կրթական ծրագրով, հիմնական հանրակրթության հիմքով, առկա ուսուցմամբ գործող «Հաշվապահական հաշվառում», «Մենեջմենթ (կառավարում)», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Պաշտպանված գրունտի կենսատեխնոլոգիա» մասնագիտությունների գծով սովորում է 94 ուսանող, որից 84-ը՝ անվճար ուսուցմամբ (նախորդ տարի՝ 57 ուսանող, որից 53-ը անվճար ուսուցմամբ): 2021 թ. մասնաճյուղի միջին մասնագիտական կրթական ծրագրի 1-ին կուրս է ընդունվել 46 ուսանող (նախորդ տարի՝ 38), այդ թվում՝ 34-ը՝ անվճար ուսուցմամբ: Միջին մասնագիտական կրթական ծրագրից դիմումի համաձայն ազատվել է 7 ուսանող, 1 ուսանող հեռացվել

է անբավարար առաջադիմության հիմքով, 1 ուսանող տեղափոխվել է ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջ: Ընդհանուր 19 ուսանողի տրվել է պետական կրթաթոշակ:

2021 թ. շարունակվել են մասնաճյուղի դասախոսների վերապատրաստման աշխատանքները. 7 դասախոս մասնակցել է մասնագիտական դասընթացների և ստացել հավաստագրեր:

Հաշվետու տարում շարունակվել են նաև մասնաճյուղի նյութատեխնիկական, լաբորատոր և ուսումնափորձարարական բազայի արդիականացմանն ուղղված աշխատանքները: 2021 թ. Սիսիան համայնքի ավագանու որոշմամբ ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացվել է 1,5 հա մակերեսով հողամաս, որտեղ համալսարանը, համագործակցելով միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ և նպատակ ունենալով բուհի գիտական ներուժի և առաջադեմ գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրմամբ ու կիրառմամբ նպաստել կայուն գյուղատնտեսության զարգացմանը ՀՀ հարավային տարածաշրջանում, իրականացնում է ներդրումային խոշոր ծրագիր, որի շրջանակներում մասնաճյուղին կից ստեղծվում է «Գյուղատնտեսության զարգացման ագրոտեխնոլոգիական ուսումնափորձարարական կենտրոն»: ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան կողմից տրված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում վերոնշյալ ուսումնափորձարարական կենտրոնում արդեն սկսվել են գյուղատնտեսական մեքենատրակտորային կայանի հիմնման աշխատանքները: 2022 թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) ֆինանսավորմամբ և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) համաֆինանսավորմամբ ուսումնափորձարարական կենտրոնում կհիմնվեն նաև «խելացի» անասնաշենք՝ հիդրոպոնիկ եղանակով կերի արտադրամասով և «խելացի» ջերմատուն: ՀԱԱՀ-ի և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի համագործակցության շրջանակում աշխատանքներ են տարվում նորաստեղծ ուսումնափորձարարական կենտրոնում արդիական լուծումներով ինտենսիվ այգիներ, իսկ մասնաճյուղում՝ «Հողերի ագրոքիմիական հետազոտությունների լաբորատորիա» հիմնելու ուղղությամբ: Նորարարական այս և այլ ենթակառուցների ստեղծումը, ինչպես նաև դրանց զուգահեռումը ՀԱԱՀ-ի մրցունակ մասնագիտական կրթական ծրագրերին, մեծապես կնպաստի Սիսիանի մասնաճյուղի վարկանիշի և հեղինակության առավել բարձրացմանը՝ որպես ՀՀ հարավային տարածաշրջանի համար կարևոր ռազմավարական դեր ու նշանակություն ունեցող հաստատություն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱԳՐՈՒԹՅՈՒՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC)



2021-2022 ուսումնական տարում դեպարտամենտում «Ագրոքիզնես» մասնագիտությամբ սովորել է երրորդ կուրսի 8 ուսանող: Ուսանողների թիվը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է: Երրորդ կուրսում ուսանողներից 3-ը սովորել են անվճար համակարգում:

Դասընթացներն հետաքրքիր և պրակտիկ դարձնելու նպատակով տարբեր առարկաների շրջանակներում պարբերաբար կազմակերպվում են հրավիրյալ դասախոսություններ:

«Կանաչ գյուղատնտեսություն» առարկայի շրջանակում «Կանաչ պարտատոմսեր» թեմայով դասախոսություն է անցկացրել Ամերիաբանկ ՓԲԸ-ի Կապիտալի շուկաների, կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների ղեկավար Շուշանիկ Հովսեփյանը, որին հաջորդել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանի դասախոսությունը «Կանաչ գյուղատնտեսություն» թեմայով:

Ագրոբիզնեսի կառավարում առարկայի շրջանակում հրավիրյալ դասախոս էր «Աղվերան ռեզորտ» հյուրանոցի տնօրեն Մանվել Արևշատյանը, ով իր մասնագիտական փորձն է փոխանցել ուսանողներին՝ ներկայացնելով «Հյուրանոցային գործ» թեմայով դասախոսությունը:

Ագրոբիզնեսի դեպարտամենտի բակալավրիատի ուսանողները և մագիստրանտները մասնակցել են «Էկոնոմետրիկայի» երկամսյա դասընթացին, որը դասավանդել է Պրահայի CERGE-ի համալսարանի ասպիրանտ Լուսինե Դավթյանը՝ որպես հրավիրյալ դասախոս կրթաթոշակային ծրագրի շրջանակում:

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողները ունեցել են երկու ուսումնական այց. առաջինը «Գոլդն Գրեյս Արմաս» գինեգործարան, որի նպատակն էր ծանոթանալ գործարանի գործունեությանը, գինիների պատրաստման գործընթացին՝ խաղողի տեսակի ընտրությունից մինչև շշալցում և պիտակավորում, հաջորդը՝ «Վենլո» հ/ձ ՍՊԸ ջերմատուն՝ ծանոթանալու ջերմոցային մշակաբույսերի մշակման՝ Հայաստանում առկա առաջադեմ մեթոդներին և լուծումներին:

2021 թ. մայիսին ավարտական կուրսի 16 ուսանողները հաջողությամբ հանձնել են երկու պետական համալիր (ամփոփիչ) քննությունները համապատասխանաբար «Ֆինանսների վերլուծություն», «Մարկետինգի վերլուծություն» և «Միկրոտնտեսագիտություն», «Մակրոտնտեսագիտություն» առարկաներից: Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետական քննական հանձնաժողովի 14.05.2021 թ. որոշման համաձայն՝ դեպարտամենտի «Ագրոբիզնես» մասնագիտության 16 շրջանավարտներին շնորհվել է տնտեսագիտության բակալավրի որակավորում: Պետական որակավորման հանձնաժողովի կողմից 5 ուսանողների շնորհվել է գերազանցության դիպլոմ: 2021 թ. հունիսի 30-ին տեղի ունեցած ավարտական արարողության ժամանակ շրջանավարտներին տրվել են նաև Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB)

2021-2022 ուսումնական տարում Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրոսական ծրագրում սովորել է 6 ուսանող, որոնցից 2-ը՝ անվճար համակարգում:

2021-2022 ուսումնական տարվա առաջին կուրս է ընդունվել 5 ուսանող, որոնցից 3-ը՝ դեպարտամենտի բակալավրիատի 2021 թ. շրջանավարտներ են: Ուսանողներից 2-ը ընդգրկվել են անվճար համակարգում:

2021 թ. փետրվարին ավարտական կուրսի 7 մագիստրանտները հաջողությամբ պաշտպանել են մագիստրոսական ավարտական աշխատանքները՝ ստանալով գերազանց և լավ գնահատականներ: Շրջանավարտներին շնորհվել է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում: Մագիստրանտներից 2-ին

շնորհվել է գերազանցության դիպլոմ: Հունիս ամսին կազմակերպվել է ավարտական արարողությունը, որտեղ մագիստրանտներին հանդիսավոր կերպով շնորհվել են ՀԱԱՀ դիպլոմներն ու Տեխասի A&M համալսարանի հավաստագրերը:

ԻՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ



ԻՎԻ-ԷՆ Գինու ակադեմիայի «Գինեգործություն և գինու բիզնես» 18-ամսյա մասնագիտական հավաստագրային ծրագիրն իր եզակիության շնորհիվ տարեցտարի ձեռք է բերում ավելի մեծ ճանաչում: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր առարկայի շրջանակում իրականացվում են ուսումնական այցեր տարբեր գինեգործարաններ և խաղողի այգիներ՝ լսարանում ձեռք բերած տեսական գիտելիքներն ամրապնդելու նպատակով:

2021-2022 ուստարվա ընդունելության արդյունքում 13 դիմորդից ընտրված 9-ը ներկայումս սովորում են նախապատրաստական փուլում: Այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ ցածր է: Հիմնական դասընթացը նախատեսվում է սկսել 2022թ. հունվարի 21-ից:

2021 թվականի նոյեմբերից արտադրական պրակտիկաների ավարտից հետո վերսկսվեցին նաև երկրորդ կուրսի ուսանողների դասերը: Իսկ պրակտիկաները ուսանողներն անցկացրել են հետևյալ գինեգործարաններում՝ «ԿԱՐԱՍ ՎԱՅՆՍ» («ՏԻԵՌԱՍ ԴԵ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ), «Տրինիտի կոնյան այգիներ», ՀԱԱՀ Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոն, «Վայնվորքս» գինու գործարան ՓԲԸ, «Մանուկյան» կոնյակի գործարան:

2020-2021 ուստարվա ուսանողները 2021 թ. հոկտեմբերին եռօրյա ուսումնական այց կատարեցին Վրաստանի գինեգործական շրջաններ՝ այցելելով 8 գինեգործարաններ Կախեթիում, Կվարելիում և Սիղնաղում, որտեղ նաև համատեսցին տարածաշրջաններին բնորոշ և եվրոպական մեթոդներով պատրաստված առնվազն 25 տարբեր վրացական գինիներ: Հարկ է նշել, որ այս ուսումնական այցը պարբերական բնույթ է կրելու և կազմելու է ծրագրի հիմնական մասերից մեկը:

2018-2020 ուստարվա մասնակիցները հաջողությամբ ավարտեցին նաև «Գինեգործություն և գինու բիզնես» ծրագիրը, ինչպես նաև «Գինու զգայորոշում» առարկան՝ լիարժեք ավարտելով ամբողջ կուրսը: Սեպտեմբեր ամսին կազմակերպվեց 2018-2020 թթ. ուստարվա ուսանողների ավարտական արարողությունը, որը հետաձգվել էր COVID-19-ի պատճառով:

«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2021 թ. հունվարի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրի գերմանալեզու խմբում սովորել է 17 մագիստրանտ, 5-ը՝ երկրորդ ավարտական կիսամյակում, 12 մագիստրանտի տրամադրվել է գործուղում: 2021 թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցու-

թյամբ բակալավրի 4 շրջանավարտի, ովքեր համարվել են Ագրարային մենեջմենթ ծրագրին կցագրված ուսանողներ, տրամադրվել է գործուղում, որից 2-ը անձնական խնդիրների պատճառով դադարեցրել են գործուղումը և վերադարձել Հայաստան: 2021 թ. հունիսի դրությամբ գործուղման մեջ գտնվող 8 մագիստրանտ ազատվել է համալսարանից ՀԱԱՀ-ում ուսման համար սահմանված երկամյա ժամկետը լրանալու կապակցությամբ, 1 մագիստրանտ էլ հեռացվել է համալսարանից քննությունները չհանձնելու պատճառով:

2021 թ. սահմանված ժամանակացույցի համաձայն՝ 5 մագիստրանտ հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները: Վերջիններիս շնորհվել է ՀԱԱՀ-ի տնտեսագիտության որակավորման մագիստրոսի դիպլոմ և Գերմանիայի ՎԿԳՀ-ի սերտիֆիկատ: 2021 թ. գերմաներեն լեզվի նախնական դասընթացներին մասնակցելու հայտ է ներկայացրել 25 ուսանող, սակայն մասնակցել է միայն 11-ը:

2020 թ. ԱՄՋ ծրագրի առաջին կուրս է ընդունվել 6 մագիստրանտ, որից 2-ը՝ անվճար համակարգ, 6-ն էլ գերմանալեզու խմբում: Միջազգային և միջբուհական գործակցային ծրագրերի շրջանակներում 01.10.2021թ.-ից ԱՄՋ-ի լավագույն մագիստրանտներից 2-ը ուսումը շարունակում է Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում: 2021թ. դեկտեմբերին մի խումբ բակալավրի ուսանողների և «Ագրարային մենեջմենթ» ծրագրի առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպվել է 1 շաբաթյա ուսումնաճանաչողական այց Գերմանիայի ՎԿԳՀ: 2021 թ. ծրագրի մասնագետների համար անցկացվել են նաև հեռավար մասնագիտական վերապատրաստումներ Գերմանիայի ՎԿԳՀ-ի միջոցով:

ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի 2020/2021 ուսումնական տարվա գրեթե բոլոր շրջանավարտները աշխատանքի են անցել ՀՀ և ԳԴՀ տնտեսության տարբեր բնագավառներում:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ 2021 թ. ՀԱԱՀ **446** աշխատակից վերապատրաստվել է տարաբնույթ թեմաներով, ինչը **10** անգամ ավելի է, քան 2020-ի, և **3** անգամ ավելի է, քան 2019-ի ցուցանիշը: Մարդկային կապիտալի զարգացման նպատակով ՀԱԱՀ-ի կողմից իրականացված ֆինանսական ներդրումների ծավալը 2019-ի համեմատ ավելացել է **10** անգամ, 2021-ին կազմելով **2 455 500 ՀՀ դրամ**:

- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվել է 36 մասնագիտական վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել է 362 ՊԴԱ-ի ներկայացուցիչ:
- Ռազմավարական զարգացման գործակալության հետ համատեղ «Հմտությունների և գիտելիքի զարգացում» պիլոտային ծրագրի շրջանակներում իրականացվել է.
 - ✓ «Կարողությունների զարգացման դասընթաց», որին մասնակցել են 68 ՊԴԱ-ի ներկայացուցիչներ ՀԱԱՀ-ից և ՀԱԱՀ-ի մասնաճյուղերից:
 - ✓ «Ինչպես զարգացնել ուսումնական հաստատության կայունությունը, հայթայթել ռեսուրսներ և տրամադրել վճարովի ծառայու-

թյուններ» դասընթաց, որին մասնակցել են ՀԱԱՀ մասնաճյուղերի, գիտական կենտրոնների և լաբորատորիաների 28 աշխատակից:

✓ «Ագրոձեռնարկատիրություն» դասընթաց, որին մասնակցել է 10 շահառու:

✓ «Հացաթխման և շոկոլադագործության արտադրություն» կարճաժամկետ դասընթաց, որին մասնակցել է 14 շահառու:

✓ «Բալահովիտ» ուսումնափորձական տնտեսության կաթնամթերքի վարպետաց դպրոցում իրականացվել է «Թթու կաթնամթերք և պանրագործություն» թեմայով կարճաժամկետ դասընթացի II և III փուլերը, որին մասնակցել է 28 շահառու:

- Իրականացվել է «Կենդանիների վակցինատոր» մասնագիտական ուսուցման ծրագրի 6 փուլ, որին մասնակցել է 53 շահառու:
- Համակարգվել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ համատեղ իրականացվող «Սպանդանոցի անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման» դասընթացի II և III փուլերը, որոնց մասնակցել է 12 անասնաբույժ:
- «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում համակարգվել են ֆերմերների համար իրականացվող մեկշաբաթյա դասընթացները, որոնց մասնակցել է 31 ֆերմեր:
- «Նոր էջ» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում պատերազմի մասնակիցների համար իրականացվել են 8 կարճաժամկետ դասընթացներ:

Ուսուցողական ծառայությունների դիմաց ֆինանսական ներհոսքի ծավալը 2021-ին ավելացել է **68** տոկոսով՝ կազմելով **6 170 000 ՀՀ դրամ**:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով ՀԱԱՀ-ում շրջայցեր է կազմակերպվել Երևանի և ՀՀ մարզերի 37 դպրոցների ավելի քան 850 աշակերտների համար: Շրջայցերի ընթացքում աշակերտներին ներկայացվել է աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները, մեր համալսարանի բարեփոխումները և բուհի ընձեռած կրթական հնարավորությունները:

Երևանի և ՀՀ մարզերի 27 դպրոցներում կազմակերպվել է ՀԱԱՀ դասախոսական կազմի մասնագիտական կողմնորոշման շրջայցերը:

- Աշխատանքի տեղավորման նպատակով շրջանավարտների համար կազմակերպվել են հարցազրույցներ ՀԱԱՀ գործընկեր «Երեմյան Փրոջեքթ», «Բեկոն» ՍՊԸ, «Գրին Ֆարմեր» ՍՊԸ, «Ի Բարի» ՍՊԸ, «Ագրոթերյո» ՍՊԸ, «Ինեկոբանկ» ՓԲԸ, «Երևանի շոկոլադի գործարան», ոգելից խմիչքների արտադրության ոլորտի 5, ագրոնոմիական ոլորտի 3 և անասնաբուժական 4 ընկերություններում:
- Կազմակերպվել է «Լավագույնը մեր ուսանողներին» հանդիպումների շարք: «Պրոֆ Ալ» ՍՊԸ, Աստղիկ բարեգործական հիմնադրամի տնօրեն Մարիամ Անտոնյանի, «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի, Հայկական որակյալ բարիքներ արտադրող Իբարի ընկերության համահիմնադիր և տնօրեն Նիկոլայ Մխիթարյանի, JTI, Stamina, Երևանի շոկոլադի գործարանի ներկայացուցիչների հետ, ովքեր ուսանողներին ներկայացրել են ծրագրերը և իրենց

ընկերություններում առկա թափուր աշխատատեղերը, մասնագիտական աճի հնարավորությունները և կարիերայի զարգացման հեռանկարները:

- ՀԱԱՀ 14 ուսանող մասնակցել է «Կրթություն և կարիերա EXPO-2021» ցուցահանդեսին:

- Ուսանողների մրցունակության բարձրացման նպատակով իրականացվել է «Ինչպե՞ս ճիշտ CV կազմել» վերնագրով սեմինար-դասընթաց:

- Իրականացվել է «ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ. ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ» աշխատանքի տոնավաճառը: Աշխատանքի տոնավաճառին, որպես գործատուներ, մասնակցել են ՀՀ առաջատար ընկերությունների ներկայացուցիչներ, ովքեր գեղեցիկ ձևավորված տաղավարներում ներկայացրել են իրենց թափուր աշխատատեղերը, այցելուներից ընդունել են CV-ներ, տեղում անցկացրել հարցազրույցներ, վերջնարդյունքում 12 հոգի ընդունվել է աշխատանքի մեր գործընկեր կազմակերպություններում:

- Իրականացվել է «Կարիերայի և մասնագիտությունների օր» հանդիպում Սևան քաղաքի դպրոցականների համար՝ մասնագիտության գիտակցված ընտրությանն ու կրթություն ստանալու հնարավորություններին մասին:


- Իրականացվել է հանդիպումների շարք՝ «Լոռու մարզի Շենական համայնքի ագրո-զարգացում» խորագրով:

Ուսանողների և շրջանավարտների շրջանում տեղեկատվության տարածման անմիջական ու արագ կապի ստեղծման համար Facebook սոցիալական հարթակում ներդրված էլեկտրոնային հարթակին 2021 թ. դեկտեմբերի դրությամբ հետևում է 4521 անձ, իսկ հարթակի միջոցով տարածված հայտարարությունները հասանելի են 13 000 արտաքին շահառուների: 2021 թ. ընթացքում հարթակում հրապարակվել է տեղեկատվություն դասընթաց-սեմինարների, հանդիպումների և այլ հնարավորությունների, ինչպես նաև 1200-ից ավելի թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

- Գործընկեր կազմակերպությունների խնդրանքով աշխատանքի թափուր տեղերի վերաբերյալ հայտարարություններ են տեղադրվել և ուղարկվել են շրջանավարտների անձնական էլ. հասցեներին: Արդյունքում ավելի քան 25 ուսանող ընդունվել է աշխատանքի:

- Իրականացվել է ՀԱԱՀ 2018-2021 ուսումնական տարիների շրջանավարտների զբաղվածության վերլուծություն: 2018-2021 թվականներին ՀԱԱՀ-ի առկա ուսուցման շրջանավարտների ընդհանուր թիվը 1240 է, որից հարցմանը մասնակցել է 839 շրջանավարտ: Հարցվող շրջանավարտներից 311-ը աշխատում է մասնագիտությամբ, 322-ը աշխատում է, սակայն ոչ մասնագիտությամբ և 206-ը չի աշխատում:

Վերլուծության ամփոփ նկարագիրը ներկայացված է գծապատկեր 9-ում:



Գծապատկեր 4. ՀԱԱՀ 2018-2021 ուսումնական տարիների շրջանավարտների զբաղվածության վերլուծություն:

- Շարունակաբար թարմացվում է շրջանավարտների տվյալների բազան:
- Exit survey (2020-2021) ուս. տարվա շրջանավարտների հետադարձ կապի հարցում) բակալավր՝ 353, մագիստրոս՝ 143:

Պրակտիկաների պլանավորում և անցկացում

- Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել են ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առկա ու հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի, Ա. Քոչինյանի անվան քոլեջի ուսանողների պրակտիկաները: 2021 թ. հունվար-մարտ ամիսներին բոլոր ֆակուլտետներից տարբեր արտադրական կազմակերպություններ պրակտիկայի են գործուղվել 113 մագիստրանտ, 770 ուսանող:
- 2021 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել և անցկացվել են առկա ուսուցման 13 մասնագիտությունների բոլոր ուսանողների նախաավարտական և 3 մասնագիտությունների՝ արտադրական պրակտիկաները: Մագիստրատուրայի առկա ուսուցման 11 մասնագիտությունների բոլոր մագիստրանտներն անցկացրել են իրենց գիտաարտադրական պրակտիկաները: Քոլեջի 4 մասնագիտությունների բոլոր ուսանողներն անցկացրել են նախատեսված արտադրական պրակտիկաները:
- Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱՀ-ի և տարբեր արտադրական կազմակերպությունների միջև կնքվել է 25 հուշագիր, հետագա համագործակցության շրջանակում բանակցություններ են տարվել մի շարք արտադրական կազմակերպությունների հետ:

«ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» (ՖՐՈՒՏԵՆԻԱ)



Ակտիվ իրականացման փուլում են գտնվում ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի ագրոտեխնիկական և կրթական բաղադրիչների աշխատանքները:

Ագրոտեխնիկական բաղադրիչի շրջանակում ՀԱԱՀ «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսության տարածքում 1,5 հա ցուցադրական ինտենսիվ պտղատու այգու հիմնման հիմնական աշխատանքները մեկնարկեցին 2021 թ. փետրվար ամսին: Այգու տարածքի չափագրման և նախագծման աշխատանքներին զուգահեռ մեկնարկեցին կաթիլային ոռոգման համակարգի խողովակաշարերի անցկացման, պոմպակայանի և ջրահավաք ավազանի կառուցման աշխատանքները:

Այգում տնկվել են Իտալիայից պատվիրված դեղձենու 12, սալորենու 10, կեռասենու 16 սորտերի 700 և ծիրանենու տեղական 2 սորտի 132 տնկիներ:

Ծառերի տնկումից հետո շահագործման հանձնվեցին նաև հակակարկտային համակարգը և այգու կաթիլային ոռոգման համակարգը, որը հեռավար կառավարման հնարավորություն ունի, թույլ է տալիս ընտրել ինքնաշխատ ոռոգման ժամանակացույց և ոռոգմանը զուգընթաց կատարել պարարտացում: Ինտենսիվ այգու մշակության աշխատանքներն ավելի արդյունավետ կատարելու նպատակով ՀԱԱՀ-ի և ԱՀԿՄԿ հիմնադրամի միջև ստորագրված «Գյուղատնտեսական տեխնիկայի անհատույց օգտագործման համաձայնագրի» հիման վրա նախագծի շրջանակում ձեռք բերված գյուղտեխնիկան՝ Տրակտոր-Dongfeng DF-504, Մուլեր-Shaktiman BMF 1.8, Կուլտիվատոր-Shaktiman SRT-1.55, Սրկիչ 600L-Agromaster TAS 600 և Մինի գութան-Agromaster 4-furrow micro plough, հանձնվեց ՀԱԱՀ «Ոսկեհատ» տնտեսությանը:

Այգու տարածքում սկսվել և շարունակվում են բարեկարգման և հարակից ենթակառուցվածքների կառուցման/վերանորոգման աշխատանքները, մասնավորապես՝ տարածքը ապահովվել է էլեկտրականությամբ և ինտերնետ կապով, վերանորոգվել է դաշտային պահեստը, տեղադրվել են լուսատուներ և տեսահսկման համակարգ, որի միջոցով հնարավոր է շուրջօրյա ռեժիմով վերահսկել այգու տարածքի անվտանգությունը և հետևել կատարվող աշխատանքների ընթացքին:

Ինտենսիվ պտղատու այգու հիմնման և մշակության տարբեր ժամանակահատվածներում կազմակերպվել են ՀԱԱՀ ուսանողների այցեր «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսություն: Նախագծի համակարգողները ուսանողներին են ներկայացրել ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի ագրոտեխնիկական և կրթական բաղադրիչների նպատակներն ու կատարված աշխատանքները: Պտղաբուծության փորձագետի առաջնորդությամբ ուսանողները շրջել են այգում, մասնակցել ծառատունկին և էտին, ծանոթացել ոռոգման կաթիլային համակարգի առավելություններին, այգու մշակությանը և այլն: Ուսանողների և դասախոսների այցը ինտենսիվ պտղատու այգի կլինի շարունակական: Առաջիկա գյուղատնտեսական տարում կկազմակերպվեն նաև այցելություններ պտղաբուծությամբ զբաղվող կամ հետաքրքրված բոլոր ցանկացողների համար:

ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում ստեղծված **www.aygi.am** կայքը հնարավորություն է ընձեռում պտղաբուծության ոլորտի շահառուներին՝ մասնավորապես ֆերմերներին և ուսանողներին, ձեռք բերել ոլորտին առնչվող գիտելիքներ՝ շնորհիվ ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում պատրաստվող տեսանյութերի և տարբեր աղբյուրներից կայքում մեկտեղված տեղեկատվական նյութերի: Այս ընթացքում կայքը համալրվել է նոր նյութերով, իսկ նախագծի ընթացքում պատրաստված տեսանյութերը հասանելի են ինչպես կայքում, այնպես էլ ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի ֆեյսբուքյան և յուրօրյան (FRUITENIA-ICARE) էջերում:

Նախագծի կրթական բաղադրիչի շրջանակում մշակվել և արդիականացվել են «Պտղատու ծառատեսակների էնտոմոֆաունա և պայքար», «Պտղատու ծառատեսակների հիվանդություններ և պայքար», «Տնկարանների հիմնում և կառավարում», «Ընկուզավոր պտղատեսակների հիմնում և կառավարում», «Ինտենսիվ այգիների հիմնում և կառավարում», «Պտղաբուծություն» և «Կայուն գյուղատնտեսության հիմունքներ» ձեռնարկները, որոնք կտրամադրվեն ՀԱԱՀ ագրոնոմիական ֆակուլտետին:

Ձեռնարկները նպատակ ունեն համալրելու ՀԱԱՀ մասնագիտական գրականությունը՝ ագրոնոմիական մասնագիտության կրթական ծրագրերը հագեցնելով Հայաստանում և արտերկրում իրականացված վերջին հետազոտությունների արդյունքների վրա հիմնված արդիական գիտելիքներով և գործնական հմտություններով: Նախագծի շրջանակում իրականացվեց աշխատաժողովների շարք, որի նպատակն էր ՀԱԱՀ ագրոնոմիական դեպարտամենտի դասախոսական կազմին, մագիստրանտներին և ասպիրանտներին ներկայացնել մշակված ձեռնարկները և համապատասխան առարկայի դասավանդման մեթոդները:

Նախագծի շրջանակում համագործակցության հուշագրեր են կնքվել Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, Արմավիրի տարածքային քոլեջի, Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջի, Նոր Գեղիի ակադեմիկոս Աղաջանյանին անվան պետական գյուղատնտեսական քոլեջի, Սպիտակի պետական քոլեջի, Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի, Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի, Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի հետ: Հուշագրերի շրջանակում նախատեսվում է ՀԱԱՀ-ին պատկանող պտղատու ինտենսիվ այգում կազմակերպել ուսումնական այցեր, այդ թվում քոլեջների ուսանողների, դասախոսների, մասնագետների համար, մշակել և այդ թվում՝ քոլեջներին տրամադրել ձեռնարկ այգեպտղաբուծության վերաբերյալ, իրականացնել վերապատրաստողների վերապատրաստում քոլեջների դասախոսների համար՝ այգեպտղաբուծության մասնագիտության ուղղվածությամբ, և հնարավորություն տալ քոլեջներին օգտագործել այգեպտղաբուծության վերաբերյալ վեբ-կայքը ուսումնական նպատակներով: Հաշվետու ժամանակահատվածում Ոսկեհատի պտղատու այգի են այցելել վերը նշված գյուղատնտեսական քոլեջների 113 ուսանող և դասախոս:

Ներկայումս նախագծի շրջանակում մշակվում է «Ինտենսիվ պտղատու այգիների հիմնում և կառավարում» եռամսյա դասընթաց: Վերապատրաստման դասընթացը նախատեսվում է սկսել 2022 թ. փետրվարին: Դասընթացի նպատակն է վերապատրաստել և զարգացնել մասնակիցների մասնագիտական որակավորումը՝

տրամադրելով ժամանակակից պահանջներին համապատասխան գիտելիք և գործնական հմտություններ:

«ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ» (ԱԳՐԻՔԵՄՓ)



«Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱգրիՔեմփ)» նախագիծն իրականացվում է Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի հետ համատեղ՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

2021 թվականին ԱԳՐԻ ՔԵՄՓ ծրագրի շրջանակում ավարտին հասցվեցին «Զարթոնք» հանգստյան տան հարկաբաժինների, ժողովների սենյակի, խոհանոցի ու ճաշարանի վերանորոգումը, կահավորումը և հարակից տարածքի բարեկարգումը, իսկ հոկտեմբերի 12-ին «Ագրոճամբար» ուսումնական կենտրոնը իր հյուրընկալ դռները բացեց ծրագրի շահառուների համար:

Անցյալ տարվա 3-րդ եռամսյակում ԱԳՐԻ ՔԵՄՓ ծրագրի շրջանակում իրականացվել են տարբեր դասընթացներ «Ժամանակակից սննդագիտությունը և սննդամթերքի անվտանգության համակարգերը», «Ջերմատների հիմնում և կառավարում», «Կապերի ընդլայնում, թիմային և անհատական զարգացում» թեմաներով: Դասընթացներն ունեցել են 79 մասնակից ՀԱԱՀ դասախոսական կազմից, աշխատակազմից, ինչպես նաև ուսանողներից, շրջանավարտներից և ոլորտով հետաքրքրված երիտասարդներից:

Հատկանշական է նաև, որ ծրագրի շրջանակում տրամադրվում են հետազոտական դրամաշնորհներ ՀԱԱՀ ուսանողներին: Ուրախ ենք նշել, որ 2021 թ. ավարտին համալսարանի 8 ուսանող ստացել է հետազոտական դրամաշնորհներ: Թեմաները հիմնականում ընդգրկել են բուսաբուծության, այգեգործության, սննդի և խմիչքների արտադրության ոլորտները:

Ծրագրի շրջանակում իրականացվում է նաև AgriThon-ը, որը գյուղատնտեսական ոլորտում նորարարական լուծումներով ստարտափ գաղափարների մրցույթ է: 2021 թ. ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթի արդյունքում ընտրվել էին 43 ստարտափ թիմեր/գաղափարներ, որոնցից 15 թիմ/գաղափար անցավ ինկուբացիայի երկրորդ փուլ: Երկրորդ փուլ անցած թիմերից 2-ն ամբողջությամբ համալրված են ՀԱԱՀ դասախոսներով և ուսանողներով, իսկ մյուս թիմերի անդամներից շատերը ՀԱԱՀ շրջանավարտներ են:

Ծրագիրը իրականացնում է նաև դասընթացներ կին ձեռներեցների համար տարբեր թեմաներով, ինչպիսիք են ինտեսիվ այգիները, անասնաբուծությունը, փափուկ հմտությունները և այլն: Այս թեմաներով դասընթացներին 2021 թ. ընթացքում մասնակցել է ավելի քան 350 մարդ:

Դասընթացներ են իրականացվել նաև կոոպերատիվի անդամների և ֆերմերների համար հետևյալ թեմաներով՝ «Կոոպերատիվի արժեքները և սկզբունքները», «Ֆինանսական գրագիտություն», «Փափուկ հմտություններ» և այլն: Նախորդ

տարվա ընթացքում վերը նշված թեմաներով դասընթաց անցել է ավելի քան 140 մասնակից:

Ծրագիրը 2021 թ. ընթացքում սկսել է նաև AgriHUB ստեղծագործական հարթակի ստեղծումը, որի աշխատանքները կշարունակվեն 2022-ին:

ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ARMENIAN WORKFORCE DEVELOPMENT ACTIVITY)

2021 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ԱՄՆ ՄԶԳ Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի շնորհանդեսը: Ծրագիրն իրականացնում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի և «Սիվիտտա Հայաստան» գործարար խորհրդատվական ընկերության հետ գործակցությամբ *Բարձր տեխնոլոգիաներ, Գյուղատնտեսություն, Զբոսաշրջություն/հյուրընկալություն* ուղղություններով:

Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի նպատակն է աջակցել հայ երիտասարդներին՝ ձեռք բերելու և զարգացնելու ժամանակակից աշխատանքային հմտություններ և նրանց զինել պահանջված մասնագիտություններում բավարար գործնական հմտություններով:

Ծրագրի իրականացման համար նախատեսված հինգ տարիների ընթացքում շուրջ 10 հազար մասնագետ կվերապատրաստվի, որից ավելի քան 3200-ը լինելու է ագրարային ոլորտում, ընդ որում թիրախային խումբը երիտասարդները և կանայք են, որոնք, որպես ծրագրի արդյունք, աշխատանք կգտնեն գյուղատնտեսության, ՏՀՏ, զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտներում: 7000 երիտասարդ աշխատանքի է անցնելու կամ ավելի լավ աշխատանք է ունենալու, որից մոտ 2240-ը՝ ագրարային ոլորտում:

Ծրագրի շրջանակներում՝

- ՀԱԱՀ-ում հիմնվելու է պարենամթերքի մշակման ԴԵՄՈ-ԼԱԲ,
- հիմնվելու է 7 նոր լաբորատորիա ՀԱԱՀ մասնաճյուղերում (Շիրակի գյուղատնտեսական քոլեջ, ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղ, ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղ, Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջ),
- հիմնվելու է 2 գիտելիքի նորարարական հաբ ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում և Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում, ձևավորվելու է երիտասարդական ագրո-նորարարական հաբերի պլատֆորմ, որի նպատակն է Հայաստանի տարբեր մարզերում ավագ դպրոցների և քոլեջների սաների հետ ագրարային ոլորտի կրթական գործունեություն ծավալելը,
- հիմնվելու է ուսանողների գերազանցության կենտրոն,
- ներդրվելու են նոր ԴՌԻԱԼ ծրագրեր ՀԱԱՀ քոլեջներում,
- մշակվելու և ներդրվելու են կարճաժամկետ, միջնաժամկետ և փափուկ հմտություններ ձևավորող ծրագրեր,
- ծրագրի շնորհիվ վերապատրաստվելու են շուրջ 10000 15-29 տարեկան երիտասարդներ, որից 3280-ը՝ ագրոոլորտում,
- ծրագրի շրջանակում ներառականության ոլորտում վերապատրաստվելու է ՀԱԱՀ 300 դասախոս,

- իրականացվելու է ՀԱԱՀ և գյուղատնտեսական քոլեջների կարիերայի կենտրոնների կարողությունների հզորացում:

Ծրագրի գործունեության ժամանակահատվածը՝ 2021 թ. հոկտեմբերից 2026 թ. սեպտեմբեր: Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 7,5 մլն դոլար, որից ՀԱԱՀ մասնաբաժինը՝ 1,113 մլն դոլար:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՉՈՐԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

(STRENGTHENING ORGANIC AGRICULTURE IN ARMENIA: PARTICIPATORY HIGHER EDUCATION AND KNOWLEDGE EXCHANGE FOR DEVELOPMENT (SOAA))

ՀԱԱՀ-ն իր գործընկեր Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանի հետ շահել է Ավստրիական զարգացման գործակալության APPEAR advanced դրամաշնորհային ծրագիրը, որը նախկինում արդեն իրականացված «Հայաստանում օրգանական գյուղատնտեսության ձևավորում; Օրգանական շահագրգիռ կողմերի գիտելիքների և հմտությունների բարելավում մասնակցային ուսումնական պլանի մշակման և իրազեկման միջոցով» ծրագրի տրամաբանական շարունակությունն է:

Ծրագրի նպատակն է գնահատել և բարելավել է արդեն գործող «Օրգանական գյուղատնտեսություն» կրթական ծրագիրը, ստեղծել ուսանողական օրգանական ֆերմա, օրգանական գյուղատնտեսության ոլորտում ներդնել կարճաժամկետ ծրագրեր:

Ծրագիրը համակարգում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանը Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանի գործակցությամբ:

Ծրագրի շրջանակներում՝

- ստեղծվելու է ուսանողական օրգանական ֆերմա ՀԱԱՀ Ակունքի ուսումնափորձնական տնտեսության հենքի վրա,
- մշակվելու և ներդրվելու են կարճաժամկետ ծրագրեր և հզորացվելու են մասնավոր սեկտորի կարողությունները օրգանական գյուղատնտեսության ոլորտում,
- գնահատվելու և բարելավվելու է արդեն գործող «Օրգանական գյուղատնտեսություն» կրթական ծրագիրը,
- վերապատրաստվելու են ՀԱԱՀ ՊԴ կազմը դասավանդման, ուսանողակենտրոն ուսումնական պլանների մշակման/իրականացման, միջազգայնացման հզորացման ուղղություններով,
- լրամշակվելու են կրթական ծրագրերի վերանայման մեխանիզմներն ու գործիքները:

Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանի թիմը աջակցելու է ՀԱԱՀ աշխատակիցներին բարելավելու միջազգային ծրագրերի համակարգման կարողությունները:

Ծրագրի գործունեության ժամանակահատվածն է 2022 թ. մարտի 1-ից մինչև 2025 թ. փետրվար: Ծրագրի բյուջեն 269 000 եվրո է, որից ՀԱԱՀ մասնաբաժինը կազմում է 177 000 եվրո:

Visegrad+ «ՓԱՓՈՒԿ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ. V4 ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ»

Ծրագիրը համաֆինանսավորվում է Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի և Սլովակիայի կառավարությունների կողմից՝ Վիշեգրադի միջազգային հիմնադրամի Վիշեգրադի դրամաշնորհների միջոցով: Գլխավոր համակարգողը Հայաստանի ազգային ագրարային համալսարանն է: Ծրագիրը կիրականացվի Հունգարիայի գյուղատնտեսական և կենսագիտական (ՀԳԿ), Նիտրայում Սլովակիայի գյուղատնտեսական (ՍԳՀՆ) և Հարավային Բոհեմիայի համալսարանների (ՀԲՀ) աջակցությամբ:

Այս նախագծի հիմնական նպատակն է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ընթացքում տարբեր մոդուլների դասավանդմամբ փափուկ հմտությունների զարգացման և կատարելագործման միջոցով բարձրացնել աշխատաշուկայում ուսանողների և առկա մասնագետների աշխատունակությունը:

Ծրագրի շրջանակում ՀԱԱՀ-ը կստեղծի Փափուկ հմտությունների զարգացման կենտրոն (ՓՀՀ), որտեղ ուսանողները և գյուղատնտեսության ոլորտի մասնագետները ՀԱԱՀ-ի կազմակերպած դասընթացների ընթացքում կստանան փափուկ հմտությունների անհրաժեշտ կարողություններ: Ծրագրի իրականացման համար կօգտագործվի V4 գործընկեր համալսարանների ուսուցման ոլորտում ունեցած երկարամյա փորձը:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 01/01/2022–30/06/2023:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 24 015 եվրո:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՈՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՆ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ (SMARTI)

Ծրագրի նպատակն է մշակել թափանցիկ, ազգային և միջազգային կրթական ստանդարտներ, համադրելի ուսումնառության վերջնարդյունքներ և դասավանդման ստանդարտներ՝ Բոլոնիայի չափանիշներին համապատասխան, բարձրացնել ակադեմիական բովանդակության, անձնակազմի և ուսանողների որակը դասախոսների վերապատրաստման կայուն կրթական ծրագրերի մշակման միջոցով, աջակցել ծրագրի մասնակից ԵՄ, հայկական և ռուսական հաստատությունների միջազգայնացմանը, անձնակազմի և ուսանողների շարժունությանն ու փոխանակմանը:

SMARTI-ի հատուկ նպատակն է խթանել գործընկեր երկրների կրթության գերազանցությունը՝ զարգացնելով և ներդնելով համապարփակ մանկավարժական անգլերենի մոդուլներ որպես EMI կրթական ծրագրեր հայ և ռուս դասավանդողների համար՝ օգտագործելով (ECTS)/Թյունինգ մոդուլի դիզայնը՝ ակադեմիական

բովանդակությունը Հայաստանում և Ռուսաստանում անգլերենով դասավանդելու համար, որն էլ մշակվելու է EMI կենտրոնների ցանցի միջոցով:

Ծրագրի իրականացման ժամկետը՝ 2021 թ. մարտից 2024 թ. դեկտեմբեր:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 936 824 եվրո, ՀԱԱՀ մասնաբաժինը՝ 49 544 եվրո:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՂՐՂՋՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ (GEOTAK)

Ծրագրի նպատակն է զարգացնել հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերը Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում և ամրապնդել հետազոտական և նորարարական կապերը Հայաստանի Հանրապետության և Ղրղզստանի Բարձրագույն ուսումնական հաստատությունների, արդյունաբերության և վարչարարական համակարգերի միջև:

Ծրագրի շրջանակում համագործակցող երկրների միջև կստեղծվեն հետազոտական հանգույցներ GIT ոլորտում՝ համատեղ նորարարական նախագծերն ու հետազոտական աշխատանքները խթանելու և ներդաշնակեցնելու համար, կբարելավվեն GIT հետազոտական լաբորատորիաները, կվերապատրաստվեն դասավանդող անձնակազմերը, կստեղծվեն միջառարկայական հետբուհական ծրագրեր (դասընթացներ և համատեղ ասպիրանտական ծրագրեր), որոնք բարձրացնում են GIT-ի ներուժը տարբեր ոլորտներում ու աստիճաններում, կենտրոնացնում հետազոտական արդյունքները ժամանակակից խնդիրների վրա՝ տարածաշրջանային և գլոբալ մասշտաբներով:

Ծրագրի իրականացման ժամկետ՝ 2021 թ. հունվարից 2023 թ. դեկտեմբեր:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 873 769 եվրո, ՀԱԱՀ մասնաբաժինը՝ 73 520 եվրո:

«ԳԻՆՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ ԴՈՒԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ»



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:

giz Geizetz-Kooperation
Für Internationalität
Cooperation - nicht 02 53 4

«Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ և Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ) միջև կնքված պայմանագրի շրջանակներում իրականացվել է Գինու ոլորտում դուալ ՄԿՈՒ ծրագրի մշակում:

Ծրագրի շրջանակներում՝

- համագործակցություն է հաստատվել գինեգործական ընկերությունների հետ,
- իրականացվել է գինեգործական բնագավառի մասնավոր ընկերությունների կարիքների գնահատում,

• վերանայվել են ուսումնական պլանի կառուցվածքը և դրա տարրերը, վերանայվել և մշակվել են մոդուլային ծրագրեր: Հիմք ընդունելով գինեգործական բնագավառի մասնավոր ընկերությունների կարիքները առաջարկվել է նոր չափորոշիչ: Ծրագրի աշխատանքային թիմը իրականացրել է գործատուների միջոցով զբաղմունքի նկարագրի մշակում, որտեղ շրջանավարտը՝ ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչներին համապատասխան, նկարագրվում է որպես կրտսեր գինեգործ: Միջազգային և տեղացի փորձագետներն իրականացրել են ծրագրային բենչմարկ միջազգային ծրագրերի հետ: Միջազգային փորձի ուսումնասիրությունները և գործատուների կողմից ներկայացված զբաղմունքի նկարագիրն ակնհայտ դարձրեց այն փաստը, որ նոր մշակված միջին մասնագիտական ծրագիրը, որը բխում է այսօրվա գործատուի պահանջներից, չի համապատասխանում գործող «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչն ու այն իր բովանդակությամբ և տրամաբանությամբ համընկնում է միջազգային շուկայում պահանջված և ընդունված «Գինեգործություն (խաղողագործություն և էնոլոգիա)» (Winemaking (Viticulture and Enology))» մասնագիտությանը: Այդ իսկ պատճառով ՀՀ ԿԳՄՍ ներկայացվել է առաջարկ մասնագիտությունների ցանկում 0728 Արտադրությանը և վերամշակմանը առնչվող այլ միջոլորտային մասնագիտությունների և որակավորումների ցանկում ավելացնել նոր միջոլորտային մասնագիտություն՝ «Գինեգործություն (խաղողագործություն և էնոլոգիա)», կրտսեր գինեգործի որակավորմամբ, և մշակել ու հաստատել նոր չափորոշիչ:

• Մշակված մոդուլային ծրագրերի հիման վրա մասնավոր ընկերություններից ներգրավվող ՄԿՈԽ դասախոսների և գործնական պարապմունքները վարողների կարիքների գնահատում:

• Կատարվել է ՄԿՈԽ դասախոսների և գործնական պարապմունքները վարողների կարողությունների զարգացում:

Ծրագրի տևողությունը՝ 09.12.2020 թ. մինչև 30.07.2021 թ.:

Ծրագրի բյուջեն՝ 16 794 992 ՀՀ դրամ:

«ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»

2021 թ. դեկտեմբերի 1-ից ՀԱԱՀ-ում մեկնարկել է ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU GAIA) ծրագրի կողմից ֆինանսավորվող «Սերմերի և տնկանյութի մասնագիտական հավաստագրողների և փորձարկողների վերապատրաստման ծրագրի մշակում և իրականացում» 9-ամսյա ծրագիրը:

Ծրագրի նպատակն է վերապատրաստել մասնագետներ պտղահատապտղատու մշակաբույսերի համարժեք մեթոդներով մայրուտների ընտրություն իրականացնելու և տնկանյութի որակական գնահատում իրականացնելու համար, ինչպես նաև վերապատրաստել պտղահատապտղատու մշակաբույսերի տնկանյութի հավաստագրող մասնագետներ, որոնք տնկանյութի արտադրության ողջ սխեմայում կկարողանան տնկարանի բոլոր բաժիններում հետևել տվյալ տնկանյութի

արտադրության ամբողջ գործընթացին և դրա համապատասխանելիությանը օրենքով սահմանված կարգով ներկայացվող պահանջներին:

Ծրագրի շրջանակում կիրականացվի Սերմերի և տնկանյութի մասնագիտական հավաստագրողների և փորձարկողների վերապատրաստման դասընթաց Պտղահատապտղային մշակաբույսերի փորձորոշման առանձնահատկությունները, Պտղահատապտղային տնկարանների կառուցվածքն ու կազմակերպումը, Պատվաստակալների և տնկանյութի աճեցման տեխնոլոգիան, Սերմերի և տնկանյութի վերաբերյալ ՀՀ օրենքի նախագծի ներկայացում, Տնկանյութի ապրանքային որակ թեմաներով:

Դասընթացը կներառի տեսական և լաբորատոր դասաժամեր, ինչպես նաև գործնական այցեր համապատասխան տնկարաններ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 22 320 000 դրամ:

Ծրագրի տևողությունը՝ մինչև 2022 թ. սեպտեմբեր:

«ԳՈՄԱՂԻ ԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ»

2021 թ. մեկնարկել և ընթացքի մեջ է «Գոմաղբի և կաթնամթերքի թափոնների կայուն կառավարման պիլոտային ծրագիրը Գեղարքունիքի մարզում», որը ուղղված է Սևանա լճի կենսածին ծանրաբեռնվածության թուլացմանը:

Ծրագիրը հետազոտական բնույթի է և իրականացվում է ՀԱԱՀ մասնագիտական թիմի միջոցով՝ GIZ-ի ֆինանսական աջակցությամբ: Ընտրված են թիրախային 19 համայնքներ Սևանա լճի հարակից տարածքներում, որոնք համարվում են լճի հիմնական կենսածին ծանրաբեռնվածություն ստեղծողները: Ընտրված համայնքների ուսումնասիրության արդյունքում, առկա միջազգային և տեղական փորձի վերլուծության և դրանց կիրառելիության գնահատման արդյունքում ծրագիրը տալու է գոմաղբի և գոմաղբահեղուկի վնասազերծման և մշակման ուղիներ, որոնք կկանխարգելեն կենսածին տարրերի հոսքը դեպի Սևանա լիճ՝ լուծելով էկոլոգիական այնպիսի խնդիր, ինչպիսին լճի էվորոֆացումն է:

Ծրագրի տևողությունը՝ մինչև 2022 թ. ապրիլ:

Ծրագրի բյուջեն՝ 24 981 000 դրամ:

ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

2021 թվականին, չնայած տարատեսակ խանգարող հանգամանքների առկայությանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում հնարավոր եղավ կատարել ագրոտեխնոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի փոխակերպվելուն նպաստող ուսումնառական հանձնարարությունների ստեղծման ու վերակառուցման լայնածավալ աշխատանքներ:

ՀԱԱՀ-ի և Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների (FAST) հիմնադրամի համագործակցությամբ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ ՀԱԱՀ 1-ին մասնաշենքում նորոգվել են լաբորատոր տարածքներ՝ հարակից միջանցքներով,

աշխատասենյակներով, սանհանգույցներով, աստիճանավանդակներով, ավարտին են մոտենում անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով և գույքով ապահովված կենսագիտության ինկուբատոր-բաց լաբորատորիայի ստեղծման աշխատանքները: 2-րդ մասնաշենքում վերանորոգվել է գյուղատնտեսական անօդաչու թռչող սարքերի լաբորատորիայի համար նախատեսված տարածք, որտեղ ցուցադրվելու են GEO TAK և «ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագրերից որպես նվիրատվություն ստացված գյուղատնտեսական անօդաչու թռչող սարքերը՝ դրոնները:

Նույն EU-GAIA ծրագրի օժանդակությամբ լաբորատոր սարքավորումներ ու գույք են ստացել նաև ՀԱԱՀ Վանաձորի և Շիրակի մասնաճյուղերը:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող «AGRI CAMP» ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ «Զարթոնք» հանգստյան տան ամբողջ 3-րդ հարկը, 2-րդ հարկի հանդիպումների սրահը, 1-ին հարկի ճաշարանը՝ հարակից ճեմասրահով և սանհանգույցներով լիովին վերանորոգվել ու կահավորվել են, իսկ նույն հանգստյան տան 4-րդ և 5-րդ հարկերը ենթարկվել են ձևափոխության ու մասնակի վերանորոգման (ավարտուն տեսքի կբերվեն՝ կհարդարվեն, կսալիկապատվեն և այլն, անհրաժեշտ միջոցների առկայության դեպքում):

ՀԱԱՀ վարժարանը համալրվեց քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի և համակարգչային դասասենյակներով, որոնք վերագինվեցին ԱՀԿԿ հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության աջակցությամբ գործող «Ռեզնավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության և ՀԱԱՀ ակտիվ համագործակցության շնորհիվ ՀԱԱՀ 1-ին մասնաշենքում հիմնվել է հացի, հրուշակեղենի և շոկոլադագործության ուսումնական լաբորատորիա, որտեղ, բացի համալսարանի ուսումնական պարապմունքներից, 2021 թվականի ընթացքում անցկացվել են նաև վճարովի կարճաժամկետ դասընթացներ. 2021 թ.-ի դեկտեմբերի դրությամբ մասնակիցների թիվը կազմել է 24:

«Ռեզնավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ գործակցության լավագույն արդյունք է նաև «Բալահովիտ» ՈՒՓՏ-ում ստեղծված Կաթնամթերքի վարպետաց դպրոցը, որի վերանորոգման ու կահավորման աշխատանքների մասն էլ իրականացվել է բարերարներ Ջուդի Սարյանի և «Սարյան Զառուկյան» բարեգործական կազմակերպության տրամադրած միջոցներով: Արդյունքում ստեղծվել է բարեկարգ և պատշաճ կահավորված տարածք, որտեղ արդեն գիշերակացով կարճաժամկետ դասընթացների 2 փուլ է անցկացվել: Այդ դասընթացների 28 մասնակիցներից 20-ը Արցախից էին:

«Բալահովիտ» ՈՒՓՏ-ում վերանորոգվել է նաև ոչխարանոց՝ հատուկ «ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» ծրագրի օժանդակությամբ ձեռք բերված ֆրանսիական բլանշ ցեղի տոհմային ոչխարներ պահելու համար:

Վերանորոգվել են ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան քոլեջի՝ տանիքի քամու հետևանքով քանդված հատվածը և ՀԱԱՀ «Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում ուսումնափորձարարական լաբորատորիայի տարածքը : Մասնաճյուղը 2021 թվականին համալրվել է նաև Կաթի վերամշակման ուսումնական արտադրամաս-լաբորատորիայով, որի կաթի և

կաթնամթերքի տեխնոլոգիայի լաբորատոր սարքավորումները տրամադրվել են «Մարդը Կարիքի Մեջ (People in Need)» ԲՀԿ հայաստանյան ներկայացուցչության կողմից:

«Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում բացվել է նաև Գիտելիքի նորարարական հաբ՝ Կանաչ արահետ ՀԿ-ի հետ գործակցությամբ և Հողի անալիզի լաբորատորիա «ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» ծրագրի օժանդակությամբ: Կանաչ արահետ ՀԿ-ի հետ գործակցությամբ Գիտելիքի նորարարական հաբ բացվել է նաև ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղում:

Գյուղական նորարարական գիտելիքի հաբերի նպատակն է կարողությունների զարգացման միջոցով աջակցել երիտասարդների զբաղվածությանը և սոցիալական ձեռներեցության և կանաչ նորարարության համար ստեղծել նպաստավոր էկոհամակարգեր:

Վանաձորի մասնաճյուղի ենթակառույցներին 2021-ին ավելացել է ևս մեկը՝ նոր ջերմատունը:

ՄԱԶԾ օժանդակությամբ ՀԱԱՀ Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղում իրականացվել են թանգարանի վերանորոգման աշխատանքներ:

Ընթացիկ տարում ՀԱԱՀ անհատույց օգտագործման իրավունքով ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեից անհատույց օգտագործման իրավունքով ձեռք է բերել երեք տրանսպորտային միջոց, որոնք հնարավորություն են տվել կրճատել ՀԱԱՀ ավտոպարկի շահագործման ծախսերը:

Անհատ բարերարների ներդրումներով «բաց տարածք» ոճով վերանորոգված նախկին մամուլի սենյակը լիովին կահավորվել է և ծառայել համալսարանի ուսանողությանն ու դասախոսական կազմին՝ բազմապիսի քննարկումներ, շնորհանդեսներ, սեմինարներ և այլ միջոցառումներ իրականացնելու համար:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի և «Փառնագետն ընտանիք» հիմնադրամի աջակցությամբ նմանատիպ մեկ այլ սենյակ էլ վերանորոգվել և լիովին կահավորվել է՝ վերածվելով ժամանակակից ընթերցասրահի:

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի Արեշում գտնվող մասնաշենքերից մեկում արդեն ավարտվել են Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ ՆՄՀ-ից ակնկալվող դրամաշնորհային ծրագրով **Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն (ԱԿԳԿ)**-ի ստեղծման համար սենյակների վերանորոգման աշխատանքները: Կենտրոնի ստեղծումը, համապատասխանելով արդի պահանջներին, կխթանի այս ոլորտի կրթական և գիտական գործընթացների բարեփոխումը և արդիականացումը, կնպաստի ոլորտի մրցունակ մասնագետների պատրաստմանն ու բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդմանը: 2022 թ.-ի գարնանը կիրականացվի կենտրոնի պաշտոնական բացումը:

Ճապոնիայի կառավարության, Հայ օգնության ֆոնդի, ՊՀԾ-ի և GIZ-ի աջակցությամբ 1,5 հա տարածքի վրա մեկնարկվել է **«Խելացի գյուղատնտեսության զարգացման կենտրոնի հիմնադրում ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում»** ծրագիրը: Ծրագրի շրջանակում կիրականացվեն հետևյալ ենթաձրագրերը:

1. Ճապոնական կառավարության ֆինանսավորմամբ «Գյուղատնտեսական մեքենասարքավորումների ուսումնական և վերապատրաստման կենտրոնի ստեղծում» (բյուջեն՝ 37 084 630 ՀՀ դրամ):

Նախատեսվում են համալսարանի ուսանողների գործնական հմտությունների զարգացում և գյուղմեքենաների ու սարքավորումների սպասարկման նոր մասնագետների պատրաստում: Ծրագրի հիմնական նպատակներից են նաև Սյունիքի և մերձակա համայնքների գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ զբաղվող ֆերմերների վերապատրաստումը, նոր տեխնոլոգիաների տարածումը, ագրոբիզնեսի և բնակչության համար անհրաժեշտ գյուղատնտեսական ծառայությունների մատուցումը:

2. Հայ օգնության ֆոնդի ֆինանսավորմամբ «խելացի» անասնագոմի և ջերմատան կառուցում ու սարքավորումներով հագեցում:

Նախատեսվում է 10-15 գլուխ կովի համար կառուցել «խելացի» անասնագոմ : «խելացի» անասնագոմը կառուցվում է ջերմոցային կառույցների հիմքի վրա, երկու պատի և պոլիէթիլենային ծածկի միջոցով, ինչը նորարարական մեթոդ է Հայաստանում: Հաշվի են առնվում կովերի հարմարավետությունը երաշխավորող բոլոր պայմանները (մաքուր օդ, ջուր, լուսավորություն, առաստաղի բարձրություն), որոնք կարող են նպաստել կաթնատվության բարձրացմանը : Ներդրված հովազման, օդափոխության, լուսավորության և կենդանիների խնամքը հեշտացնող միջոցները թույլ են տալիս նվազեցնել ձեռքի աշխատանքը: Արդյունքում ապահովվում են կովերի խելամիտ պահվածքն ու հարմարավետությունը, ինչպես նաև իրականացվում է կերակրման և գենետիկ բարելավման ճիշտ կառավարում: Անասնագոմին կից նախատեսվում է կառուցել նաև ասեպտիկ հոր:

3. GIZ-ի ֆինանսավորմամբ (10 705 648 ՀՀ դրամ) հիդրոպոնիկ կերատեսակների արտադրության շենքի և դասընթացների կազմակերպման լսարանի կառուցում: Կերատեսակների հիդրոպոնիկ արտադրատարածքը լինելու է «խելացի» անասնագոմին կից և լուծելու է կենդանիների կերակրման հարցը: Կանաչ կերը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել կերակրման ծախսերը, առավելագույնի՝ մսի և կաթի արտադրությունը:

Դասընթացների համար նախատեսված լսարանում հնարավորություն կընձեռվի ուսանողներին և բոլոր հետաքրքրված անձանց (այդ թվում՝ Ղարաբաղից տարհանված քաղաքացիներին) կարճաժամկետ դասընթացների միջոցով ստանալ գյուղատնտեսության և ագրոբիզնեսի բնագավառների անհրաժեշտ գիտելիքներ և գործնական հմտություններ: Դասընթացները նախապատրաստվել և իրականացվելու են ՀԱԱՀ մայր բուհի և Սիսիանի մասնաճյուղի դասախոսական կազմի միջոցով:

Ընդհանուր առմամբ, 2021 թվականի ընթացքում ՀԱԱՀ-ում կատարվել են շուրջ 170 մլն դրամի շինվերանորոգման, բարեկարգման ու նյութատեխնիկական բազայի համալրման աշխատանքներ, **որի գերակշիռ մասը՝ աջակիցների և գործընկերների տրամադրած միջոցներով:**

ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի հյուսիսարևելյան մասում տեղակայված «Բալահովիտ» ոսումնափորձնական տնտեսության հիմնական նպատակն ուսանողների համար գիտական, ուսումնական և գործնական-արտադրական բազա ծառայելն է:

«Բալահովիտ» ՈՒՓՏ-ն Ելիջա հանդամասում ներկայումս ունի 1075,8 հա հողատարածք, որի 102 հա տարածքում 2021 թ. կատարվել են խոտհնձի և խոտհավաքի աշխատանքներ, կուտակվել է 180,6 տ խոտ:

2021 թ. հունվարի 1-ի դրությամբ «Բալահովիտ» ՈՒՓՏ-ի կաթնասնասնապահական ֆերմայի խոշոր եղջերավոր կենդանիների և մատղաշի գլխաքանակը կազմել է 144 գլուխ, 31.12.2021 թ. դրությամբ՝ 38 գլուխ. գլխաքանակի նվազման պատճառը տնտեսության օպտիմալացման նպատակով խոտանված կենդանիների վաճառքն է: Մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 192 գլուխ, դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 71 գլուխ. 23 գլուխը ֆրանսիական բլանշ ցեղի կենդանիներն են:

2021 թվականին արտադրվել է 32,6 տ կաթ, իրացվել՝ 23,7 տ: Ստացվել է 560 կգ ոչխարի և 170 կգ գառան բուրդ: Ելիջա հանդամասից ստացվել է 6 տ կորնգանի սերմնադաշտի ծղոտ և ամբողջությամբ վաճառվել, ինչպես նաև 2,4 տ կորնգանի բունկերային հատիկ: Տնտեսությանը հարակից վարելահողից ստացվել են 4,2 տ աշնանացան ցորեն և 3,8 տ ցորենի ծղոտ, որից վաճառվել է 3,5 տ-ն:

2021-ին տնտեսությունում ԱԿԲԱ ֆեդերացիայի աջակցությամբ կառուցվել է հիդրոպոնիկ կանաչ կերի արտադրամաս: Զուգահեռաբար «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի «Հմտությունների և գիտելիքի զարգացում» ծրագրի շրջանակում շահագործման է հանձնվել Կաթնամթերքի վարպետաց դպրոցը, որի նպատակն է փորձուսուցման միջոցով ՀԱԱՀ-ի և գործընկեր համալսարանների ուսանողներին փոխանցել արդիական գործնական մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ:

Բալահովիտի ՈՒՓՏ-ում կաթնամթերքի վերամշակման գործող արտադրամասի և նորակառույց ուսանողական կացարանի բացման ու շահագործման հետ մեկտեղ վերակառուցվել է ոչխարանոց, որը նախատեսված է Ֆրանսիայից ներկրված մսատու բլանշ ցեղի ոչխարների բուծման համար: Նոր «խելացի» անասնաշենքերի կառուցման և բարձրմթերատու տավարի եվրոպական ցեղեր բուծելու նպատակով կովկասյան գորշ ցեղը կփոխարինվի, կիսաքանդ անասնաշենքերը կապամոն-տաժվեն, իսկ կառուցվելիք «խելացի» անասնաշենքի շահագործմամբ կամբողջանա ժամանակակից արտադրության շրջափուլը և ուսանողները կստանան աշխատաշուկայում պահանջված ամենաարդիական մասնագիտական գիտելիքներ և գործնական հմտություններ:

Նախատեսվում է նաև ապագայում ունենալ համակցված կերատեսակների, գոմադրից ստացվող պարարտանյութի և վառելանյութի արտադրամասեր: Որպես արդյունք «Բալահովիտ» ՈՒՓՏ-ում կունենանք անթափոն արտադրություն:

ՈՍԿԵՀԱՏԻ ՌԻՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի ընթացքում «Ոսկեհատ» ՌԻՓՏ-ում մշակվել է 4 հա երիտասարդ (տնկված 2017-ին) և 8 հա բերքատու (տնկված 2015-ին) խաղողի այգիները: 8 հա բերքատու խաղողի այգուց հավաքվել է 78480 կգ բարձրորակ խաղող, որը վաճառվել է շուկայականից բարձր գներով: Հատկանշական է, որ վերջին երեք տարիների կտրվածքով խաղողի այգու բերքատվությունն աճել է ավելի քան 45 %-ով. պահպանվել է բերքի բարձր որակը (աղ. 2):

Աղյուսակ 2.

2015 թվականին հիմնված 8 Հա խաղողի բերքատու այգու բերքահավաքներ 2019-2021թթ												
ԳՈՐԾԱՐՔԻ ՏԵՍԱԿԸ / ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ	ԲԵՐՔԱՀԱՎԱՔ 2019				ԲԵՐՔԱՀԱՎԱՔ 2020				ԲԵՐՔԱՀԱՎԱՔ 2021			
	ՀԱՎԱՔՎԱԾ ԽԱՂՈՂԻ ՍՈՐՏԵՐԸ ԵՎ ՔԱՆԱԿՆԵՐԸ (ԿԳ)		ԸՆԴԱՄԵՆԸ (ԿԳ)		ՀԱՎԱՔՎԱԾ ԽԱՂՈՂԻ ՍՈՐՏԵՐԸ ԵՎ ՔԱՆԱԿՆԵՐԸ (ԿԳ)		ԸՆԴԱՄԵՆԸ (ԿԳ)		ՀԱՎԱՔՎԱԾ ԽԱՂՈՂԻ ՍՈՐՏԵՐԸ ԵՎ ՔԱՆԱԿՆԵՐԸ (ԿԳ)		ԸՆԴԱՄԵՆԸ (ԿԳ)	
	ԿԱՆԳՈՒՆ	ՉԱՐԵՆՑԻ	ՀԱՂԹԱՆԱԿ		ԿԱՆԳՈՒՆ	ՉԱՐԵՆՑԻ	ՀԱՂԹԱՆԱԿ		ԿԱՆԳՈՒՆ	ՉԱՐԵՆՑԻ	ՀԱՂԹԱՆԱԿ	
Վաճառք. «Ոռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ	14210	9450	0	23660	10300	15100	0	25400	41430	14700	17350	73480
Վաճառք. «ԶԻԷՆ Վայլերի» ՍՊԸ	0	0	8500	8500	4040	0	3855	7895	0	0	0	0
Վաճառք. «Վայն Ֆորմուլա» ՍՊԸ	10200	0	2000	12200	10100	0	5000	15100	0	0	0	0
Վաճառք. ՄՄ	0	0	0	0	0	0	0	0	0	2500	2500	5000
Մթերում. «Ոսկեհատ» ՌԻՓՏ գինու ուսումնադիտական կենտրոն	0	5000	4500	9500	4500	0	13225	17725	0	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ (ԿԳ)	24410	14450	15000	53860	28940	15100	22080	66120	41430	17200	19850	78480
								↑22.7%				↑18.7%
								↑45.7%				

2021 թվականի ընթացքում Արգենտինայի դեսպանատան և AGBU-ի հետ համագործակցության շրջանակում «Ոսկեհատ» ՌԻՓՏ-ում 0,5 հա հողատարածքի համար հիմնվել է հակակարկտային ցանցային համակարգ (բոլոր ենթակառուցվածքներով) և կատարելագործվել է նախորդ տարում հիմնված ոռոգման կաթիլային համակարգը:

Շարունակվել է ՖՐՈՒՏԵՆԻԱ (FRUITENIA) ծրագրի հետ համագործակցությունը, որի շրջանակում «Ոսկեհատ» ՌԻՓՏ-ում հիմնվել և մշակվել է նորագույն սորտերով և ենթակառուցվածքներով 1,5 հա պտղատու ինտենսիվ այգի: Այն հնարավորություն կընձեռի ուսանողներին և մասնավոր հատվածին ծանոթանալ պտղաբուծության համեմատաբար նոր տեխնոլոգիաներին:

2021 թվականի ամռանը «Ոսկեհատ» ՌԻՓՏ-ում առաջին անգամ իրականացվել է 10 հա բարձրորակ սերմնացու ցորենի բերքահավաք: Ստացված բերքը վաճառվել է:

Շարունակվել է համագործակցությունը տարբեր կրթական հաստատությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ, կազմակերպվել են բազմաթիվ ճանաչողական այցեր, վերապատրաստումներ, պրակտիկաներ, տնտեսությունն ունեցել է 200-ից ավելի այցելուներ:

ՈՍԿԵՀԱՏԻ ԳԻՆՈՒ ՌԻՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2021 թվականին Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնը մթերել է 24830 կգ խաղող՝ համաձայն նախօրոք կնքված վճարովի գինեգործական ծառայությունների մատուցման պայմանագրերի:

Տարվա ընթացքում կնքվել են ռեկորդային թվով վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրեր տարբեր փոքր և միջին գինեգործական կազմակերպությունների հետ. իրականացվել են գինենյութերի հնացման, պահատվության, մշակման և շաղցման ծառայություններ:

2021 թվականի ընթացքում շարունակվել է 2019-ի սեպտեմբերից սկսված «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության» (GIZ) հետ համագործակցության շրջանակում իրականացվող սիրիահայերի ինտեգրման ծրագիրը:

Տարվա ընթացքում կենտրոնը «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության» (GIZ) կողմից ստացել և ներդրել է գերժամանակակից, գինենյութերի ցրտով մշակման համար նախատեսված բազմաֆունկցիոնալ համակարգ՝ դրանով էլ ավելի հագեցնելով կենտրոնի տեխնոլոգիական բազան:

2021-ին կենտրոնը շարունակել է սերտորեն համագործակցել «Ի ՎԻ ԷՆ» գինու ակադեմիայի հետ՝ տրամադրելով արտադրական տարածք և պրակտիկաների իրականացման հնարավորություն:

Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնում իրականացվել են մի շարք գիտափորձեր: Ներկայումս էլ ագրարային համալսարանի երկու մագիստրանտներ իրենց հետազոտություններն իրականացնում են կենտրոնում: Իրականացված հետազոտությունների արդյունքների մի մասը տպագրվել է ՀԱԱՀ «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» պարբերականում, իսկ մյուս մասը շուտով կտպագրվի միջազգային գիտական պարբերականներում:

Կենտրոնը համագործակցում է մի շարք կրթական հաստատությունների հետ (Երևանի հայ-հունական պետական քոլեջ, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր և այլն), որոնց ուսանողները և դասախոսները 2021 թվականի ընթացքում բազմաթիվ անգամ կենտրոնում մասնակցել են արտադրական պրակտիկաների՝ փորձի փոխանակման և արդի գիտելիքների ձեռքբերման նպատակով:

2021 թվականին շարունակվել են կենտրոնի կողմից արտադրված «ՍԵՐՈՒՆԴ» կարմիր անապակ և «ՍԵՐՈՒՆԴ» հնացված կարմիր անապակ գինիների վաճառքը և առաջխաղացումը տեղական շուկայում: Գինիների բարձր որակը հաստատվել է տարբեր ցուցադրությունների և էքսպոնների ընթացքում:

ԱԿՈՒՆՔ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ակունքի օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձարարական կենտրոնում շարունակվել են ակտիվ գյուղատնտեսական աշխատանքները:

Աշխատանքներ են տարվել ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU GAIA) ծրագրի հետ, որպեսզի վերջինիսաջակցությամբ տնտեսությունում հիմնվի ջերմատուն, 0,5 հա պտղատու նորատունկ այգում անցկացվեն կարկտապաշտպան ցանց, կաթիլային ոռոգման համակարգ: Տնտեսությունում կտեղակայվի նաև եղանակային կայան: 2022-ին ավելի հագեցած

ենթակառուցվածքներով տնտեսությունը կծառայի համալսարանի ուսանողներին : Չնայած այժմ արդեն ՀԱԱՀ որոշ մագիստրանտներ իրենց թեզերը գրելու համար անհրաժեշտ հետազոտությունները կատարում են Ակունքում:

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱԱՀ Որակի գնահատման և ապահովման կենտրոնը որոշումների կայացման և ռազմավարական նպատակներին հասնելու համար 2021 թ. աշխատանքներ է տարել բուհի կառավարման որակի գնահատման և ՄԿԾ-ների որակի ապահովման ու գնահատման ուղղություններով:

ՈԳԱ կենտրոնը բուհի կառավարման որակի ապահովման և գնահատման նպատակով՝

- Լրամշակել է ՀԱԱՀ 2020-2024 թթ. ռազմավարական պլանի ԳԱՑ-երի եռաստիճան ամբողջական փաթեթը՝ ըստ ՌՊ նպատակների, խնդիրների և գործողությունների:
- Իրականացրել է ՀԱԱՀ 2020-2024 թթ. ռազմավարական պլանի և ՀԱԱՀ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրի կատարողականի մշտադիտարկում և հաշվետվություն ներկայացվել ռեկտորատի նիստին:
- Գնահատել է համալսարանում ընդունվող կանոնակարգերի նախագծերը և առաջարկություններ ներկայացվել դրանց բարելավման ուղղությամբ:
- Մշակել է ՈԳԱ կենտրոնի աշխատակիցների պաշտոնների անձնագրերը:
- Սահմանել է Ուսումնամեթոդական կենտրոնի և ՄՌԿ բաժնի ինքնավերլուծության չափանիշներն ու չափորոշիչները:
- Կազմել է ՀԱԱՀ դասախոսների կարիքների գնահատման հարցաշարը:

ՄԿԾ-ների որակի ապահովման նպատակով ՈԳԱ կենտրոնը՝

- ՌՊ-ի համաձայն՝ վերանայել է կրթական ծրագրերի ձևաչափը, արտոնման և մշակման, հաստատման մշտադիտարկման ու վերանայման փաստաթղթային հենքը:
- ՄԿԾ-ները ծրագրային հավատարմագրման նախապատրաստելու նպատակով հանդես է եկել որպես հետևյալ երկու գործընթացների համակարգող.
 1. Հավատարմագրման չափանիշներին համապատասխան պիլոտային ինքնավերլուծությունների իրականացում:
 2. ՄԿԾ-ների մշակում կամ բարելավում:
- ՄԿԾ-ների մշակմանը նախորդել է ՀՀ կառավարության չափանիշներով և չափորոշիչներով պիլոտային ծրագրային ինքնավերլուծությունը: ՈԳԱ կենտրոնը ստացել է 7 ինքնավերլուծություն (2021 թ. օպերացիոն պլանով նախատեսված էր առնվազն 4-ը):
- Մեկնարկել է 16 ՄԿԾ-ների բարելավման կամ մշակման գործընթաց, որից 4-ը՝ մագիստրոսական, 12-ը՝ բակալավրիատի: Հանդես է եկել որպես այդ աշխատանքը համակարգող և խորհրդատվություն ապահովող կենտրոն: Ավարտված է 2-ական մագիստրոսական և բակալավրիատի ծրագիր: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի շրջանակում բենչմարքինգ է կատարվել 3-10

նմանատիպ ծրագրերի հետ:Երկու ՄԿԾ-ներ վերանայվել են միջազգային ստանդարտներին համապատասխան:

- Կենտրոնի մշակված ծրագրով անցկացվել է ՀԱԱՀ 68 աշխատակիցների վերապատրաստում՝ «Ուսանողի գնահատում» թեմայով:
- Կենտրոնի փորձագետների մասնակցությամբ մշակվել և ներդրվել է միջին մասնագիտական 1 դուալ ծրագիր, որը պիլոտային չափորոշիչ է դարձել «Գինեգործություն և խաղողագործություն» ՄԿԾ-ի համար:
- 2021 թ. փորձարկվել է մշտադիտարկման նոր մեխանիզմ՝ դասալսումների մշտադիտարկումը: Դասալսումները ցույց տվեցին, որ դասավանդման ժամանակակից ուսանողակենտրոն մեթոդներին զուգահեռ գործում են նաև դասախոսակենտրոն մեթոդներ: Դրա հետ մեկտեղ դասավանդման ընթացքում գրանցվեց ուսուցման ժամանակակից նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության դրական դինամիկա, ինչը նախատեսված էր ՌԴ-ով:

ՈԳԱ կենտրոնի կողմից կատարվել են հետևյալ հետազոտությունները.

- Աշխատաշուկայի՝ ճարտարագիտական մասնագիտությունների նկատմամբ ունեցած պահանջարկի ուսումնասիրություն, որի ընթացքում հավաքագրվել է տեղեկատվություն մասնագիտական հինգ ոլորտներից (ջրային ռեսուրսների, էներգետիկ ռեսուրսների, հողային, հանրային կառավարման ոլորտներ և կենսագործունեության անվտանգություն):
- Օտար լեզվի ուսումնառության պահանջարկի ուսումնասիրություն դասախոսների և ուսանողների շրջանում:
- ՀԱԱՀ դասախոսների կարիքների և գիտական-մասնագիտական ակտիվության գնահատում:
- ՀԱԱՀ ամբիոնների վարիչների ֆորմալ և ոչ ֆորմալ ծանրաբեռնվածության գործոնների ուսումնասիրություն:

Հետազոտությունների արդյունքները հիմք կծառայեն հետագա բարելավումների համար:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գիտության ոլորտի նյութական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, հետազոտությունների չկրկնվելու նպատակով ՀԱԱՀ գիտահետազոտական ոլորտում իրականացվել են կառուցվածքային բարեփոխումներ: Դրանք շարունակվելու են նաև 2022 թվականին, որի համար առկա են նախադրյալներ: 2021 թվականին 2 միավորով կրճատվել է գիտական ստորաբաժանումների թիվը, սակայն գիտական բոլոր ուղղությունները պահպանվել են:

ՀՀ պետական բյուջեից գիտական, գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորումը 2021 թվականին կրճատվել է 7 %-ով և կազմել է 219,8 մլն դրամ, սակայն նախատեսված բոլոր 10 ծրագրերը կատարվել են ամբողջությամբ:

Եթե 2020 թվականին կատարվել են պայմանագրային թեմատիկ ֆինանսավորմամբ (դրամաշնորհային ծրագիր) 11 թեմա և երիտասարդ գիտնականներին աջակցման 2 ծրագիր (46,8 մլն դրամ գումարով), ապա 2021 թվականին իրականացվել են 4 միջազգային գիտական թեմա, 2 գիտական թեմա միջազգային համաֆինան-

սավորմամբ: 2021 թվականին համալսարանը շահել է նոր դրամաշնորհային 16 ծրագիր՝ **422 մլն դրամ** ընդհանուր բյուջեով, **9 անգամ ավելի, քան 2020-ին՝**

- 1 թեմա կիրառական արդյունքի ձեռք բերման (30 մլն դրամ),
- 13 թեմա պայմանագրային թեմատիկ (դրամաշնորհային ծրագրեր՝ 6 ծրագիր 2021-2023 թթ., 7 ծրագիր 2021-2024 թթ., 226,0 մլն դրամ),
- 1 թեմա Առաջատար հետազոտությունների աջակցության ծրագրի դրամաշնորհ (156,0 մլն դրամ, 5 տարի),
- 1 թեմա Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության կողմից շնորհված (Գաղափարից դեպի բիզնես, 10 մլն դրամ):

Հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ իրականացվել և մեկնարկել են մի շարք միջազգային գիտական ծրագրեր:

Կարևոր ծրագրերից է **«Հյուսիսային Կովկասում զոոնոտիկ ինֆեկցիաների քարտեզագրում»** ծրագիրը: Իրականացվել է ԱՄՆ ռազմական սպառնալիքների կրճատման գործակալության ֆինանսական աջակցությամբ: Ծրագրին Հայաստանից բացի մասնակցել են Վրաստանը, ԱՄՆ-ն և Ֆրանսիան: Ծրագրի արդյունքների կիրառումը հնարավորություն կստեղծի նոր զոոնոտիկ հիվանդությունների կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Հաջող ընթացք է ունեցել **«Ռիզոդորված պրոբիոտիկներ ակվակուլտուրաների համար»** ծրագիրը: Իրականացվել է Ռուսաստանի Դաշնության և Ռիզբեկստանի գիտական կառույցների հետ: Ծրագրի հետազոտությունների արդյունքում առաջարկվելու են ակվակուլտուրաների պահպանության և պաշտպանության նոր միջոցներ:

Միջազգային կարևոր հետազոտություններից է **«Հացահատիկի ենթահամալիրի զարգացման հեռանկարները և արտադրության ծավալների հիմնավորումը հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների համատեքստում»** ծրագիրը, որի արդյունքները կարևոր նախադրյալ են երկրի պարենային անվտանգության խնդիրների լուծման տեսանկյունից:


2021 թվականին Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության արդյունքում համալսարանի համար ֆինանսավորման է երաշխավորվել **«Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ջերմային սթրեսի կարգավորումը ձկների և ընտանի թռչունների մոտ»** թեման, որն իրականացվելու է 5 տարվա ընթացքում և նախատեսված է համագործակցություն ԱՄՆ-ի համապատասխան գիտական կառույցների հետ: Ծրագիրն առնչվում է կլիմայի գլոբալ տաքացման հիմնախնդրին, հետազոտությունների արդյունքում նախատեսվում է առաջարկների համակարգի մշակում՝ ուղղված գյուղատնտեսական կենդանիների ջերմադիմադրողականության բարձրացմանը:

Համալսարանում ընթացքի մեջ է նաև **«Մեթանի ձեւավորումը սուլֆիդ և նիտրատ պարունակող մնացորդային միջավայրերում»** (AZ93573) դրամաշնորհային նախագիծը, որի նպատակն է հետազոտել նստվածքային միջավայրերում դիտվող մեթանառաջացնող երևույթները: Նախագծի շրջանակում համալսարանում կստեղծվի Բնապահպանական կենսաքիմիայի լաբորատորիա, որը կլրացնի համալսարանում արդեն շարք մտած արդիական ենթակառույցների ցանկը՝ նպաստելով գյուղատնտեսական ու բնապահպանական գիտության և գործնական կրթության ու վերապատրաստման նպատակների իրականացմանը: Նախագծում

ՀԱԱՀ գործընկերը Բեռլինի քաղցրահամ ջրերի էկոլոգիայի և ջրամբարային ձկնաբուծարանների Լայբնիցի ինստիտուտն է:

Միջազգային ծրագրերի իրականացման արդյունքում համալսարանը հնարավորություն է ունենում համագործակցել ոչ միայն ԱՊՀ և այլ հետխորհրդային երկրների, այլև Ճապոնիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի գիտական կենտրոնների հետ: Աշխատանքներ են տարվում Եվրոպական այլ երկրների գիտական կառույցների հետ համագործակցության ընդլայնման ուղղությամբ:


Հաշվետու ժամանակահատվածում ակտիվացել են գիտական հրապարակումները, հրապարակված գիտական հոդվածների թիվը 2021 թվականին **կազմել է 192 (33 % աճ), որից 92-ը (84 % աճ)**՝ միջազգային գիտական պարբերականներում, այդ թվում՝ 25-ը բարձր ազդեցության գործոն ունեցող պարբերականներում:



Գծապատկեր 5. Գիտական հրապարակումներ


2021 թվականին ակտիվացել է նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խթանման գործընթացը: ՀԱԱՀ գիտական խորհրդի 2021 թվականի մարտի 15-ի նիստով լրավճարների գումարի չափերը բարձրացվել են: 2021-ին ընդունվել է 111 գիտական աշխատանք և 123 հեղինակներին վճարվել է 5,4 մլն դրամ լրավճար, **որը մոտ 89 %-ով ավելի է**, քան 2020-ին 95 շահառուին 115 հոդվածի համար վճարված 2,8 մլն դրամը:

Նշված գործընթացի մասին պատկերացում են տալիս ստորև ներկայացվող տվյալները:



Գծապատկեր 6. ՊԴԱ գիտական գործունեության խրատուման պատկեր

Հիմք ընդունելով համալսարանի գիտական խորհրդի կողմից (30.08.2021 թ.) ընդունված գիտական աշխատողների որակավորման կանոնակարգի որակական և քանակական չափանիշները՝ 2021 թ. իրականացվել է գիտական աշխատողների որակավորում: Արդյունքում շուրջ 100 գիտաշխատող անցել է որակավորում, 30 գիտաշխատողի համար կատարվել է պաշտոնի իջեցում, 5-ի համար՝ բարձրացում: Ստեղծվել են 2022 թվականից համալսարանում գիտական աշխատողների վարձատրության նոր բարձրացված դրույքաչափի անցման նախադրյալներ: Գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2021 -ին շահել է 30,3 մլն դրամ՝ **6 անգամ ավելի, քան 2020-ին:**



Գծապատկեր 7. Գիտության ոլորտում նյութատեխնիկական բազայի արդիականացման ֆինանսական աջակցության պատկեր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
2021 թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համակարգում գիտահետազոտական աշխատանքները հիմնականում իրականացվել են 3 գիտական կենտրոնների, 2 գիտահետազոտական ինստիտուտների և 5 հետազոտական կենտրոնների միջոցով:

Հ/հ	Գիտական կազմակերպություններ և ստորաբաժանումներ	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը, հազ. դրամ	Հաստիքային միավորումներ	Կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը	Հրատարակված հոդվածների թիվը	Միջազգային մասնակցություն
1	2	3	4	5	6	7
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ						
1	ԱԳՐՈՎԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ	34808.4	22.25	Գիտական կենտրոնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները 1. Կենսատեխնոլոգիական մեթոդներով մշակաբույսերի բազմացման բաժին: Շարունակվել են աշխատանքները (գյուղատնտեսական, դեկորատիվ-ծաղկային, եթերայուղատու, դեղատու և մշակաբույսերի վայրի ազգակիցներ) բուսատեսակների արժեքավոր, եզակի, վտանգված սորտերի, անհետացող տեսակների առողջ տնկանյութի արագ ու զանգվածային արտադրության գործընթացի ապահովման, in vitro պահպանվող բույսերի տեսակային կազմի ընդարձակման և պահպանման տեխնո-	2	6 (1ՀՀ+5 օտարերկրյա)

			լոգիաների բարելավման ուղղությամբ: Ջերմատանն իրականացվել են հետազոտություններ կարտոֆիլի մեկ բույսից մինիպալարների կոնդիցիոն քանակի ավելացման ուղղությամբ: Տարբեր մշակաբույսերի in vitro ռիզոգենեզի փուլի բարելավման նպատակով սննդարար միջավայրերում փորձարկվել են բնական ծագման նյութերը: Բույսերի աճեցման աերոպոնիկ սարքով գնահատվել են բույսերի (կարտոֆիլ, ստեվիա, կատվախոտ, խաղող) մի քանի սորտերի աճի և զարգացման առանձնահատկություններն ըստ սննդատարրերի և աճի կարգավորիչների: Մշակվել են միկրոբազմացված բույսերի ադապտացիայի տեխնոլոգիաներ: Միկրոբազմացված և համապատասխան սննդարար միջավայրերի վրա առկա են առողջ տնկանյութի 3500-ից ավելի նմուշ: Միկրոբազմացվել է անփուշ մոշի 2 սորտերին պատկանող 1000-ից ավելի վիրուսազերծ տնկի (արտադրական): Շարունակվում են In vitro եղանակով ցորենի (<i>Triticum aestivum</i> L.) շրջանացված 10 սորտերի ադակայունության գնահատման աշխատանքները: 2. Մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների ազգային գենբանկ: Շարունակվում են գենբանկում պահպանվող սերմնանմուշների և հերբարիումային ֆոնդի գույքագրումն ու սերմնանմուշների վերականգնողական աշխատանքները: Հերբարիումային ֆոնդը կազմում է 1353 թերթ: Գենբանկում պահպանվում է մշակաբույսերի (սորոտեր, սորոտ-պոպուլյացիաներ) և դրանց վայրի ազգակիցների 6919 սերմնանմուշ: Երկարաժամկետ պահպանվող 302 նմուշի տվյալներ ներմուծվել են միջազգային տեղեկատվական բազա: Հերբարիումային ֆոնդն ավելացել է 14 թերթով՝ կազմելով 1367:		
--	--	--	--	--	--

			122 սերմնանմուշ դրվել է երկարաժամկետ պահպանության: Կազմակերպվել են արշավախմբային ուսումնասիրություններ: Ճշտվել են բույսերի աճելավայրերը, նկարագրվել են պոպուլյացիաները, կատարվել է բույսերի մորֆոլոգիական գնահատում: Կատարվել է ճակնդեղի գենետիկական հետազոտության արդյունքների վիճակագրական վերլուծություն: Արդյունքների հիման վրա կազմվել են ֆիլոգենետիկական քարտեզներ, մշակվել են համապատասխան գենետիկական մարկերներ: <u>Սելեկցիոն աշխատանքներ:</u> Շարունակվել են հացազգի մի շարք բույսերի հեռանկարային գծերի ֆենոլոգիական և ֆիտոպաթոլոգիական հետազոտությունները: Բազմացման և վերարտադրության նպատակով կատարվել է 32 նմուշի ցանք՝ 19 սորտ և սորտանմուշ (ցորենաշորա, հաճար, կարծր, փափուկ ցորենի հինավուրց և սելեկցիոն սորտեր,) 13 հեռանկարային գիծ (ցորենաշորա, հաճար, կարծր և փափուկ ցորեն): Բույսերի գենետիկական ռեսուրսների in vitro բանկ: Գյուղատնտեսական որոշ բույսեր (հազվագյուտ և դժվար բազմացվող) դրվել են in vitro պահպանության, վերահսկվել են պահպանման ընթացքում դրանց աճի և զարգացման օրինաչափությունները, պահպանության ժամանակահատվածը երկարացնելու նպատակով մոդիֆիկացվել են սննդարար միջավայրերի բաղադրությունները: 3. Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիա: Իրականացվում են մի շարք հացազգի վայրի և մշակովի բույսերի պոլիակրիլամիդային գելի վրա ուղղահայաց էլեկտրոֆորեզի միջոցով սպիտակուցների ուսումնասիրություններ: Բույսերի գենոտիպավորման ժամանակ ստացված արդյունքները հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմել մի շարք		
--	--	--	---	--	--

				կենսաբանական, ինչպես նաև օգտակար տնտեսական հատկանիշների վերաբերյալ: Կենսաբանական և օգտակար տնտեսական հատկանիշների համար գենետիկական մարկերները կօգտագործվեն նոր սորտերի ընտրասերման գործընթացում: Շարունակվում են համագործակցությունը և համատեղ գիտական աշխատանքները տեղական և արտասահմանյան շահագրգիռ 5 կազմակերպությունների հետ: Գիտաշխատողները հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել են 4 վերապատրաստման կուրսերի: Հաշվետու ժամանակաշրջանում ԳԿ-ի աշխատակիցները մասնակցել են դրամաշնորհային ծրագրերի մրցույթների և շահել 3 թեմատիկ (<< ԳԿ), 1 նյութատեխ. բազայի արդիականացման (<< ԳԿ), 1 միջազգային ծրագրեր, որոնք ընթացքի մեջ են:		
2	ՈՍԿԵՀԱՏԻ ԽԱՂՈՂԱ- ԳԻՆԵ- ԳՈՐԾՈՒԹՅԱ Ն	34911.4	15	Գիտական կենտրոնում աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով. Խաղողագործություն: Կատարվել է Նալբանդյանի փորձակայանի 0,5 հա կոլեկցիոն այգու քարտեզագրում, առկա սորտերի ապրոբացիա: Կոլեկցիոն այգում առկա է 70 սորտ: Կատարվել է սորտերի ողկույզների նմուշառում՝ սորտառումնասիրության նպատակով: Գիտական կենտրոնի Նալբանդյանի գիտափորձարարական տնտեսությունում խաղողի կոլեկցիոն այգում կատարվել են խաղողի արժեքավոր սորտերի հավաքագրում և համալրում (40 սորտ): Քիմիային սորտերի հավաքագրման համար իրականացվել է գիտարշավ: Նմուշների հետագա ուսումնասիրությունները կատարվում են Իսպանիայում: Նախատեսվում է շարունակել խաղողի գենոֆոնդի հավաքագրումը և կոլեկցիոն այգու համալրումը,	2(1/1)	-

			սորտաուսումնասիրությունը, վերջինս նախատեսվում է կատարել նոր մեթոդիկայով (OIV բնութագրիչներով): Հայտնաբերվել են 20 անհայտ սորտեր, նախատեսվում է կատարել դրանց գենետիկական ուսումնասիրություններ: Ուսանող-գիտություն կապն ամրապնդելու համար ուսանողները ներգրավվել են մի շարք աշխատանքներում՝ սկսած էտից մինչև բերքահավաք, ինչպես նաև լաբորատորիայում սորտաուսումնասիրման աշխատանքներին: Կատարվել են ուսումնասիրություններ խաղողի աբորիգեն և սելեկցիոն սորտերի մշակության տեխնոլոգիաների կատարելագործման ուղղությամբ, մասնավորապես՝ բեռնվածության օպտիմալ սահմաններ, էտ, ձևավորման համակարգեր: Վերոհիշյալ աշխատանքները նախատեսվում է շարունակել: 2021 թ.-ին կատարվել է Իջևանի գինու գործարանին կից այգու ապրոբացիա: Նախատեսվում է գարնանը կատարել այգու լիարժեքության վերականգնում: Յուրարմատ արմատակալների աճեցման համար կիլեցումը կատարվել է երկու մեթոդով՝ ավանդական կիլեցում և արմատակալեցում էլեկտրաարմատախթանիչ սարքով: Սկսվել են ուսումնասիրությունները տարբեր խթանիչների ազդեցությունը կտրոնների արմատակալման վրա գնահատման ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքները մշակման փուլում են, կհամադրվեն և կկատարվի համապատասխան վերլուծություն: Պտղաբուծություն: Կատարվել են Նալբանդյանի փորձակայանի ուսումնասիրություն, քարտեզագրում և, ըստ պտղատու տեսակների, հաշվառվել է առկա պտղաբերող ու երիտասարդ ծառերի փաստացի թվաքանակը՝ 242 ծիրանենի ու 369 սալորենի:		
--	--	--	--	--	--

			Ընտրվել է տնկարանի տարածք (100+1000 մ²), իրականացվել են հողի նախապատրաստական աշխատանքներ: Կատարվել են 80 կգ սերմերի ցանքի նախապատրաստական և սերմերի ցանքի աշխատանքներ: Հիմնվել են կոլեկցիոն, մայրուտային, ուսումնագիտացուցադրական այգիներ շուրջ 1,8 հա տարածքի վրա՝ նվիրաբերված 550 և գիտական կենտրոնի կողմից աճեցված շուրջ 200 ծառով: Նախնադարյան փորձակայանի կոլեկցիոն, մայրուտային և ուսումնագիտացուցադրական այգում, 2021 թ. գարնանը և աշնանը, հիմնվել են ծիրանենու 20 տեղական սորտեր և ձևեր, դեղձենու՝ 3, սալորենու՝ 3, նշենու՝ 7, խնձորենու՝ 4, տանձենու՝ 2 և կեռասենու՝ 17 սորտեր: 2021 թ. տնկվել է շուրջ 762 ծառ: ՀՀ մարզերում, ըստ պտղատեսակների հասունացման ժամկետների, շարունակվել են տեղական սորտերի, կլոնների և նոր ձևերի հայտնաբերման, սորտաուսումնասիրության, սորտային կազմի պարզաբանման, դրանց քարտեզագրման ու լուսանկարման աշխատանքները, հայտնաբերվել են տարբեր պտղատեսակների անհայտացած բազմաթիվ սորտեր: Առ այսօր գիտական կենտրոնի կողմից հայտնաբերվել են տարբեր պտղատեսակների 74 սորտեր, ձևեր և կլոններ: Հիմք ընդունելով բազմամյա տարիների ուսումնասիրությունների արդյունքները՝ բնակչությանը ծիրանենու թարմ պտղով երկարաժամկետ (100-110 օր, այժմյան 20-25 օրվա փոխարեն) ապահովելու նպատակով առաջարկվում է Հայաստանի ներկայիս այգիների, դրանցում առկա 4 սորտի փոխարեն նոր այգետարածքները հիմնել 12-14 տարբեր ժամկետներում հասունացող սորտերով: 2021 թ. վեգետացիայի ընթացքում, ըստ պտղատեսակների և առանձին ծիրանենու սորտերի հասունացման ժամկետների և		
--	--	--	--	--	--

			օգտագործման ձևերի, իրականացվել են ֆենոլոգիական դիտարկումներ Արմավիրի մարզի Արգավանդ և Մերձավան համայնքների հողակլիմայական պայմաններում: Մշակվում և փորձարկվում է կորիզավոր պտղատեսակների կլոնային պատվաստակալների, ինչպես նաև թթենու, անփուշ մոշենու, թզենու և կտրոններով բազմացող այլ պտղատու բույսերի կտրոններով բազմացման նոր արդյունավետ մեթոդներ: Ուսանող-գիտություն կապի ամրապնդման նպատակով ուսանողները ներգրավվում են մասնագիտական մի շարք գործնական, հետազոտական աշխատանքներում: Գինեգործություն: Իրականացվել են մի շարք հետազոտական փորձարկումներ, որպեսզի վեր հանվի արտադրությունում կիրառվող մի շարք արտասահմանյան արտադրության խմորասնկերի ազդեցությունը խաղողի Գառան Դմակ, Կանգուն, Տիգրանի, Չարենցի և Կարմրահյուս սորտերից ստացվող գինեյութերի համի և բույրի որակական ու քանակական կազմի առանձնահատկությունների վրա: 2021 թ.-ին իրականացվել են 2020 թ.-ի գինեյութերի փորձանմուշների հիմնական քիմիական ցուցանիշների անալիզ և համեմատ: Համեմատների ամփոփ արդյունքներով տրվել է յուրաքանչյուր սորտից յուրաքանչյուր տեսակի խմորասնկով ստացված գինեյութերի համի և բույրի բնութագիրը, որոնք որոշ դեպքերում էականորեն տարբերվում են և ստեղծում հնարավորություն միևնույն սորտից տարբեր ոճային գինիներ ստանալու համար: 2021 թ.-ին ևս պատրաստվել և հետազոտվել են փորձնական գինեյութեր՝ սպիտակ, կարմիր: Փորձանմուշներում կկատարվեն հիմնական ցուցանիշների անալիզներ և համեմատ յուրաքանչյուր խաղողի սորտի համար ստանալով համերի և բույրերի որոշակի		
--	--	--	---	--	--

			պրոֆիլ: Ստացված արդյունքները կհամադրվեն նախորդ տարվա արդյունքների հետ և կկատարվեն համապատասխան վերլուծություններ: 2021 թ. ընթացքում նախկին տարիների գիտական հետազոտությունների արդյունքների ուսումնասիրության հիման վրա ՀՀ գինեգործական տարբեր շրջաններում բարձրակարգ գինիների պատրաստման համար առաջարկվել է խաղողի քիչ տարածված չորս տեղածին սորտ Ճիլար, Օրդուցի Ճիլար, Թոզոտ և Կողբենի, ինչը հնարավորություն կտա որակ ապահովելով ավելացնել արտադրվող գինիների ծավալը:		
--	--	--	---	--	--

3	Հ. ՊԵՏՐՈՍ- ՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՂԱ- ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈ- ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՄԵ- ԼԻՈՐԱՑԻԱՅԻ	83221.8	48.5	Հաշվետու ժամանակահատվածում գիտական կենտրոն մասնաճյուղում գիտահետազոտական աշխատանքներն իրականացվել են պայմանագրով նախատեսված առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան: Հետազոտություններ են կատարվել ինչպես «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի, այնպես էլ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակում երկրի գյուղատնտեսության զարգացման ապահովման նպատակով նախապատրաստվել են հիմքեր գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման գլխավոր սխեմայի կազմման համար, որից էլ պետք է բխեն համայնքների հողօգտագործման գլխավոր հատակագծերը: Ըստ բնահողային, ագրոկլիմայական գոտիների՝ կատարվել է հողերի ագրոարտադրական (ագրոմելիորատիվ) խմբավորում, մշակվել է միջոցառումների համակարգ՝ հաշվի առնելով ոչ միայն հողային, այլև բնակլիմայական պայմանները և կիրառվող մշակաբույսերի առանձնահատկությունները: Արարատյան հարթավայրում արհեստական ձկնաբուծական տնտեսությունների շրջակայքում գրունտային ջրերի բարձրացման հետևանքով աղակալման-ալկալիացման երևույթների ակտիվացման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել հողում ուսումնասիրություն կատարել նշված գործընթացների բացասական ազդեցությունը պարզելու և վերացնելու նպատակով: Բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել և մշակվել են համալիր միջոցառումներ Արարատյան հարթավայրի հողերի անապատացման, աղակալման և	10	7(3/4)
---	---	---------	------	--	----	--------

				ալկալիացման դեմ: Ուսումնասիրվել և մշակվել են համալիր միջոցառումներ աղուտ-ալկալի հոդերի վերը նշված հատկությունների և սննդատար-րերով դրանց ապահովվածության բարելավման ուղղություն-ներով: Ուսումնասիրվել է Արարատի մարզի Արարատ, Հովտաշատ, Արմավիրի մարզի Ջրառատ համայնքների հոդերի և Երասխահունի փորձամեղիորատիվ կայանի մեղիորացված հոդերի արդի վիճակը: «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի հետ իրականացվող ներդրումային ծրագրի (պայմանագիր QSE/E-20/02) շրջանակում իրականացվել է նորմատիվային համակարգի մշակում կոնյակի սպիրտի թորումից առաջացած թափոն բարդան գյուղատնտե-սության մեջ աղուտ-ալկալիների մեղիորացման նպատակով օգտագործելու ուղղությամբ: Ուսումնասիրություններն իրա-կանացվել են երեք հողատիպերում՝ կիսաանապատային գորշ, ոռոգելի մարգագետնային գորշ, անտառային դարչնագույն՝ հողերի սննդային ռեժիմի բարելավման նպատակով: 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածում աշխա-տանքներ են տարվել հանրապետության հողային ծածկույթի ուսումնասիրման, դեգրադացման գործընթացների զարգացման միտումների բացահայտման, հողերի արդյունավետ օգտա-գործման և դրանց բարելավման ուղղությամբ: Ուսումնասիրվել են ՀՀ հողային ծածկույթը, հողերի ծագումնաբանական և արտադրական առանձնահատկությունները: Հետազոտություններն իրականացվել են Սյունիքի մարզի լեռնա-յին շագանակագույն հողերի պայմաններում: Տարվա ընթացքում իրականացվել են օրացուցային պլանով նախատեսված դաշտային դիտարկումներ և ուսումնասիրություններ, լաբորա-տոր հետազոտությունների համար վերցվել են հողաբուսա-		
--	--	--	--	--	--	--

				նմուշներ: Ընթացիկ տարում շարունակվել են Սպիտակի հողաէրոզիոն համալիրում, ինչպես նաև Լոռու և Սյունիքի մարզերի ֆերմերային տնտեսություններում ամենամյա հետազոտությունները՝ էրոզացված և էրոզավտանգ գյուղատնտեսական հողատեսքերում դեգրադացման գործընթացների և կլիմայի փոփոխության ազդեցության, ինչպես նաև հակաէրոզիոն համալիր միջոցառումների կիրառման արդյունավետությունը բացահայտելու ուղղությամբ: Ուսումնասիրվել և մշակվել են համալիր միջոցառումներ հողերի բարելավման, կլիմայական և անապատացման բացասական երևույթների մեղմման ու հարմարվողականության մեթոդների մշակման ուղղությամբ՝ անտառային բնահողային (լանդշաֆտային) գոտու օրինակով, անտառային գորշ և անտառային դարչնագույն հողատիպերի սահմաններում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդու ոչ ճիշտ տնտեսական գործունեության հետևանքով նշված հողերը էրոզացվել են, ինչի արդյունքում քարքարոտությունը մեծացել է, ստրուկտուրային ջրակայուն ագրեգատները քայքայվել են, տեղի է ունեցել օրգանական ածխածնի (հումուսային պաշարների), մակրո- և միկրոսննդատարրերի, արդյունավետ ջրային պաշարների անկում, հողի ֆիզիկական և մեխանիկական հատկությունների վատթարացում: Մասնաճյուղի գիտնականների կողմից իրականացվել է «Նոր բաղադրության համալիր պարարտանյութերի ստացում և կիրառման արդյունավետ համակարգերի մշակում ավանդական և օրգանական գյուղատնտեսությունում ՀՀ տարբեր բնակլիմայական պայմաններում» թեմատիկ ծրագիրը, որը կրում է շարունակական բնույթ: Կատարված գիտափորձերի,		
--	--	--	--	--	--	--

			ուսումնասիրությունների արդյունքում գիտական խմբին հաջողվել է սինթեզել օրգանահանքային բաղադրության ջրալույծ համալիր պարարտանյութեր, որոնց կիրառման արդյունքում հնարավորություններ են ստեղծվում ֆերմերային տնտեսություններում կարկտահարության և ցրտահարության հետևանքների արագ վերականգնման համար՝ ապահովելով բերքի որակական և քանական բարձր ցուցանիշներ: Աշխատանքներ են տարվել թորման եղանակով արտադրական ջրերի մաքրման էներգախնայողական փորձնական սարքի պատրաստման ուղղությամբ, օգտագործվել են արևի և այլընտրանքային էներգիայի աղբյուրներ: Գիտափորձեր են կատարվում նաև ցեմենտի և պղնձի արտադրությունների թափոնների փոխազդեցության միջոցով մելիորանտի ստացման ուղղությամբ, որը 4-5 անգամ կկրճատի Արարատյան հարթավայրի աղուտ-ալկալի հողերի լուկալ մելիորացման նպատակով իրականացվող ծախսերը: Գիտական կենտրոնը հանրապետության գյուղատնտեսությունում տնտեսավարողներին (ֆերմերներին) տրամադրել է խորհրդատվություն գյուղատնտեսական հողերի որակական կազմի գնահատման (անալիզներ) և բարելավման միջոցառումների ուղղությամբ: Կենտրոն-մասնաճյուղի գիտահետազոտական լաբորատորիայում հաշվետու տարում իրականացվել են 1265 հողանմուշի անալիզներ: Մասնաճյուղի վեգետացիոն տնակում իրականացվել են ուսումնասիրություններ տեղական <i>AQUASOURS</i> պոլիմերային ջրակլանիչ նյութի տարբեր մշակաբույսերի աճի և զարգացման վրա ունեցած ազդեցության ուղղությամբ: Ուսումնասիրությունները տարվել են հանքային պարարտանյութերի տարբեր չափաքանակների կիրառման		
--	--	--	--	--	--

				պայմաններում: Կենտրոն-մասնաճյուղի գիտնականները, գիտաշխատողները մասնակցություն են ունեցել տեղական և միջազգային գիտական միջոցառումների (գիտաժողովներ, աշխատաժողովներ, համաժողովներ, վերապատրաստման դասընթացներ), ՀՀ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի հետ համատեղ «Հողի որակ» ազգային ստանդարտի մշակմանը: Գիտական կենտրոնում կազմակերպվել և անցկացվել են ՀԱԱՀ ցերեկային և հեռակա ուսուցման, Քոչինյանի անվ. Գյուղատնտեսական քոլեջի ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաներ: Կատարած գիտահետազոտական աշխատանքների արդյունքում ԳԿ մ/ճ գիտնականների կողմից հրատարակվել է 10 գիտական հոդված, ևս 11-ը գտնվում է գրախոսման և հրատարակման փուլում (երկու հոդված ներկայացված է բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերի), ստացել են 2 հեղինակային արտոնագիր, մասնակցել են 4 միջազգային գիտաժողովի և տպագրության փուլում է «Հայաստանի հողերի արդի վիճակը» խորագրով խմբային մենագրությունը: Մասնաճյուղում իրականացվել է Հողագիտության թանգարանի արդիականացման ծրագիր UNDP դրամաշնորհային մրցույթի շրջանակում: Կենտրոնի երիտասարդ գիտնականների խումբը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող «100 գաղափար Հայաստանի համար» նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների մրցույթին՝ ներկայացնելով «Ձկնաբուծարանների ջրերի երկրորդային օգտագործումը ոռոգման նպատակով» նախագիծը: Բազային ֆինանսավորման ծրագրին զուգահեռ 2021 թ. ընթացքում գիտական կենտրոնում իրականացվել են նաև ՀՀ		
--	--	--	--	---	--	--

				գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորման երաշխավորված թեմատիկ 4 ծրագրեր, որոնք են՝ 1. Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակում իրականացվել է 19YR-4C040 ծածկագրով «Արարատյան հարթավայրի ոռոգելի հողատարածություններում խոնավության փոփոխման գործընթացի ուսումնասիրումը և ֆիլտրացիոն երևույթների գնահատումը» թեման: 2. Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված երկու գիտական թեմատիկ ծրագրերը՝ 20APP-4C011 ծածկագրով «Սիս կենսահումուսի տնտեսաէկոլոգիական արդյունավետությունը Հայաստանի Հանրապետության բնահողային գոտիներում», և 20APP-4C015 ծածկագրով «Արտարմատային սնուցման (տերևային սնուցում) նպատակով կիրառելու համալիր պարարտանյութերի սինթեզի տեխնոլոգիա, սինթեզում և փորձարկում» թեմաները: 3. Պայմանագրային թեմատիկ ֆինանսավորման ծրագրի շրջանակում 21T-4C050 ծածկագրով «Սինթետիկ պոլիմերների օգտագործմամբ հացահատիկի բերքատվության բարձրացման միջոցառումների համակարգի մշակում Հայաստանի Հանրապետության անջրդի երկրագործության պայմաններում» թեման: Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել գիտական կենտրոնի կողմից ներկայացված հայտը:		
--	--	--	--	---	--	--

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ						
				<u>Դաշտավարության և անասնապահության մեքենայացման բաժին</u>		
4	ԳՅՈՒՂԱՏՆՏԵ ՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑ- ՄԱՆ ԵՎ ԱՎ- ՏՈՄԱՏԱՑ- ՄԱՆ	15484.0	12.75	2021 թ.-ի ընթացքում բազային ֆինանսավորման շրջանակում կատարվել են չորս գիտական ենթաթեմաներ: Դրանք վերաբերում են գյուղատնտեսության տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքների մեքենայացմանը, տեխնոլոգիական գործընթացների ուսումնասիրությանն ու կատարելագործմանը: «Հացահատիկացան շարքացանների ունիվերսալացում ցանող ապարատի և շաղացանքի սերմթաղիչ հանգույցի մշակումով» ենթաթեմա Հողում սերմերի ցանքի խորության համաչափությունը ապահովելու տեսանկյունից հիմնավորվել է, որ սլաքաձև սերմթաղիչ խոփիկի կախոցը պետք է ունենա զուգահեռագծային մեխանիզմով համակարգ, որը զերծ է շառավղային կախոցի հայտնի թերություններից: Կատարվել են ցանող ապարատի և սերմթաղիչ խոփիկի կատարելագործում, առաջարկվել են նոր կառուցվածքային մշակումներ: Մի շարք հարցեր մնում են չլուծված, այդ թվում՝ ցանքի խորության կարգավորում, կայունության ապահովում, սերմնահան ապարատի շարժահաղորդման կինեմատիկ սխեմա, ցանքի գործընթացի մշտադիտարկում, որոնք ենթակա են հետազոտման և ուսումնասիրման: «Բազմամյա տնկարկների միջբնային տարածությունների ռոտացիոն խոտհնձիչի նախագիծ» ենթաթեմա «Բազմամյա տնկարկների միջբնային տարածությունների ռոտա-	9(7/2)	

			ցիոն խոտինձիչի նախագիծ» գիտական թեմայի իրականացման ընթացքում ուսումնասիրվել են ինտենսիվ պտղատու և խաղողի այգիներում հողի պահպանման գոյություն ունեցող համակարգերը՝ սև ցելի, կանաչ պարարտացման, ճմաբուսային և այգու հողի մուլչապատման: Նախագծի կատարման ժամանակ ընտրվել է այն մեթոդը, որը կապահովի անցումը հողի ծածկույթի խնամքի հյուծիչ տեխնոլոգիաներից դեպի հողապաշտպան տեխնոլոգիաներ: Հաշվի առնելով դրանք, ինչպես նաև գիտատեխնիկական հիմնավորումները, եզրակացվել է, որ հողապաշտպան տեխնոլոգիաների ներդրման առումով բավական արդյունավետ է այգու հողի պահպանման մուլչապատման եղանակը, որը գրեթե չի կիրառվում: Որպես մուլչանյութ հիմնականում օգտագործվում են այգու միջբնային և միջշարքային տարածություններում բնական կամ արհեստական եղանակով աճեցված բազմամյա խոտաբույսերը, որոնք վեգետացիայի ընթացքում 3-4 անգամ հնձվում և 7-8 սմ շերտով հավասարաչափ փռվում են ծառերի միջբնային և մերձբնային գոտում: Թեմայի կատարման ընթացքում առաջադրված նպատակներին հասնելու համար գիտական թիմի կողմից նախագծվել և եռաչափ մոդելավորվել է ռոտացիոն խոտինձիչ-մուլչեր: Ամբողջությամբ պատրաստ է նախագծագրաֆիկական փաստաթղթերի փաթեթը: Մուլչերը նախատեսված է տրակտորի հետ ագրեգատավորվելու համար, շարժաբերը՝ ՀԱԼ-ից, դանակների շարժաբերումը՝ փոկանիվային, աշխատանքային ընդգրկման լայնությունը՝ մոտ 1,2 մ է: Ծրագրով նախատեսված մեքենայի փորձանմուշի պատրաստման և փորձարկման աշխատանքների կազմակերպումը չի իրականացվել՝ պայմանավորված ֆինանսական միջոցների ան-		
--	--	--	--	--	--

			բավարար ծավալով: Պատրաստման և գիտափորձերի իրակա-նացման աշխատանքները կսկսվեն անմիջապես միջոցների առկայության դեպքում: «Կենսագազային տեղակայանքի մշակումը և պարամետրերի հիմնավորումը» ենթաթեմա Ենթաթեմայով նախատեսված էր մշակել կենսագազային տեղակայանք՝ համապատասխան հանգույցների հաշվարկ ու պարամետրերի որոշում, էսքիզային նախագծերի վերանայում, մեթանտենկի, նաև որոշ հանգույցների պատրաստում, մեթան-տենկի ու հանգույցների լաբորատոր փորձարկումներ և պարա-մետրերի ճշգրտում: Կենսագրականին տեղակայանքի մշակման հիմքում ընկած է այն, որ Հայաստանում խոշոր եղջերավոր կենդանիներին հիմնականում պահում են կապովի պահվածքով, օգտագործում են ցամքար: Տեղակայանքի նախագծման հիմքում պետք է լիներ ցամքարով գոմաղբի՝ որպես հումք օգտագործումը, համապատասխան լուծումներով և մշակումներով: Հաշվի առնելով նշվածը՝ նախագծվել և պատրաստվել է 500 լ տարողությամբ մեթանտենկով կենսագրականին տեղակայանք, որը նախատեսված է անաերոբ եղանակով, ցամքարով գոմաղբի կիրառմամբ կենսագազի ստացման համար, լրամշակվել են ցամքարից զտման հանգույցները, համալրվել է հումքի աշխատանքային նորմալ ցիկլն ապահովող սարքավորումներով, հիմնավորվել են արդյունավետ աշխատանքի համար ջրիկ հումքի օրական բաժնեմասերը և այլ կարևոր պարամետրեր: Կենսագրականին տեղակայանքի լաբորատոր փորձարկումները նախատեսվում են 2022 թ.-ին: «Լեռնային երկրագործությունում հողի մշակման էներգա-խնայող տեխնոլոգիայի և լիակատար ագրեգատի մշակում և ներդրում» ենթաթեմա		
--	--	--	--	--	--

			Թեմայի շրջանակներում իրականացվել է հողի մշակման տեխնոլոգիաների վերլուծություն, որի հիման վրա կատարվել են հողի մշակման տեխնոլոգիաների համակարգում, գնահատում, լանջերում հողի արդյունավետ մշակման տեխնոլոգիայի մշակում, լանջերի հողի մշակման կոմբինացված բանող օրգանի պատրաստում և լաբորատոր փորձարկում: Կատարվել է տեսական հետազոտական աշխատանք, որի արդյունքում առաջարկվել է հողի վերին շերտի մշակման եղանակ՝ համատարած 8-15 սմ խորությամբ փխրեցմամբ, իսկ ներքևի շերտը՝ մինչև 30-35 սմ խորությամբ փխրեցմամբ, ձևավորելով միմյանցից որոշակի հեռավորության վրա քրակուտակիչ տարողություններ: ՀՀ լեռնային երկրագործությունում առաջարկված տեխնոլոգիայով հողի մշակման համար մշակվել և պատրաստվել է կոմբինացված բանող օրգան՝ լաբորատոր փորձարկումների համար:		
			Ավտոմոբիլային փոխադրումների բաժին Գազաբալոնային ավտոմոբիլների անվտանգության տեխնոլոգիական համակարգերի մշակման և ներդրման ծրագիր Հետազոտության շրջանակներում կատարվել է ներքին այրման շարժիչների (ՆԱՇ) գոյություն ունեցող սնման համակարգերի տեսակների, գազային վառելիքով աշխատելու համար ավտոմոբիլների վերասարքավորման ժամանակ տեխնոլոգիական պրոցեսներին ներկայացվող անվտանգության պահանջների, գազաբալոնային ավտոմոբիլների անվտանգ շահագործման կանոնների և գազի հոսքը բացահայտող սարքերի ուսումնասիրություն: Պարզվել է. 1) ՆԱՇ-ում առավել լայն տարածում է ստացել երկվառելիքային		

			համակցված սնման համակարգի կիրառումը, 2) մասնակիորեն են կատարվում ՀՀ կառավարության «Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին» 28.09.2005թ. 2388-Ն և «Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 24.12.2015 թ. 1520-Ն որոշումները, 3) երկվառելիքային համակցված սնման համակարգերի հիմնական սխեմաներում բացակայում են շահագործման պրոցեսում շարժիչային գազային վառելիքի հնարավոր արտահոսքը բացահայտող (նախազգուշացնող) և ժամանակին հնարավոր դժբախտ պատահարներից խուսափելու անվտանգությունն ապահովող տեխնիկական միջոցները, 4) գազային սարքավորումների հերմետիկության խախտմամբ պայմանավորված հրդեհների թիվը կարելի է մի քանի անգամ կրճատել վարորդների կողմից շահագործման կանոնների կատարման շնորհիվ: Մշակվել է թվային տեխնոլոգիաներով էլեկտրոնային կառավարման համակարգ, որը հնարավորություն է տալիս ավտոմատացնել մշակված գազային համակցված սնման համակարգի աշխատանքը: Մշակվել է գազաբալոնային ավտոմոբիլների շահագործման անվտանգության ապահովման համակարգ, ներկայացվել են կառուցվածքի սխեման և աշխատանքային գործընթացի նկարա-		
--	--	--	--	--	--

				գիրը: Համակարգը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալության կողմից ծրագիրը կատարողներին տրված թ.3242A. արտոնագրով: Առաջարկվող համակարգի օգնությամբ հնարավորություն է ստեղծվում ավտոմոբիլի վթարի ժամանակ գազի հնարավոր արտահոսքի իսպառ դադարեցումը, ինչի արդյունքում կբարձրանա հետվթարային անվտանգությունը: Մշակվել են գազաբալոնային ավտոմոբիլի անվտանգ սնման համակարգի լաբորատոր և շահագործական փորձարկման մեթոդիկաներ, ներկայացվել են փորձարկումների ժամանակ անվտանգության տեխնիկայի պահպանման կանոնները:		
5	ՍՆՆԴԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ	15355.4	12.5	Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին Բաժնի կողմից 2020 թ. հետազոտությունները վերաբերում էին հակամանրէական պրեպարատների, մասնավորապես կաթնաթթվային ծագմամբ հակամանրէական պրեպարատների մշակմանը, և ձկների բակտերիալ ծագմամբ հիվանդությունների ախտորոշմանն ու դրանց դեմ հակամանրէական պայքարի մեթոդների գնահատմանն ու նոր մոտեցումների զարգացմանը, ապա 2021 թ. գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունը սննդի անվտանգության ապահովման նպատակով նոր անվտանգ կենսաակտիվ միացությունների՝ պրոբիոտիկային բակտերիոցինների օգտագործման հնարավորությունների բացահայտումն էր՝ մասնավորապես լոլիկի տեխնոլոգիական վերամշակումներում, ինչի կարևորությունն ու արդիականությունը նախ և առաջ բխում է սննդամթերքի կենսատեխնոլոգիական արտադրանքների պահպանման գործընթացներում քիմիական ծագմամբ տարբեր սննդային հավելումների լայն օգտագործմամբ: Գիտահետազոտական աշխատանքների հիման վրա, ըստ	7(2/5)	7(0/7)

			բակտերիաների տեսակային պատկանելիության, քննարկվել են լակտոբացիլային բակտերիաների կիրառման հնարավորությունները լոլիկի աճեցման տեխնոլոգիաներում և լոլիկի հյութի, մածուկների, պահածոների տեխնոլոգիական տարբեր վերամշակումներում: Իրականացված գիտահետազոտական աշխատանքները նպաստում են ինչպես լոլիկի տեխնոլոգիական վերամշակումներում հիվանդածին բակտերիաների դեմ պայքարի միջազգային միջոցների/միջոցառումների մասին տեղեկատվական բազայի ստեղծմանը, այնպես էլ լոլիկի տեխնոլոգիական վերամշակումներում պրոբիոտիկային բակտերիոցինների օգտագործման հնարավորությունների ընդլայնմանը: Հաշվետու ժամանակահատվածում «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ-2021»-ում բաժնի կողմից առաջարկված ծրագրի հայտը՝ 21AG-4D065: Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ. ջերմային սթրեսի կարգավորումը ձկների և ընտանի թռչունների մոտերաշխավորվել է ֆինանսավորման: Շարունակվում են նաև հետևյալ թեմաներով երկու միջազգային ծրագրերը. «Հյուսիսային Կովկասում զոոնոտիկ ինֆեկցիաների ատլասի նախապատրաստում» և «Ուղղորդված պրոբիոտիկներ ջրային կամ ակվակուլտուրաների համար»:		
			Կենդանական ծագման հումքի և մթերքների վերամշակման տեխնոլոգիաների բաժին 2020 թ. հետազոտությունները վերաբերում էին կենդանական և բուսական ծագման հումքից առանձնացված պրոբիոտիկների կատալազային և պերօքսիդազային ակտիվությունների հետազոտմանը, ապա 2021 թ. գիտահետազոտական աշխատանքների հիմնական նպատակը ՀՀ-ում սննդամթերքում կենսաբանորեն	4	

			ակտիվ հավելումների (ԿԱՀ-եր) կիրառմանը վերաբերող ուսումնասիրություններն էին: Գիտահետազոտական արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ 1. Հայաստանում օգտագործվում են մեծ քանակությամբ ԿԱՀ-եր, ՀՀ սննդամթերքի արտադրական գործընթացներում ԿԱՀ-երի օգտագործումը հիմնականում հեռու է գիտականորեն հիմնավորված լինելուց: 2. ՀՀ-ում գիտականորեն հիմնավորված պրոբիոտիկների բավականին լավ հավաքածուները իրենց հայտնի բնութագրերով մի կողմից, և մյուս կողմից, կաթնամթերքի զարգացող տեխնոլոգիաները բացառիկ հիմք են ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրության զարգացման համար:		
			Բուսական ծագման հումքի և մթերքների վերամշակման տեխնոլոգիաների բաժին Սննդարտադրության ոլորտում ձեռնարկությունների տեխնոլոգիաների զարգացումը հիմնված է տեսականու ընդլայնման, այդ թվում՝ դիետիկ հացաբուլկեղենի և հրուշակեղենի արտադրության, կրաֆտ գարեջրի որակի և համային հատկանիշների կատարելագործման և նոր ծրագրերի ներդրման վրա: Հացի և հրուշակեղենի ոլորտի խնդիրներից մեկը հումքի ցածր որակն է, մասնավորապես ալյուրի: Այդ խնդրի լուծման համար հարկավոր է մշակել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք հաշվի են առնում հիմնական հումքի կենսաքիմիական և տեխնոլոգիական հատկությունները, խմորային համակազմության ռեգիոլոգիական հատկությունները և վերջնական ապրանքի որակը: Վերլուծելով շուկայական պահանջարկը և ոլորտում զարգացման տենդենցները՝ բաժնի կողմից իրականացվող գիտահետազո-	5(4/1)	4(1/3)

			տական և փորձարարական աշխատանքներն ուղղված են եղել հետևյալ բնագավառների զարգացմանը. - երկրորդային հումքի վերամշակման արդյունքում ստանալ որակյալ հումքատեսակներ, որոնք հնարավոր կլինի կիրառել որպես ֆունկցիոնալ բաղադրիչ, - դիաբետիկների համար նախատեսված մթերքների մշակումը համեմատաբար ցածր ինքնարժեքով, - ըմպելիքների և հատուկ գարեջրի նոր տեսակների մշակում տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի աղբյուրների կիրառման ճանապարհով, մասնավորապես հատապտղային հումքի կիրառում: Մշակվել է հացի նոր տեխնոլոգիա՝ հաճարի ալյուրի և անանուխի էքստրակտի կիրառումով, ինչպես նաև ուսումնասիրվել է այդ բաղադրիչների ազդեցությունը հաճարի ալյուրից ստացված խմորի և հացի տեխնոլոգիական հատկությունների վրա: Եվս մեկ հացաթխման նոր տեխնոլոգիա է մշակվել՝ ծիրանի երկրորդային վերամշակման արդյունքում ստացված պեկտինի օգտագործմամբ բուլկու տեսականի: Թզենու տերևներից ստացվել է սպիրտային հիմքով էքստրակտ, որը հնարավոր կլինի օգտագործել հացաթխման արտադրության մեջ որպես խմորման պրոցեսներն արագացնելու միջոց, իսկ թզի առանց շաքար չրից և ստեփոգիդի օշարակից մշակվել է թխվածքաբլիթների տեսականի, որը նախատեսված է դիաբետիկների համար: Մշակվել են կեքսերի պատրաստման տեխնոլոգիաներ՝ տարեկանի ալյուրի բարձր պարունակությամբ, միաժամանակ բարձր որակական հատկանիշներով: Դիաբետիկների համար նախատեսված մթերքների մշակումը և համեմատաբար ցածր ինքնարժեքով արտադրելը զարգացող		
--	--	--	---	--	--

				ճյուղ է, իսկ արտադրողին հարկավոր է նոր տեսականի: Հետազոտական աշխատանքը վերաբերել է հատուկ գարեջրի տեխնոլոգիայի մշակմանը, օգտագործվել են մասուրի պտուղները և հյութը:		
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ						
6	ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱ-ԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱ-ԳԻՏՈՒԹՅԱՆ	5094.4	3.5	Հետազոտական աշխատանքում ներկայացվել են Հայաստանում գյուղատնտեսական կլաստերների ձևավորման նպատակները և ներդրման խնդիրները: Ըստ կլաստերի լիզագիայի զարգացման կուտակված միջազգային փորձի՝ մոտարկվել են ագրարային կլաստերի արդյունավետ գործունեությունը բնութագրող որակական և քանակական չափորոշիչներ: Սահմանվել են կլաստերներում աշխատանքների կազմակերպման և սուբյեկտների միջև փոխհարաբերությունների սկզբունքները՝ փոխլրացման, մրցակցության զսպման, բազմակի հաղորդակցության, փոխգործունեության, իրազեկման և այլն: Ծրագրային թիմն իրականացրել է ՀՀ-ում կլաստերային քաղաքականության ներդրման, կլաստերների ձևավորման շուրջ հարցումներ՝ 95,7 % հնարավոր է համարել մասնակցությունը կլաստերին, ընդ որում՝ 67 %-ը՝ որպես անդամ, իսկ 33%-ը՝ նախաձեռնող: Բնութագրվել է գյուղատնտեսական կլաստերներում հավանական ներգրավվող սուբյեկտների դերակատարությունը: Կլաստերը կազմակերպման և ինքնակազմակերպման, մրցունակությանը նպաստող և համագործակցության գործուն ձև է: Հնարավոր ենք համարել ՀՀ-ում կլաստերների ցիկլային բնույթի կառավարման համակարգի կիրառումը, որն իր մեջ կներառի ռազմավարության ձևավորումը, համաձայնագրերի կնքումը, անդամների առաջխաղացումը, մասնագիտական	9(6/3)	2(0/2)

				վերապատրաստումը, տեղեկատվության հավաքագրումը, արդյունքների գնահատումը և այլն: Հիմնավորվել են հանրապետությունում կլաստերային քաղաքականության իրականացման օբյեկտիվ նախադրյալները, տնտեսավիճակագրական ռեգրեսիոն և կոռելյացիոն համեմատական վերլուծության արդյունքներով կատարվել է ՀՀ տարածքների կլաստերային պայմանական բաժանում՝ հաշվի առնելով նաև գյուղական տարածաշրջաններում գյուղատնտեսության մասնագիտացումը, ճյուղային առանձնահատկությունները, ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ենթակառուցվածքների առկայությունը և այլն: Իրականացվել է ՀՀ պայմաններում կլաստերի տիպային մոդելների մշակում: ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման կլաստերային քաղաքականության ներդրումը ուղղակիորեն պայմանավորված է իրավաօրենսդրական հիմքերի ձևավորմամբ: • Ուրվագծվել է «Ագրարային նորամուծական կլաստերի մասին» ՀՀ օրենքի նախագծի բովանդակություն: • Ագրարային կլաստերի զարգացման ծրագիրը կարող է ընդգրկել ծրագրի անձնագիրը, նպատակներն ու խնդիրները, զարգացման նախադրյալները, մասնակիցների համատեղ նախագծերը, ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը, նպատակային և արդյունքային ցուցանիշները, սոցիալ-տնտեսական ազդեցությունը և այլն: • Մշակվել է կարևորագույն փաստաթուղթ՝ «Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև ռազմավարական համագործակցության համաձայնագիրը»: • Իրականացվել է հանրապետության կտրվածքով ներդրումային միջավայրի վրա կլաստերային քաղաքականության	
--	--	--	--	---	--

				ներդրման ազդեցության գնահատում: Գիտական թեմայի կատարման շուրջ վերլուծությունների, հետազոտությունների արդյունքն ամփոփվում է Կլաստերային քաղաքականության ներդրման» ճանապարհային քարտեզում:		
7	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ ԱԿԱՆ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ, ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ	6021.6	5	Հետազոտական կենտրոնը իրականացրել է տեխնոլոգիական, գենետիկական և կենսաքիմիական հետազոտություններ տավարաբուծության, ոչխարաբուծության, այծաբուծության ուղղությամբ: Տավարաբուծություն: Ծրագրի օրացուցային պլանի համաձայն՝ տավարաբուծական տնտեսություններում շարունակվել է հոլշտին և ֆլեկվի ցեղերի էլիտա ռեկորդ կովերի զուգավորման գործընթացը: Եռացեղ և քառացեղ կենդանիների ստացման համար կատարվել է պատվերային զուգընտրություն: «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲԸ տնտեսության բոնիտավորման տեղեկագրի համաձայն՝ կազմվել է 68 գլուխ կովերի և 2 գլուխ ցուլերի զուգընտրության պլանը: Շարունակվել են 2019 թվականին ծնված հոլշտին և ֆլեկվի ցեղերի 110 գլուխ երինջների, ըստ ծագման, գնահատման աշխատանքները էլիտա և էլիտա ռեկորդ կենդանիների տոհմային խումբ կազմելու համար: Շարունակվել է նախորդ տարիներին ստացված եռացեղ և քառացեղ առաջնածին կովերի գնահատումն ըստ մթերատվության, արտակազմվածքի և դիմացկունության: Հետազոտական աշխատանքներ են տարվել «Վամաքս» ՍՊԸ-ի տնտեսության բոնիտավորման տեղեկագրի տվյալներով վերջին 3 տարիներում պարզելու կովերի սերվիսի շրջանի տևողության երկարացման պատճառները. ուսումնասիրությունը ընթացքի մեջ է: Ամփոփվել և վերջնական վիճակի են բերվել «Արզնու տոհմային	4(3/1)	1(0/1)

			ԹՏԽ» ԲԲԸ տնտեսության 100 գլուխ տոհմային քարտերը: 2019 թվականին ծնված հոլշտին և ֆլեկվի ցեղերի 110 գլուխ երինջների համար կազմվել են տոհմային քարտեր, որոնցում ներկայացվել են կենդանիների ծագումն ու մթերատվությունը՝ մայրական և հայրական կողմերի մինչև 3-րդ շարքի նախնիների ներառմամբ: Բոնիտավորվել է 2018 և 2019 թվականներին ծնված տոհմային մատղաշը, որոշվել է հանրագումարային դասը և լրացվել են բոնիտավորման ամփոփագրերը: Ամփոփվել է հոլշտին և ֆլեկվի ցեղերի տոհմային խմբի կովերի 2020 թվականի ավարտված լակտացիայի կաթնային մթերատվության տվյալները և 70 գլուխ կովերի համար լրացվել է բոնիտավորման ամփոփագիրը. կատարվել է կովերի գենոտիպային, ֆենոտիպային գնահատում: Ոչխարաբուծություն: Հաշվետու տարվա մարտ ամսվա ընթացքում, նոր ձևավորվող ֆերմերային տնտեսության համար, Սյունիքի մարզի Խոտ գյուղում իրականացվել է 850 գլուխ բոզախ ցեղի ոչխարների ընտրություն: Ընտրված ոչխարները տեղափոխվել են Նոյեմբերյանի տարածաշրջան, Բերդավան համայնք, որից հետո տեղափոխվել են 35 կմ հեռավորության վրա գտնվող ամառային արոտավայր: Ընտրված կենդանիների զգալի մասը, մոտ 70 %-ը 4- 4.5 տարեկան են: Հոտում լիատարիք կենդանիները կազմել են 0,8 %, տարիքը՝ 7 և ավելի տարեկան: Հոտի 22 %կենդանիների տարիքը տատանվել է 4,5-6 տարեկանի սահմանում: Թեմայի շրջանակում նախատեսվել էր իրականացնել 2,5 և 5 ամսական գառների կշռում, ոչխարների խուզ (խուզած բրդի հաշվառում, կշռում և դասակարգում, տարիքային խոտանում և այլ աշխատանքներ):		
--	--	--	---	--	--

			Հաշվառման է ենթարկվել ընդամենը 95 գլուխ մատղաշ, որից 49 գլուխ արու (51,6 %) և 46 գլուխ էգ (48,4 %): Իրականացվել է ստացված տվյալների կենսաչափական վերլուծություն: Ըստ հետազոտությունների արդյունքների՝ արուների կենդանի զանգվածը 2,5 ամսականում կազմել է $19,6 \pm 0,37$, իսկ էգերինը՝ $16,7 \pm 0,29$ կգ: 5 ամսականում արուների կենդանի զանգվածը կազմել է $30,7 \pm 0,4$, իսկ էգերինը՝ $28,6 \pm 0,38$ կգ: Խուզի ժամանակ իրականացվել է ամբողջ գլխաքանակի զննում: Գնահատման ընթացքում կատարվել է մեծահասակ, կրծի վնասվածքներով, վիժած, հիվանդ և այլ թերություններ ունեցող մաքիների խոտանում՝ 45 գլուխ: Խոտանվել է նաև 2 գլուխ խոյ: Գնահատման ժամանակ առանձնացվել և խոտանվել է հոտի համար ոչ պիտանի՝ նախորդ տարվա 13 գլուխ արու: Խոտանվել են նաև ընթացիկ տարվա արու և էգ գառները, որոնք չեն բավարարում կորիդել տիպի ոչխարներին ներկայացվող բնորոշ պահանջները: Խուզն իրականացվել է ձեռքով, Էլիջայի տարածքում: Խուզի ընթացքում ստացվել է 830 կգ գեղմային բուրդ և հանձնվել է պահեստ: Խոյերի միջին բրդատվությունը կազմել է 4,53, մաքիներինը՝ 3,57, խոյիկներինը՝ 3,5, իսկ շիշակներինը՝ 3,2 կգ: Խուզվել են նաև ընթացիկ տարվա գառները: Այծաբուծություն: 40 գլուխ այծամայրերից ծնվել է 81 գլուխ ուլ, որից 40 գլուխը՝ էգ, իսկ 41 գլուխը՝ արու: Մեկական ուլ ծնել է այծամայրերի 25 %-ը, զույգատվությունը եղել է 48,0 %, եռյակ ծնած մայրերը կազմել են ընդհանուր գլխաքանակի 25,0 %-ը, քառյակ ծնածները՝ 2 % կամ քառյակ ծնել է 1 մայր, որոնց ուլերն ունեն նորմալ աճ ու զարգացում: Հարկ է նշել, որ, բացի մեկ գլխից, քառյակ ծնել են ևս երկու այծամայր,		
--	--	--	---	--	--

			սակայն դժվար ծնի հետևանքով, մայրերը և ուլերն անկել են, ուստի պտղատվության ցուցանիշը հաշվի չենք առնում: Ստուգիչ կշռումների տվայլների վերլուծության համաձայն՝ մինչև 33 օրական 21 գլուխ ուլերի միջին օրական քաշաճը կազմել է 122, իսկ 33-64 օրական հասակի 25 գլուխ ուլերինը՝ 78 գ: Կատարվել է այծամայրերի համալիր գնահատում ըստ կաթնային մթերատվության, պտղատվության, ստացված կենսունակ ուլերի քանակի, տրված ուլերի սեռի, որի հիման վրա էլ կատարվել է տոհմային տնտեսության ստանդարտների առավելագույն չափանիշներին չհամապատասխանող այծամայրերի խոտանում/վաճառք: Կենսաքիմիական և գենետիկական հետազոտություն: Մանր եղջերավոր կենդանիների կաթի կենսաքիմիական հետազոտությունն իրականացվել է սպեկտրաֆոտոմետրիկ եղանակով (Jenway). միզանյութի քանակական, լակտատ դեհիդրոգենազայի ակտիվության, ջրածնային ցուցիչի (PH-մետր) և թթվային ֆոսֆատազայի ակտիվության որոշում՝ անալիտիկ ծավալային մեթոդով (թթվահիմնային տիտրում): Հետազոտությունն իրականացվել է Կրաշենի այծաբուծական Զաանինյան ցեղի այծերի կաթում: Ըստ ստացված ցուցանիշների՝ հետազոտման ենթարկված կենդանիների մոտ հայտնաբերվել են միզանյութի բարձր քանակություն և ֆերմենտի բարձր ակտիվություն, PH- ի և թթվային ֆոսֆատազայի նորմալ արժեքներ: Հաշվետու տարում ծրագրի շրջանակում մեր կողմից խնդիր է դրվել ուսումնասիրել Զաանինյան ցեղի բազմապտուղ այծերի արյան և կաթի պոլիմորֆ սպիտակուցները՝ բազմապտուղությունը պայմանավորող գենետիկական մարկերներ մշակելու և գենոտիպավորում անցկացնելու նպատակով: Արյան նմուշառումը կատարվել է Կրաշենի այծաբուծական տնտեսությունում բուծվող		
--	--	--	---	--	--

				2-3 տարեկան 11 կենդանիների լծային երակից՝ հել ակտիվատոր պարունակող վակուումային փորձանոթների միջոցով: Որոշվել է նաև արյան շիճուկում դաբաղ հիվանդության նկատմամբ կառուցվածքային և ոչ կառուցվածքային սպիտակուցների քանակությունը՝ բնական դիմադրողականության բացահայտման նպատակով:		
8	ԱՆԱՍԱՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺ ԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ	12043.4	8.75	2021 թ. իրականացվող ծրագրի նպատակն էր ուսումնասիրել հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների, թռչունների, ձկների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածությունը, մշակել բուժկանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև տալ պատահական վայրերում վաճառվող կաթի և կաթնամթերքի սանիտարական գնահատականը: 1. Ձկների ինվազիոն հիվանդությունների տարածվածությունը հանրապետության ձկնաբուծարաններում, դրանց առաջացման պատճառները և պայքարը: 2021 թ. ընթացքում հետազոտական կենտրոնի մակաբուծաբանական լաբորատորիայում ուսումնասիրվել են տարբեր բնակլիմայական գոտիների ձկնաբուծական տնտեսություններում բուծվող ձկնատեսակների մոտ հանդիպող մակաբուծային հիվանդությունների ֆաունան, տարածվածությունն ու պատճառած վնասները: Իրականացվել է ձկների լրիվ մակաբուծաբանական հետազոտություն ըստ Ի.Ե. Բիխովսկայա-Պավլովսկայայի: Սևանա լճից, Երևանյան լճից, Հրազդան գետի վերին հոսանքից (Գեղարքունիքի մարզ), Արարատի մարզի Սևջուր գետից, Կոտայքի մարզի Մարմարիկ գետից, Տավուշի տարածաշրջանից և Երևանի խեցգետնաբուծական տնտեսություններից բերված տարբեր ձկնատեսակների և խեցգետինների մոտ հայտնաբերվել են մի շարք մակաբուծային հիվանդություններ:	2(0/2)	

			Համեմատելով մեր ուսումնասիրության և նախորդ տարիների տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ նկատվում է Հայաստանի Հանրապետության լճակային տնտեսություններում, արհեստական պայմաններում բուծվող և բնական ջրավազաններում բնակվող ձկների արտաքին մակաբույծների ֆաունայի շարունակական աղքատացում, ինչը հավանաբար չափից շատ ջրօգտագործման և տարբեր ծագման նյութերով ջրավազանների աղտոտման հետևանք է: Ավելացել են նաև ձկների ներքին մակաբույծների, հատկապես կենսահեղինակների բազմազանությունը և վարակվածության էքստենսիվությունը: Ներքին մակաբույծների ավելացումը վկայում է ձկների մակաբույծների ֆաունայի հարստացման և կայունացման մասին: 2. Թռչունների սալմոնեյոզի տարածվածությունը Հայաստանի տարբեր տարածաշրջաններում, ախտորոշումը և բուժկանխարգելիչ միջոցառումների մշակումը: Թռչունների սալմոնեյոզի համաճարակային իրավիճակի գնահատումը խիստ կարևորվում է հիվանդության ախտորոշման, կանխարգելման ու պայքարի տեսանկյունից: Միաժամանակ հայտնի է, որ սալմոնելաներով ախտոտված թռչնամթերքը վտանգ է ներկայացնում մարդկանց առողջության համար, ինչն էլ նպաստում է սննդային թունավորումների առաջացմանը: Հաշվետու ժամանակահատվածում Արարատի մարզի ջայլամաբուժական տնտեսությունում արձանագրվել է 2-3 ամսական ջայլամների անկում: Անկման պատճառը պարզաբանվել է համաճարակաբանական տվյալների, կլինիկական նշանների, ախտաբանաանատոմիական փոփոխությունների և մանրէաբանական հետազոտությունների արդյունքների հիման վրա:		
--	--	--	--	--	--

			Հետազոտությունների նպատակն էր բացահայտել ջայլամների զգայունակությունը սալմոնելաների որոշ շիճուկաբանական տիպերի նկատմամբ: Սալմոնելաների առկայությունը գնահատվել է մանրէական գաղութների և դրանցից պատրաստված քսուքում մանրէների մորֆոլոգիական առանձնահատկությամբ: Սալմոնելաների զգայունությունը In vitro պայմաններում ուսումնասիրվել է պենիցիլինի, ցեֆազոլինի, ցեֆտրիաքսիմի, սուլֆանիլամիդային պրեպարատների, ստրեպտոմիցինի, բիցիլին-3-ի, նիտոքսի, սինտոմիցինի նկատմամբ: Սալմոնելաների պատկանելիությունը և շիճուկաբանական տիպը որոշվել է A,B,C,D,E խմբի ադսորբացված բազմարժեք «O» հակաձնային շիճուկներով: Արդյունքում բացահայտվել և հիմնավորվել է ջայլամների սալմոնելյոզ հիվանդությունը: Հետազոտման ընթացքում կարևորվել են հիվանդ և առողջ թռչունների մանրէակրությունը, զոոհիգիենիկ պայմանները, կերակրումը և իրականացվող միջոցառումները: 3. Հանրապետության մանր ֆերմերային տնտեսություններում առաջնաձին կովերի մոտ հանդիպող կաթնագեղձի և այլ ուղեկցող հիվանդությունների հայտնաբերումը, դիֆերենցումը և կանխարգելումը: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են առաջնաձին կովերի մոտ կաթնագեղձի հիվանդությունների տարածվածությունը, ինչպես նաև մաստիտների տեսակներն առաջնաձին կովերի մոտ, կաթնագեղձի հիվանդությունների բուժումը, մաստիտների բուժման նպատակով վակցինաների կիրառումը, կապույտ յոդի օգտագործումը առաջնաձին կովերի կաթնագեղձի ախտահարման ժամանակ: Հետազոտական աշխատանքների ընթացքում դեղորայքային		
--	--	--	--	--	--

			բութումը համատեղվել է վիտամինների և իմունոմոդուլատորների՝ միջմկանային ներարկումների հետ: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ առաջնաձին կոլերի մոտ վիրուսային պապիլոմատոզով ախտահարվածությունը հետազոտված տնտեսություններում կազմում է 32,7 % (հաշվարկը կատարվել է 100 գլուխ կենդանիների քանակով): Հետազայում իրականացվել է համալիր բութում. օգտագործվել է 3 դեղամիջոց՝ նովոկային, վիտամին B12 և հակավիրուսային քսուք՝ բետադին: Ստացված արդյունքները բավականին արդյունավետ էին: 4. Փողոցային առևտրի դեպքում վաճառվող կաթի և կաթնամթերքի սանիտարական գնահատականը երևանում: Կաթում բրուցելաներ հայտնաբերելու համար կատարվել է օղակային ռեակցիայի փորձը: Մաստիտի հայտնաբերման փորձերը կատարելիս ստացվել են հետևյալ տվյալները. Մուլբիից, Վարդենիսից, Օշականից, Կարբիից վերցրած կաթում նկատվել է կասկածելի ռեակցիա (դոնդողի հետքեր): Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերից բերված կաթի նմուշներում ստացվել է դրական ռեակցիա՝ առաջացել է դոնդող և նմուշները ձեռք են բերել մորուզույն: Իսկ մնացած հետազոտվող նմուշներում բացակայել է մաստիտ հիվանդությունը, ստացվել է բացասական ռեակցիա (համասեռ նարնջագույն հեղուկ առանց դոնդողի առկայության): Տուբերկուլյոզի նկատմամբ կաթի հետազոտություն կատարելիս միկոբակտերիաներ հայտնաբերվել են միայն Արարատի մարզից բերված կաթի նմուշում: Բրուցելյոզի նկատմամբ հետազոտություն կատարելիս ստացվել են բացասական արդյունքներ (փորձանոթի պարունակյալը		
--	--	--	---	--	--

				հավասարաչափ ներկվել էր բաց կապույտ): Միայն Ափնայից, Ծովագյուղից, Կարբիից և Նորք-Մարաշ վարչական շրջանից վերցրած կաթի նմուշները գնահատելիս նկատվել է առաջացած օղակի թույլ գունավորում, ինչը փաստում է կասկածելի ռեակցիայի առկայության մասին: Կատարվել է հետազոտվող կաթի զգայաբանական փորձաքննություն՝ որոշվել են գույնը, համը, հոտը, մածուցիկությունը և մեխանիկական մասնիկների առկայությունը: Կաթի մանրէական աղտոտվածությունը համապատասխանել է 1-ին խմբին, խտաստիճանը տատանվել է 1,02-1,032, կեղծումները բացակայել են, PH կազմել է 5,0-6,5:		
9	ՊԵՍՏԻՑԻԴՆԵ ՐԻ ՍԻՆԹԵԶԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱ- ՆՈՒԹՅԱՆ	8602.3	7.5	Ժամանակակից բնապահպանական պահանջները բավարարող նոր արդյունավետ պեստիցիդների մշակումը բավական բարդ ու դժվար լուծելի հիմնախնդիր է: Հաշվետու ժամանակահատվածում նպատակային սինթեզներն իրականացվել են ինչպես N, O, S պարունակող հինգանդամանի և վեցանդամանի հետերոցիկլների, այնպես էլ դրանց չկոնդենսված և կոնդենսված բի-, տրի- և տետրացիկլիկ համակարգերի ածանցյալների շարքերում: Ուսումնասիրությունները կատարվել են հետևյալ հիմնական ուղղություններով. 1. Նախկինում ստացված N, S, O պարունակող բազմատոմ հետերոցիկլիկ միացությունների ֆունկցիոնալացում: 2. Երկու, երեք կամ չորս տարբեր հետերոցիկլեր պարունակող չկոնդենսված և կոնդենսված համակարգերի նոր ածանցյալների նպատակային սինթեզներ՝ պեստիցիդային երկու հատկությունների համադրությամբ նոր պատրաստուկների հայտնաբերման ակնկալիքով: 3. Սինթետիկ եղանակների վերամշակում «կանաչ քիմիայի» և	4(2/2)	2(0/2)

				ընապահպանական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝ կիրառելով գերծայնային և միկրոալիքային ճառագայթման տեխնիկան: 4. Սինթեզված միացությունների նախնական լաբորատոր-վեգետացիոն փորձարկումներ՝ դրանցից ընտրված առավել ակտիվ նյութերի հետագա խորը ուսումնասիրությունների և դաշտային փորձարկումների համար: Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 4 գիտական հոդված, միջազգային համաժողովներում ներկայացվել է 2 զեկույց: Դրամաշնորհային ծրագրեր 1. 2021 թ. ստացվել է «Հետերոցիկլերի ածանցյալների սինթեզը միկրոալիքային (ՄԱ) և գերծայնային (ԳՁ) ճառագայթման ազդեցության տակ» թեմայով ծրագրի ֆինանսավորում: 2. Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի արդյունքում ստացվել է ֆինանսավորում (6600.0 հազ. ՀՀ դրամ) Sineo ֆիրմայի Սինթեզի միկրոալիքային համակարգ «MAS-II Plus» սարքավորման ձեռքբերման համար:		
10	ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-ՍՈՒԹՅԱՆ	4301.2	3.5	Հետազոտությունների արդյունքում լուծվել են հետևյալ խնդիրները. 1. Առաջին անգամ կատարվել են «Դիլիջան» ազգային պարկի հարակից ագրոէկոհամակարգերի գյուղատնտեսական հողատարածքների էկոլոգիական վիճակի գնահատում, դեգրադացվածության աստիճանի որոշում և համապատասխան միջոցառումների մշակում, Հրազդանի անտառտնտեսության օրինակով ուսումնասիրվել է էկոլոգիական ծառայությունների և	9(5/4)	3(0/1)

			անտառվերականգնման ու անտառհատումների վիճակը, մշակվել են միջոցառումներ և արդյունքները հանրայնացնելու նպատակով նախապատրաստվել և ներկայացվել է գիտական երկու հոդված՝ ՀԱԱՀ և ՀՊԱՀ տեղեկագրում հրատարակելու համար: 2. Սևանի ավազանի պայմաններում առաջին անգամ դաշտային փորձերով հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել է կենսատեխնոլոգիական նորագույն մեթոդներով ստացված օրգանական պարարտանյութերի (սուպեր կոմպոստ, կենսահումուս), աճի խթանիչների (կենսահեղուկ) և բարձր կլանողական հատկություններով բնական հանքային հումքատեսակների (ցեոլիտ, բենտոնիտային կավ) չափաքանակների և կիրառման եղանակների տնտեսաէկոլոգիական արդյունավետությունը կարտոֆիլի տնկարկներում: 3. Փորձարկվող տարբերակներում գնահատվել են ցեոլիտի և բենտոնիտի տարբեր հատիկաչափերի ու չափաքանակների ազդեցությամբ հողում խոնավության պահպանման և կարտոֆիլի ոռոգման ռեժիմի կրած փոփոխությունները՝ ETg ոռոգման չափիչ սարքի և ցուցիչների տեղադրման, ստացված բերքի տվյալների համադրման ճանապարհով: Սևանի ավազանի պայմաններում հողի խոնավության և մշակաբույսերի սննդային ռեժիմի կարգավորմամբ տեխնոլոգիա մշակելու և արտադրության մեջ ներդնելու նպատակով հաշվետու տարվա մայիսի 8-ից 9-ը Գեղարքունիքի մարզի Արծվանիստի համայնքում ֆերմերի հողատարածքում շարունակվել են դաշտային փորձերը, կատարվել են փորձարկվող տեխնոլոգիաներին համապատասխան հողաբարելավիչների հող ներմուծման և կարտոֆիլի սերմնանյութի տնկման աշխատանքներ: Հետազոտությունների արդյունքում կատարվել են հետևյալ		
--	--	--	--	--	--

			հիմնական եզրակացությունները. 1. Բացահայտվել է, որ «Դիլիջան» ազգային պարկի հարևանությամբ գտնվող Դիլիջան խոշորացված համայնքի, դրա կազմի մեջ մտնող վարչական տարածքների, Ֆիզլետովո և Մարգահովիտ համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերից 81 հա վարելահող, 241 հա խոտհարք և 716 հա արոտավայր մարդածին տարաբնույթ գործոնների, ինչպես նաև կլիմայի գլոբալ փոփոխությունների ազդեցությամբ ենթարկվել են խորը դեգրադացիայի, ուստի անհրաժեշտ է իրականացնել մակերեսային բարելավման միջոցառումներ: 2. Սևանա լճի էկոլոգիական վիճակը բարելավելու նպատակով, ավազանի հողակլիմայական պայմաններում աճեցվող շարահերկ մշակաբույսերի ցանքերում պարարտացման աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է հրաժարվել հանքային պարարտանյութերից, փոխարենը կիրառել կենսահումուս (7 տ/հա), որի 60 %-ը հող ներմուծել ցանքակից, 40 %-ը՝ սնուցմամբ: Մինչույն ժամանակ ցանքակից հող ներմուծել 30 տ/հա ցեոլիտ և 2 անգամ 5 լ/հա նորմայով (500 լ ջրի հետ) կենսահեղուկով կատարել արտարմատային սնուցում: Առաջարկվող տեխնոլոգիայի կիրառման արդյունքում ապահովվում է կարտոֆիլի 400-420 գ/հա բարձրորակ բերք, 2026.5 հազար դրամ լրացուցիչ շահույթ: 3. Կիրառված տեխնոլոգիայի շնորհիվ Սևանի ավազանում ջրովի երկրագործության պայմաններում տնտեսվել է 1200 մ³/հա ոռոգման ջուր, որը հոսելով Սևանա լիճ, կբարելավի լճի էկոլոգիական վիճակը, նորմալ պայմաններ կստեղծի բուսական ու կենդանական աշխարհի աճի և զարգացման համար: Կիրառելով տեխնոլոգիան ավազանի շուրջ 38 հազ. հա ջրովի տարածքներում՝ տարեկան կտնտեսվի ավելի քան 50 մլն մ³ ջուր, ինչը կբարձ-		
--	--	--	--	--	--

			րացնի լճի մակարդակը, կբարելավվի ջրերի էկոլոգիական վիճակը: 4. Նշված տեխնոլոգիական առաջարկությունները 2021 թ.-ին արտադրական փորձաքննության են ենթարկվել ու հաստատվել Սևանի ավազանի երեք համայնքների 22 ֆերմերային տնտեսությունների 2 հա կարտոֆիլի և կաղամբի դաշտերում: Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են երկու դրամաշնորհային ծրագրեր, որոնցից մեկը հաստատվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից:		
--	--	--	---	--	--

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանի ֆոնդն առ 31.12.2021 թ. կազմում է 546820 միավոր գրականություն, որից ուսումնական՝ 194053, գիտական՝ 304478, գեղարվեստական՝ 48289: Հաշվետու ժամանակահատվածում ստացված գրականությունը կազմել է 2360 միավոր (293 անուն): Գրադարանի ընթերցողների թիվը 2021թ.-ին կազմել է 1798, որից 540-ը՝ համալսարանի աշխատակիցներն են: KOHA գրադարանային ծրագրով գրանցված ընթերցողների թիվը 2021 թ. կազմել է 3070: Գրադարանի սպասարկման կետերում՝ ընթերցասրահներում, էլեկտրոնային ընթերցասրահներում և սպասարկման բաժնում հաճախումների թիվը 2021 թ. կազմել է 8235, իսկ 2020թ. կազմել է 5608 :

Գրադարանի library.anau.am կայքէջի ընդհանուր այցելությունները 2021թ. կազմել է 140.490, իսկ 2020 թ.՝ 128.509: KOHA էլեկտրոնային գրացուցակի կայքէջի ընդհանուր այցելությունների թիվը 2021թ. կազմել է 31.914, իսկ 2020թ-ին՝ 28.142:

Սպասարկված գրականության քանակը 2021թ. կազմել է 2321 միավոր, սպասարկման բաժնում 1354, իսկ ընթերցասրահներում՝ 967 միավոր:

2021 թ. ՀԱԱՀ-ի աշխատակիցների գիտական 85 հոդվածների համար նշանակվել է դասիչ, իսկ 2020թ.՝ 115 հոդվածի դասիչ:

KOHA էլեկտրոնային գրացուցակի ստեղծման նպատակով 2021 թ. մուտքագրվել են 6.317 միավոր (1908 անուն), իսկ 2020 թ.՝ 4658 միավոր (1908 անուն) գրականության տվյալներ: Ընդհանուր հաշվարկով 2007-2021 թթ. մուտքագրվել է 454.448 միավոր (93.074 անուն) գրականություն:

Գրադարանում շարունակվում է գրքերի թվայնացման գործընթացը: 2021թ. թվայնացվել է 9 անուն գիրք (1738 էջ):

Գրադարանի Koha էլեկտրոնային գրացուցակում ներառված համալսարանի գիտաշխատողների գիտական հոդվածների նկարագրությունները և էլեկտրոնային տարբերակների քանակը առ 31.12. 2021 թ. կազմել է 1962: 2021 թ. Koha էլեկտրոնային գրացուցակում ավելացվել է 78 գիտական հոդվածի նկարագրություն և էլեկտրոնային տարբերակ:

Գրապահոցներում կատարվել է ֆոնդի տեղաշարժ, ստուգվել և վերադասավորվել է հայերեն լեզվով ամբողջ գրքային ֆոնդը և ռուսերեն լեզվով դասագրքային ֆոնդը :

2021 թ. շարունակվել են վերականգնվել ծառայողական ընթերցողական գրացուցակի մաշված քարտերը, որի արդյունքում մոտ 15.400 քարտ է գրվել և տեղադրվել քարտարաններում:

ՀԱԱՀ գրադարանը 2021 թ. ակտավորել և գրադարանային գրքամատյաններից, KOHA էլեկտրոնային գրացուցակի բազայից հանել է 10.537 միավոր գրականություն:

Փետրվարի 19-ին՝ Գիրք նվիրելու օրը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 1-ին մասնաշենքում բացվեց ուսանողների համար սպասված ու ցանկալի միջավայր ստեղծող բաց տարածքի ոճով ընթերցասրահ, որը վերակառուցվել է Արդշինբանկի ֆինանսավորմամբ և ՀԱԱՀ աջակցության հիմնադրամի համաֆինանսավորմամբ:

2021 թ. հունիսի 9-ին տեղի ունեցավ համալսարանական բաց տարածքի ոճով հերթական սրահի բացումը երկրորդ մասնաշենքում: Այս սրահը վերակառուցվել և կահավորվել է համալսարանի երեք շրջանավարտների հովանավորությամբ: Նոր

սրահը ուսանողների և դասախոսների համար կծառայի որպես ընթերցելու, աշխատելու, հանդիպումներ կազմակերպելու վայր:

ՀԱԱՀ գիտական գրադարանն ամեն տարի հոկտեմբերի 7-ին՝ գրադարանավարի օրվան նվիրված հետաքրքիր նախաձեռնությամբ է հանդես գալիս: Այս տարվա միջոցառումը պատմական նշանակություն ունեւ բուհի համար. կազմակերպվել էր 90 տարվա ընթացքում համալսարանի դասախոսների հեղինակած ավելի քան 920 անուն գրքերի ցուցադրություն:


ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

2021 թ. կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 10 հուշագրեր և պայմանագրեր Բելգրադի համալսարանի, Լոժի համալսարանի, Սումիի ազգային ագրարային համալսարանի, Ապադանա բարձրագույն կրթության ինստիտուտի, Հունական Արատոս ընկերության, Մշակութային երթուղիների ուսումնասիրության համալսարանական ցանցի, Բուխարեստի ագրոնոմիական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարանի հետ:


ԷՐԱՁՄՈՒՍ+ ՀԳԻ

2021 թ. Էրազմուս+-ի շրջանակներում ՀԱԱՀ-ն ունի կնքված 47 պայմանագրեր, և ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս ծրագրով համագործակցում է 35 համալսարանների հետ: Սկսած 2015 թվականից ամեն տարի Էրազմուս+-ի պայմանագրերի ու համագործակցող համալսարանների քանակն ավելանում է:



Էրազմուս+ շարժունության տվյալներ

	Հաստատություն	Արտագնա		Ներգնա
		աշխատակից	ուսանող	աշխատակից
1.	Պիրեուսի համալսարան, Հունաստան	3		
2.	Կլուժ Նապոկայի գյուղ. գիտ. և անաս. բժշկա. համալսարան, Ռումինիա	1		2
3.	Բեժայի Պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա	2		
4.	Արևմտյան Ատտիկայի համալսարան, Հունաստան	1	1	5
5.	Գազենհայմի համալսարան, Գերմանիա		1	
6.	Բանատի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան			2
	Ընդամենը	7	2	9



COVID-19-ով պայմանավորված չիրականացված շարժունության պատճառով 2021 թ. Էրազմուսի շարժունության և կարողությունների զարգացման մրցույթը չեղարկվել էր և 2021-22 ուստարում ՄԿԴ-ն իրականացնում է 2020 թ. մրցույթի արդյունքներով շահած շարժունության ծրագրերը: 2020 և 2021 թթ. գործուղումների նման քիչ թվաքանակը պայմանավորված է COVID-19 պանդեմիայով:

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2021 թվականին ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների և հանդիպումների:

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	
	ուսանողներ	անձնակազմ
Էրազմուս+ ՀԳ1	2	7
Erasmus+ KA2		3
DAAD	8	3
Այլ		16
Ընդամենը	10	29

ՀԱԱՀ-ում նկատվում է անգլերենին տիրապետող ուսանողների ցավալի նվազում: Այսպես, 2021 թ. աշնանը հայտարարված բազմաթիվ մրցութային տեղեր մնացին թափուր: Դրանք առնչվում են ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետներին:

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ2 ԾՐԱԳՐԵՐ

Այս տարի ՀԱԱՀ-ը հաջողությամբ ավարտին հասցրեց իր 2 Էրազմուս+ ՀԳ2 Topas և AbioNet ծրագրերը, իսկ մյուս 2 ծրագրերը՝ SMARTI-ն և GeoTak-ը, իրենց իրականացման փուլում են:

«Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում» (TOPAS) ծրագրի շրջանակներում այս տարի տեղի ունեցավ հերթական վերապատրաստումը: Երկու շաբաթների ընթացքում Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի 33 դասախոսներ ոչ միայն վերապատրաստվեցին ուսանողակենտրոն դասավանդման մեթոդների ուղղությամբ, այլև ակտիվորեն քննարկեցին, կիսվեցին իրենց փորձով ու կարծիքներով և վերհանեցին այն բացերը, որոնք առկա են վերոհիշյալ կրթական միջավայրի ստեղծման գործում: Միաժամանակ տպագրվեծ TOPAS-ի ձեռնարկը, ՀԱԱՀ մուղում ստեղծվեց ծրագրի էջը՝ ստեղծված բոլոր նյութերով հանդերձ:

«Կենսաարտադրանքների տեխնոլոգիայի ոլորտում գերազանցության հայկական ցանց» (AbioNet) ծրագրի շրջանակներում այս տարի համալսարանը զինվել է նորագույն սարքավորումներով, որոնցից օգտվելու հմտություններն ու կարողությունները Zoom հարթակում իրականացված դասընթացների շնորհիվ արտասահմանցի գործընկերները ուսուցանել են շահառու ամբիոնների աշխատակիցներին և մագիստրանտներին: Այսօր արդեն վերապատրաստված աշխատակիցները կարող են իրենց գիտելիքները փոխանցել մյուսներին: Այս տարի նաև տեղի ունեցավ ծրագրի հերթական հանդիպումը, որի հիմնական նպատակն էր

քննարկել և որոշել այն մոտեցումները, որոնք անհրաժեշտ են միացյալ և կրկնակի դիպլոմների շնորհման համար:

Այսպիսով՝ ծրագրի շնորհիվ ստեղծվեց և ներդրվեց Սննդամթերքի անվտանգության կրթական ծրագիրը, կահավորվեց ժամանակակից լաբորատորիա՝ նախատեսված սննդի որակի հսկման և անվտանգության որոշման համար, ստեղծվեցին նախադրյալներ՝ այդ ոլորտում համատեղ կրթական ծրագիր իրականացնելու համար:

«Աջակցություն անգլերենով դասավանդման նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով» (SMARTI) ծրագրի շրջանակներում 2021 թ. տեղի ունեցավ ծրագրի մեկնարկային հեռահար հիբրիդային հանդիպումը, իսկ հոկտեմբերին տեղի ունեցավ ծրագրի կառավարման խորհրդի հերթական հանդիպումն ու աշխատանքային խմբերի վերապատրաստումը: Հանդիպման օրերի ընթացքում ներկայացվեցին գործընկեր համալսարանների կողմից իրականացված դաշտային հետազոտությունների հաշվետվությունները, ծրագրում ներգրավված անգլերենի դասավանդման գրականության և ECTS համակարգի ուժեղ և թույլ կողմերը: Քննարկվեցին EMI կենտրոններ ստեղծելու հարցը, որոնք անհրաժեշտ է հագեցնել սարքավորումներով, իսկ վերապատրաստումն ուղղված էր ծրագրի պաշտոնական կայքով և այլ սոցիալական ցանցերով նյութերի տարածման կարողությունների զարգացմանը:

«Հայաստանում և Ղրղզստանում աշխարհագրատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում միջառարկայական հետբուհական ծրագրերի մշակում և հետազոտական ցանցերի ամրապնդում» (GeoTAK) նախագիծը հիմնական նպատակն է զարգացնել հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերը Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում և ամրապնդել հետազոտական և նորարարական կապերը Հայաստանի հանրապետության և Ղրղզստանի Բարձրագույն ուսումնական հաստատությունների, արդյունաբերական և վարչարարական համակարգերի միջև:

Փետրվարի 10-12 կայացավ մեկնարկային հեռահար հանդիպումը, որի ընթացքում յուրաքանչյուր համալսարան ներկայացրեց գործող հետբուհական ծրագրերը և դրանց վերանայման ու հավատարմագրման հետագա ուղիները:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ռիսկերի գնահատում, Կադաստրի կոմիտեում տեղի ունեցած հանդիպման արդյունքում ծրագրի շրջանակներում ստեղծվել է ազգային հետազոտական հարթակ, Գեոմատիկային կից ստեղծվել է խորհրդական հետազոտական կենտրոն, իրականացվել է Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հետազոտությունների և մշակումների կարիքների գնահատում: ՀԱԱՀ-ի թիմը վերապատրաստվել է «Երկրատեղեկատվական համակարգերի (ArcGIS) կիրառությամբ Որոշումների կայացմանն աջակցող համակարգի օգտագործման», Strategies for Development «Դասավանդման և գնահատման հիմունքներ» թեմայով «Հմտությունների և գիտելիքի զարգացում» պիլոտային ծրագրի և «One soil» լրացուցիչ մասնագիտական ծրագրի շրջանակներում կազմակերպված «Թվային հարթակներ գյուղատնտեսությունում» դասընթացների շրջանակներում: Մեկնարկել է հայտագրված սարքերի և սարքավորումների գնումների իրականացման գործընթացը և ձեռք է բերվել սարքերից մեկը՝ դրոնը:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

- «Տեխնոլոգիական շաբաթը Արցախում 2021» (Tech Week Artsakh 2021) ՏՏ ոլորտի կարևոր իրադարձությունները միավորում է մեկ վայրում, որտեղ ռեկտոր Ուռուտյանը հանդես եկավ «Ագրոթեք ոլորտի զարգացման հնարավորությունները Հայաստանում եւ Արցախում» զեկույցով:
- «Նորարարության եւ տեխնոլոգիայի սինգապուրյան շաբաթի» (SWITCH) շրջանակում տեղի ունեցավ «Global Gateway to Innovation in Asia» համաժողովը, որտեղ, ի թիվս Եվրասիական տարածաշրջանը ներկայացնող հինգ այլ բանախոսների, ռեկտոր Ուռուտյանը հանդես եկավ զեկույցմամբ «Գյուղատնտեսության տեխնոլոգիական փոխակերպումը Եվրասիական տարածաշրջանում» ընդհանուր թեմայի ներքո:
- Պարենային քաղաքականության միջազգային հետազոտական ինստիտուտի (IFPRI) «Համաշխարհային պարենային քաղաքականության՝ Եվրասիայի վերաբերյալ 2021 թ. զեկույցի» արդյունքների եւ Եվրասիական տարածաշրջանի ագրոպարենային համակարգերի վրա ՔՈՎԻԴ-19-ի ազդեցության առցանց քննարկմանը ևս մասնակցել է ՀԱԱՀ-ի ռեկտորը: IFPRI-ի հետ համատեղ այն կազմակերպել էին Պարենային ապահովության եվրասիական կենտրոնը, Տաշքենդի Վեստմինստերյան միջազգային համալսարանը եւ Համաշխարհային բանկի խումբը:
- Երիտասարդ գյուտարարների միջազգային համաժողով Մեծ Նովգորոդում, որին մասնակցեց ՀԱԱՀ-ի 1 աշխատակից
- Մոնտենեգրոյում միջազգային գիտաժողով, ՀԱԱՀ-ից մասնակցեց 1 աշխատակից
- ՌԴ-ում «Գյուղատնտեսական տեխնիկայի, սարքավորումների և բուսաբուծական գյուղմթերքների արտադրության և և վերամշակման նյութերի 28-րդ միջազգային ցուցահանդես», որին ՀԱԱՀ-ից մասնակցեց 1 աշխատակից
- Սլովակիայի գյուղատնտեսական համալսարանի կողմից կազմակերպված «Սերմերի արտադրության, հավաստագրման և մասնագետների վերապատրաստման» թեմաներով ճանաչողական այց, որին մասնակցեց ՀԱԱՀ-ի ռեկտորը
- Վրաստանում «խաղողի և պտղատու տեսակների ժամանակակից տնկարան հիմնելու վերաբերյալ» խորհրդատվական այց, որին ՀԱԱՀ-ից մասնակցեց 1 աշխատակից
- Վայինշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում ռեկտորների կոնֆերանսին մասնակցեց նաև ՀԱԱՀ-ը
- Վայինշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի կողմից կազմակերպված սեմինար, որին ՀԱԱՀ-ից մասնակցեցին 3 աշխատակից և Ագրարային մենեջմենթ մագիստրոսական ծրագրի 13 ուսանող
- ՌԴ-ում Երկրորդ Եվրասիական կոնգրես, որին ՀԱԱՀ-ից մասնակցեց 1 աշխատակից:

Վերապատրաստումներ: 2021 թ.այլ (բացի Էրազմուս+-ից) ծրագրերով վերապատրաստման է մեկնել ՀԱԱՀ 5 աշխատակից.

- «Qualitative methods for studying urban blue-green infrastructure» վերապատրաստումը, որին ՀԱԱՀ-ի կողմից մասնակցեցին 2 աշխատակից
- «Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն» դրամաշնորհային ծրագրի կողմից կազմակերպված վերապատրաստում, որին ՀԱԱՀ-ից մասնակցեցին 2 աշխատակից
- ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի ՀՀ 7-րդ ազգային զեկույցի և հողերի չեզոք դեգրադացիայի թիրախային ցուցանիշների ներկայացման և շահակիցների վերապատրաստման դասընթացներ, որին ՀԱԱՀ-ից մասնակցեց 1 աշխատակից:

ՄԿԴ-ն նախորդ տարիների նման առավելագույնս տարածել է միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման նպատակով հնարավոր բոլոր տեղեկությունները ՄԿԴ-ի կողմից տարածվում են սոց. ցանցերով և ՀԱԱՀ պաշտոնական կայքով:

Այս տարի ՀԱԱՀ-ն առաջին անգամ շահեց Visegrad+ դրամաշնորհային ծրագիրը: Միջազգային կապերի դեպարտամենտի կողմից կազմված և ներկայացված ծրագրի նպատակը ՀԱԱՀ-ի ուսանողների և աշխատակիցների մոտ «փափուկ հմտությունների» (soft skills) զարգացմանն ուղղված մոդուլների մշակումն ու համապատասխան կենտրոնի հիմնումն է: Հավելենք, որ այն Հայաստանից ընտված միակ ծրագիրն է: Ցավոք, հաշվի առնելով ամբողջ աշխարհում առկա համաճարակային իրավիճակն ու համալսարանների մեծ մասի՝ օնլայն հարթակ անցնելու հանգամանքը, միջազգային համալսարանները փոքր-ինչ պասիվ են նոր ծրագրերին մասնակցելու տեսակետից:

Այս տարի ՄԿԴ-ն էապես ընդլայնեց տարատեսակ դրամաշնորհային ծրագրերին դիմելու գործընթացը: Մասնավորապես, ՄԿԴ-ն կազմել է համապատասխան ծրագրային առաջարկ-փաթեթներ և դիմել է հետևյալ ծրագրերին.

1. European Solidarity Corps – առաջին փուլը բարեհաջող անցնելուց հետո այժմ ՀԱԱՀ-ն անցնում է համապատասխան հավատարմագրում «Որակի պիտակ» ստանալու համար:
2. Էրազմուս+ Ժան Մոնե գործողություններ՝ մոդուլի դասավանդում:
3. Էրազմուս+ Ժան Մոնե գործողություններ՝ գերազանցության կենտրոն:
4. Վիշեգրադ+ (գինու տուրիզմի ուղղությամբ)

Հիմք ընդունելով ՀԱԱՀ մասնաճյուղերի միջազգայնացման հրամայականը, 2021 թ. հունիսի 29-ին ՄԿԴ պետ Գ. Համբարձումյանը Վանաձորի մասնաճյուղի աշխատակիցներին և ուսանողներին ներկայացրեց ՀԱԱՀ միջազգային ծրագրերը, դրանց դիմելու ընթացակարգը, առկա ծրագրերի վերջնարդյունքները և շատ այլ հարցեր: ՄԿԴ-ն մասնակցել է նաև ԵՄ-ի կողմից կազմակերպված Էրազմուս+ տեղեկատվական վեբինարին, ինչպես նաև Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական հանդիպմանը:

2021 թ. ևս դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվել են շուրջ 108 նյութեր, որոնցից 23-ը եղել են Էրազմուս+ ՀԳ1-ի մրցույթների հայտարարություններ, 14-ը նյութեր Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի ընթացիկ գործունեության մասին, 8-ը շարժունության մասնակիցների հոդվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի աշխատանքների համակարգման և որակի բարելավման նպատակով 2021 թ. Ուես մաս դարձան ՀԱԱՀ Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի ուսանողական և Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի աշակերտական խորհուրդները՝ Մասնաճյուղերի խորհրդի կարգավիճակով: Քոլեջի և Վարժարանի սաները այլևս անմասն չեն մնում կարևորագույն հարցերի ու խնդիրների քննարկումից և միջոցառումների կազմակերպումից:

Սեպտեմբերին և նոյեմբերին ՀԱԱՀ առաջին անգամ ոտք դրեցին առաջին կուրսեցիներ, որոնց դիմավորելու և ուսանողական կյանքին ծանոթացնելու պատասխանատու աշխատանքը իրականացրեց Խորհուրդը:

Սեպտեմբերի 25-ին Խորհրդի անդամները և Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսանողները այցելեցին «Բալահովիտ» ուսումնափորձական տնտեսություն: Այցի նպատակն էր ծանոթանալ տնտեսությանը, կացարանին ու կաթնամթերքի ուսումնական արտադրամասին, որտեղ էլ հետագայում մեր արցախցի հյուրերը անցան 7-օրյա ուսումնական պրակտիկա:

Ուսանողական խորհրդի կողմից լիարժեքորեն գործարկվում է e-Buh համակարգը՝ ուսանողների բացակայությունների վերաբերյալ հստակ տեղեկատվության ստացման և դրանց կանխարգելման արդյունավետ գործողությունների ձեռնարկման նպատակով:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Խորհուրդը կազմակերպել է տարաբնույթ միջոցառումներ, ապահովել անդամների և ուսանողների մասնակցությունը մի շարք կոնֆերանսների ու հանդիպումների:

Հուլիսի 6-ին կազմակերպվեց արշավ դեպի Տավուշ՝ ուսանողների արտալսարանային առօրյան հագեցնելու, մշակութային կյանքը ակտիվացնելու համար:

Օգոստոսի 12-ը և 13-ը Ուես անդամները Երիտասարդության միջազգային օրվա շրջանակում նախատեսված միջոցառումներին մասնակցելու նպատակով անցկացրին Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք Կապանում:

Սեպտեմբերին ՀԱԱՀ քաղաքաշտպանության շտաբի պետ Բենիամին Շամխալյանի հետ տեղի ունեցավ քննարկում, որի թեման արտակարգ իրավիճակներն ու դրանց ժամանակ ճիշտ կողմնորոշումն էր:

Հոկտեմբերի 2-ին ուսանողական ակտիվը կատարեց ավանդույթ դարձած ուղևորություն դեպի հայաստանյան գինեգործության բնօրրան՝ անմոռանալի օր անցկացնելու ու համոզեսելու 6000-ամյա պատմություն ունեցող գինեգործության նրբահամ ու անզուգական արտադրանքը:

Հոկտեմբերի 11-ին Խորհուրդը նախաձեռնեց «Արդյունավետ հաղորդակցումը՝ հաջողության գրավական» սեմինար-քննարկումը, որի բանախոսն էր փ.գ.թ. Արուսյակ Ղարիբյանը:

Հոկտեմբերի 12-ին Խորհրդի անդամները մասնակցեցին Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տանը AGRI CAMP նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբարի բացման հանդիսավոր արարողությանը:

Հոկտեմբերի 15-ին կազմակերպվեց վոլեյբոլի ընկերական հանդիպում ՀԱԱՀ Ռեկտորատի և Ուես թիմերի միջև, որը նպատակ էր հետապնդում կտրվել

բազմազբաղ առօրյայից և չմոռանալ «առողջ մարմնում առողջ հոգի» կարգախոսի պահպանման անհրաժեշտության մասին:

Հոկտեմբերի 29-ին Խորհրդի և Խաչմերուկ ուսանողական նախաձեռնության համագործակցությամբ անցկացվեց «Իրավիճակային առաջնորդություն» խորագրով սեմինար: Սեմինարն անցկացնում էր ոլորտում ավելի քան 30 տարի փորձառություն ունեցող Ռիչարդ Լամբը:

Նոյեմբերի 9-ին Խորհրդի անդամները ներկա գտնվեցին Ագրարային Բալահովտի ուսումնափորձական տնտեսությունում Կաթնամթերքի վարպետաց դպրոցի բացմանը:

Հատուկ ուշադրության է արժանի Միջֆակուլտետային խաղեր-2021 ինտելեկտուալ, մարզամշակութային իրադարձությունը, որին ներգրավված էին բոլոր ֆակուլտետների, Հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողները, Քոլեջի ու Վարժարանի սաները: Միջֆակուլտետային խաղեր-2021-ի մեկնարկը տրվեց հոկտեմբերի 22-ին, իսկ վերջին մրցաշարը անցկացվեց դեկտեմբերի 8-ին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 17-ից օգոստոսի 24-ը ՀՀ Կառավարության կողմից աջակցվող «Ամառ 2021»-ի շրջանակներում ուսանողները մասնակցեցին կամավորական հիմունքներով անցկացվող ճամբարային գործունեությանը:

Օգոստոսի 2-ից 8-ը Խորհրդի 6 անդամներ Հայաստանի ազգային ագրարային համալսարանը պատվով ներկայացրին ՀԱՊՀ Ուսանողական խորհրդի «Միասնության ուժը-2021» ուսանողական-երիտասարդական հավաքին:

Սեպտեմբերի 21-ին Խորհրդի անդամները մասնակցեցին «Ռուսական տան» կողմից կազմակերպված Խաղաղության միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:

Սեպտեմբերի 27-ին Խորհրդի անդամները այցելեցին Նկարիչների Միություն, որտեղ տեղի ունեցավ «1080 ԺԱՄ» խորագրով ֆոտոպատմության ցուցադրությունը՝ նկարահանված 44-օրյա պատերազմի ընթացքում: Ցուցադրության մասնակցության հրավերը ստացվել էր Հայ-ռուսական համալսարանի Ուսանողական խորհրդի կողմից:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համաձայն ՀԱԱՀ-ի հաստատված հաստիքացուցակի 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ համալսարանի և նրա մասնաճյուղերի առկա փաստացի հիմնական աշխատակիցների թիվն է 1154, որից՝

1.	Վանաձորի մասնաճյուղ, որից՝	54	
1.1	վարչատնտեսական կազմ		23
1.2	դասախոսական կազմ		31
2.	Սիսիանի մասնաճյուղ, որից՝	46	
2.1	վարչատնտեսական կազմ		20
2.2	դասախոսական կազմ		26
3.	Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	43	
3.1	վարչատնտեսական կազմ		31
3.2	գիտական աշխատողներ		12
4.	Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	15	
4.1	վարչատնտեսական կազմ		6
4.2	գիտական աշխատողներ		9
5.	Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ, որից՝	25	
5.1	վարչատնտեսական կազմ		11
5.2	գիտական աշխատողներ		14
6.	Շիրակի ակադեմիկոս Մ.Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ մասնաճյուղ, որից՝	36	36
6.1	վարչատնտեսական կազմ		12
6.2	դասախոսական կազմ		21
6.3	Ժամավճարային աշխատողներ		3
7.	Երեխայի խնամքի արձակուրդում	43	

Համալսարանի հիմնական փաստացի աշխատակիցների թիվն է՝ 891:

Բացի այդ տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ կատարելու համար աշխատանքային պայմանագրեր են կնքվել **73** անձանց հետ:

Ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրեր 2021 թվականի ընթացքում կնքվել է **397** անձի հետ:

Ստորև բերված աղյուսակում խմբավորված են փաստացի աշխատակիցների թվաքանակն՝ ըստ գործունեության ոլորտների:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում հիմնական փաստացի աշխատողների թիվը՝ 891	
Վարչական	25
Ընդամենը պրոֆեսորադասախոսական անձնակազմ՝ որից	463
Հիմնական	321
Ներքին համատեղությամբ	59
Արտաքին համատեղությամբ	59
Ժամավճարային դասախոսներ	24
Դեկանատների, ամբիոնների և լաբորատորիաների ուսումնառական հանձնակազմ	95

Աշխատակազմ	27
Քոլեջ	8
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	11
Ագրորիզնես դեպարտամենտ և ժամավճարային դասախոսներ	17
Ընդամենը՝ գիտահետազոտական ինստիտուտներ /հետազոտական կենտրոններ	71
Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարան	26
Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն	18
Ուսումնական գործընթացի կառավարման վարչություն	17
Գիտության դեպարտամենտ	4
Գիտական գրադարան	22
Տնտեսական վարչություն /այդ թվում՝ մասնաշենքեր, «Արաբկիր» ուս. հանրակացարան, պահակային ծառայություն, կաթսայատուն/	121
Միջազգային կապերի դեպարտամենտ	2
Որակի գնահատման և ապահովման կենտրոն	7
Ագրոտեխնոլոգիական ինկուբատոր	1
Ուսումնափորձնական տնտեսություններ	30
Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տուն	15

2021 թ. ընթացքում՝ ընդունվել է աշխատանքի՝ 425 մարդ, ազատվել է՝ 438 մարդ:

Աշխատանքի են ընդունվել 40 երիտասարդ դասախոսներ:

16 աշխատակից համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու համար ենթարկվել է վարչական տույժի (ստացել են նկատողություն):

3 աշխատող պարգևատրվել է համալսարանական պատվոգրով, 2 աշխատող՝ շնորհակալագրով:

Աշխատողների թվաքանակը, աշխատատեղերի շարժը 2021թ.

Աշխատողների թվաքանակը տարվա սկզբի դրությամբ	1167
Ընդունվել են աշխատանքի հաշվետու տարում	425
Ազատվել են աշխատողներ հաշվետու տարում, որից՝	438
• աշխատողի նախաձեռնությամբ	130
• այլ պատճառներով	306
• կրճատված	2
Աշխատողների թիվը տարվա վերջի դրությամբ, որից՝	1154
• մինչև 35 տարեկան	194
• 35-55 տարեկան	502
• 55-ից բարձր	458
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որից՝	463
• դոսի համատեղությամբ	83
• ներսի համատեղությամբ	59
• չպաշտպանած	168
Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող	18

աշխատողներ /վարչատնտեսական/	
Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներ /ուսումնական/	25

Համալսարանի վարկանիշավորման կարևոր ցուցանիշներից մեկն ուսանող-դասախոս հարաբերակցությունն է, որը հաշվարկվում է Common Data Set (CDS) Initiative-ի առաջարկած բանաձևով, U.S. News & World Report-ի պահանջն է բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ համալսարանների վարկանիշային ցուցակում ընդգրկվելու համար.

$$ՈԻ/Դ = [SF + SP/3] / [FFI + (FFN + FPI)/3],$$

որտեղ

SF-ն առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվն է,
 SP-ն՝ հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թիվը,
 FFI-ն՝ դասախոսների թիվը,
 FFN-ը՝ համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը,
 FPI-ն՝ ժամավճարով աշխատող դասախոսների թիվը:

Այսպիսով՝ ՀԱԱՀ ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2021 թվականին, ներառյալ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջը, կազմել է՝

$$ՈԻ/Դ = [1797 + 2823/3] / [321 + (118 + 37)/3] = 7,34:$$

Հարաբերակցությունը մի փոքր ավելի է երեք մասնաճյուղերը ներառելու դեպքում՝

$$ՈԻ/Դ = [2075 + 3264/3] / [342 + (121 + 97)/3] = 7,62:$$

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2021թ. ընթացքում գնումների բաժնի կողմից իրականացվել է 160 գնման մրցույթ, որից 26-ը ԷԱՃ (էլեկտրոնային աճուրդ համակարգ) ընթացակարգով, որի արդյունքում այս պահի դրությամբ կնքվել է 35 պայմանագիր (գումարը կազմում է 15 306 861 ՀՀ դրամ), 96-ը՝ ԳՀ (գնանշման հարցում) ընթացակարգով, որի արդյունքում այս պահի դրությամբ կնքվել է 173 պայմանագիր (գումարը կազմում է 300 059 168 ՀՀ դրամ) և 1-ը հրատապ մեկ անձ ընթացակարգով, որի արդյունքում կնքվել է մեկ պայմանագիր (գումարը կազմում է 6 444 600 ՀՀ դրամ): Չկայացած ընթացակարգերը 37-ն են, որից 18 ԷԱՃ (էլեկտրոնային աճուրդ համակարգ) ընթացակարգի և 19-ը ԳՀ (գնանշման հարցում) ընթացակարգի շրջանակներում: Իրականացվել է նաև 7 գնման մրցույթ, որոնց համար ֆինանսական միջոցներ պետք է հատկացվեն 2022 թ.: Դրանցից 4-ը ԷԱՃ ընթացակարգով են, 4-ը՝ ԳՀ ընթացակարգով և մեկը ՆԲՄ (նախաորակավորման բաց մրցույթ) ընթացակարգով, որոնց արդյունքում այս պահի դրությամբ կնքվել է 5 պայմանագիր: Մյուսները գտնվում են ամփոփման փուլում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ


SS կենտրոնի կարևորագույն առաքելություններից է համալսարանի կրթական տեխնոլոգիաների մշտական զարգացմանն ուղղված գործունեության իրականացումը: Այդ նպատակով հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները:



Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակ

Հաշվետու տարում համակարգի ակտիվ օգտատերերի թիվը կազմում է **4011**, գրանցվել են նաև հեռակա ուսուցման համակարգի ուսանողները: Համավարակի ընթացքում ավելի մեծ կիրառում է ստացել հեռավար ուսուցումը, որը ներառում է թե՛ դասընթացներն ու էլեկտրոնային նյութերը, թե՛ հանձնարարություններն ու քննարկումները: Կիրառվում են նաև գիտելիքների ստուգման առցանց եղանակներ. moodle էլ. ուսուցման հարթակում սկսել են շահագործվել quiz և forum գործիքները:

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում գործարկվել է ՀԱԱՀ էլեկտրոնային ուսուցման հարթակի բջջային հավելվածը (Moodle): Հավելվածի կիրառման վերաբերյալ կազմվել է ուղեցույց և այն տարածվել է սոցիալական մեդիայի միջոցով և ՀԱԱՀ պաշտոնական կայքում: Ագրարային ճարտարագիտության և Պարենամթերքի տեխնոլոգիայի ֆակուլտետների ուսանողների հետ իրականացվել է հավելվածի փորձարկում և ցուցադրվել են հավելվածի կիրառման ձևերն ու դրա առավելությունները:



Թարմացվել է moodle համակարգի տարբերակը՝ այն հասցնելով վերջին կայունին:

Հաշվետու տարում էլ. ուսուցման մասով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Համագործակցելով ամբիոնների հետ՝ ուսումնական պլաններին համապատասխան դուրս են բերվել այն առարկաների ցանկը, որոնք առկա չեն հարթակում, դրանք ստեղծվել են և կցվել համապատասխան դասախոսներին:
- Դեկանատներից ստացվող ցուցակների համաձայն՝ այն ուսանողների տվյալները, որոնք գրանցված չեն հարթակում (նոր ընդունված, վերականգնված և այլն), գրանցվել են և տրամադրվել մուտքաբառեր և գաղտնաբառեր:
- Պարբերաբար ստուգվել է, թե յուրաքանչյուր դասախոս քանի թեմա է ներբեռնել հարթակ, և արդյոք դրանք կցվել են ուսանողներին:
- Պատրաստվել է ուղեցույց բջջային հավելվածից օգտվելու համար:
- Ստեղծվել և լրացվել են քոլեջում դասավանդվող առարկաները:
- Թարմացվել են եղած ուղեցույցները, ինչպես նաև պատրաստվել են նորերը:
- Դասախոսներին մատուցվել է խորհրդատվություն՝ հարցաշարերի, ֆորումների կազմման և օգտագործման համար, ինչպես նաև նրանց աշխատանքի ընթացքում ծագող բոլոր հարցերին տրվել են պատասխաններ:
- Կազմակերպվել է Moodle հարթակի ուսուցում-դասընթաց բոլոր ֆակուլտետների առաջին կուրսերի ուսանողների համար:
- Ստեղծվել է elearning.anau.am հարթակի օգտագործողների հաշիվների ստեղծման, տրամադրման, կասեցման և վերականգնման ընթացակարգ:
- ՀԱԱՀ-ի էլ. ուսուցման հարթակի կայքը թարմացվել է և թեստավորվել 2 անգամ, ապա կազմվել է ուղեցույց և տրամադրվել ՀԱԱՀ-ի բոլոր դասախոսներին:

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ
ԱԿՏԻՎ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԹԻՎԸ



4011

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



145

ՍՏԵՂԾՎԱԾ ՆՈՐ
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՐԹԱԿ



4421

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ
ԴԱՍԸՆԹԱՑ



92%

ԱՎԵԼԱՑՎԱԾ
ՈՒԱՆՈՂՆԵՐԻ
ՀԱՇԻՎՆԵՐ



2080

ՓՈՓՈԽՎԱԾ
ԵՎ ՀԵՌԱՑՎԱԾ
ՀԱՐԹԱԿՆԵՐ



325

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

SS գիտելիքի բաժինն իրականացնում է նաև հետևյալ գործառույթները.

- Թեստավորման ծրագրի շահագործում, կառավարում և զարգացում
- Թեստերի կազմման կարգի ու ձևի մշակման ուղեցույցների պատրաստում
- Թեստերի հավաքագրում, ստուգում և մուտքագրման աշխատանքների իրականացում
- Թեստային քննությունների անցկացում, վերջնական տեղեկատվության ուղարկում համապատասխան դեկանատներ

Հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Առաջին և երկրորդ կուրսերի առարկաների թեստերից փոփոխվել են համապատասխանաբար 9 և 10-ական:
- Երրորդ կուրսերի 1-ին կիսամյակի 96 թեստերից մուտքագրվել են 80-ը, իսկ 2-րդ կիսամյակի 91 թեստերից մուտքագրվել են 8-ը: Հարկ է նշել, որ տրամադրված թեստերը մուտքագրվել են 100% -ով:
- 2021 թ-ին նախատեսված կրթական ծրագրերից կազմակերպվել և անցկացվել են՝
 - Հեռակա բակալավրիատի համար՝ 719 քննություն
 - Առկա բակալավրիատի համար՝ 581 քննություն
 - Առկա մագիստրատուրայի համար 60 քննություն

2022 թվականին նախատեսվում է մուտքագրել 4-րդ կուրսերի համար նախատեսված առարկաների թեստային հարցաշարերը:

Համավարակով պայմանավորված և կարևորելով հեռավար եղանակով մասնագիտական գրականության հասանելիության հարցը՝ SS կենտրոնի կողմից այս տարի ևս իրականացվեցին koha գրադարանային ավտոմատացված համակարգի ծրագրային թարմացումները: Այս միջոցառումները հնարավորություն տվեցին ապահովել առավել արագ ու արդյունավետ տրաֆիկ, ինչպես նաև գրադարանավարներին ավելի մեծ գործիքակազմեր՝ գործընթացի կառավարման համար: **Library.anau.am** կայքում բաց հասանելիությամբ տեղադրված 1000-ից ավելի մասնագիտական գրքերը, մեթոդական ուղեցույցները և այլ գրականությունը հնարավորություն տվեցին ապահովել հեռավար կրթության անընդհատությունը:


SS ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պաշտոնական **anau.am** կայքի գրեթե բոլոր էջերում կատարվել են թարմացումներ և համապատասխան փոփոխություններ: Ստեղծվել են ավելի քան **20** նոր էջեր, տեղադրվել են **150**-ից ավելի հայտարարություններ և նորություններ, **45** աճուրդային հայտարարություն:


2021 թ. օգոստոսին ՀԱԱՀ պաշտոնական կայքում կատարվել է ծրագրային թարմացում (wordpress 5.7), որից հետո ամբողջ կայքը թեստավորվել է 2 անգամ: Թարմացվել են կայքի ծրագրային **38** մոդուլներ: Արդիականացվել է նաև կայքի գրեթե բոլոր էջերի բովանդակությունը՝ մոտ **250** էջ, անընդհատ ակտիվ կապի մեջ գտնվելով բոլոր ստորաբաժանումների հետ:

Թարմացվել է նաև ընդունելության էջը, որտեղ տեղադրվել են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, համալսարան ընդունված դիմորդների ցանկը և այլն, ինչպես նաև արխիվացվել է ոչ արդիական տեղեկատվությունը:

Համավարակով պայմանավորված՝ կայքում ավելացվել են մի շարք նոր բաժիններ ու գործիքակազմեր՝ ուսանողներին, դիմորդներին և այլ շահառուների տեղեկատվության տրամադրման ու հավաքագրման համար:



Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի պաշտոնական կայքէջի հաճախումներն ըստ երկրների



Համալսարանի կայքի այցելուների քանակի վերաբերյալ տվյալները վերցվել են Google Analytics վեբ կայքերի վերլուծությամբ զբաղվող համակարգից:

www.anau.am

142.668

<http://persons.anau.am/>

Տարվա ընթացքում շարունակվել են persons.anau.am կայքի թարմացման աշխատանքները: Հավաքագրվել, մշակվել և կայքում ավելացվել է 106 CV: Աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

1C Հաշվապահական ծրագիր

Համալսարանի հաշվապահության 1C ծրագրի համար իրականացվել է պահուստային արխիվացման առանձին սերվերի ներդրման աշխատանք:

Թվային արխիվի ձևավորման գործընթաց

Այս տարի ևս իրականացվել են բազմատեսակ տեղեկատվության արխիվացման գործընթացներ՝ տեսանկարահանումների, ֆոտոնկարահանումների, քննությունների առցանց անցկացման, փաստաթղթերի և այլնի: Ֆինանսական և իրավաբանական փաստաթղթերի արխիվացման և կառավարման համար գործում է <https://files.anau.am/> համակարգը:

Համալսարանի կարիքների համար հաշվետու տարում ձեռք են բերվել օպերացիոն համակարգերի լիցենզիաներ, zoom հարթակի բաժանորդագրություններ, հոսթինգային ծառայություն, SSL Wildcard anau.am դոմենի համար՝ մեկ տարի ժամկետով:

<https://journal.anau.am/>

Գիտական հոդվածների ընդունման և կառավարման ավտոմատացված համակարգ Հրատարակչական-խմբագրական բաժնի աշխատակիցների հետ անցկացվել է ևս 3 դասընթաց: Նրանց ներկայացրած առաջարկությունները և փոփոխությունները կատարվում են: Իրականացրած դասընթացների արդյունքում, ստանալով հրատարակչական խմբագրական բաժնից մեկնաբանություններ, իրականացվում է հարթակի կատարելագործում:

Հարթակի ներդնումը կնպաստի աշխատանքի առավել թափանցիկությանը և արդյունավետությանը:

<https://memorial.anau.am/>

Համալսարանի մահացած ու զոհված ուսանողների, շրջանավարտների, դասախոսների հիշատակարան

Պարբերաբար հավաքվել, մշակվել և մուտքագրվել են զոհվածների և մահացածների նոր տվյալներ: Կայքում արդեն առկա են 57 հիշատակի և կենսագրական նյութեր, ինչպես նաև 40 հուշ և մոտ 500 հիշատակի մոմ:

Հաշվետու տարում SS-ի կողմից ներդրված նոր համակարգերը

- ✔ Հակավիրուսային կենտրոնացված համակարգ
- ✔ Սերվերների և ցանցային սարքերի մշտադիտարկման (մոնիտորինգի) համակարգ
- ✔ Սերվերների վիրտուալիզացիա
- ✔ Վիրտուալիզացիայի կառավարման կենտրոնական համակարգ
- ✔ <<Թիքերինգ>> խնդիրների գրանցման և կառավարման տոմսային համակարգ



<https://elearning.anau.am/>

ՀԱԱՀ-ի Moodle էլ. ուսուցման հարթակում SS կենտրոնի կողմից ավելացվել է 2 նոր դասընթաց, գրանցվել են մասնակիցները:

Գրանցվել է «TOPAS Էրազմուս+ ՀԳՁ ծրագիր «Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում» հարթակը Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի բաժնում և «Ագրոձեռնարկատիրություն» դասընթացը Կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնում:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
ebuh համակարգ

2021 թվականին շարունակվել են ebuh համակարգի և ուսումնական գործընթացի կառավարման վարչության, դեկանատների աշխատակիցների և ամբիոնների աշխատակազմերի հետ քննարկումները և վերապատրաստման գործընթացները: Դեկանատների և ամբիոնների աշխատակիցների համար անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է ավելի քան 100 աշխատակից): Ուսումնական գործընթացի կառավարման վարչության և ֆակուլտետների աշխատակիցների հետ քննարկումների և պարբերաբար անցկացվող հարցումների և թեստավորման արդյունքում հայտնաբերվել են մի շարք թերություններ, որոնք շտկվել են և համապատասխանեցվել համալսարանում գործող նոր պահանջներին: Բաժնի աշխատակիցների կողմից զուգահեռ մշակվում և ներդրվում են բուհի կառավարման գործընթացին առնչվող նոր մոդուլներ, ինչպես նաև արդիականացվում են գործող մոդուլները:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների իրականացման համար դեկանատների աշխատակիցների թողարկող ամբիոնների հանձնաժողովի քարտուղարի համար անցկացվել են լրացուցիչ վերապատրաստումներ:

2021 թ. շարունակվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ժամանակ քննական հանձնաժողովի գնահատականների մուտքագրումը համակարգ, որից հետո ավտոմատ հաշվարկվել է դրանց միջինացված ցուցանիշը: Ընդ որում, միջինացված ցուցանիշի հաշվարկի մեջ կատարվել է փոփոխություն՝ հաշվարկը կատարվում է հարյուրերորդականի ճշտությամբ և հաստատվում: Այս և մյուս բոլոր գնահատականները հետագայում օգտագործվել են դիպլոմի հավելվածում (միջուկում) ավտոմատ կերպով:

Ավտոմատ եղանակով դիպլոմների հավելվածների (միջուկների) գեներացման համար մուտքագրվել են 2016 թ. (բակալավրի կրթական աստիճան) և 2019 թ. և 2020 թ. (մագիստրոսական կրթական աստիճան) հաստատված ուսումնական պլանների բոլոր առարկաների անգլերեն անվանումները: Մուտքագրվել և/կամ վերահսկվել են բոլոր մուտքագրված մասնագիտական կրթական ծրագրերը (դիպլոմի հավելվածի հատվածները):

Բակալավրի և մագիստրոսական կրթական աստիճանների ներդրման շարունակականության ապահովման համար համակարգում մուտքագրվել է ավելի քան **150** նոր առարկա, որոնք օգտագործվել են ավելի քան **60** ուսումնական պլանների մուտքագրման համար:

Էսսի համակարգի ներդրման արդյունքում արձանագրվել են հետևյալ արդյունքները՝

- Ավտոմատացված եղանակով ստացվել են ուսանողների հաշվառման տվյալները՝ բացակայության արդյունքները, ամսական բացականների քանակները, ավտոմատացված եղանակով ստացվել են տոկոսային ու կիսամյակային բացականները և այլն:
- Իրականացվել են վարձավճարների հետ կապված թարմացման աշխատանքներ:
- Ավտոմատացված եղանակով ստեղծվել և գեներացվել են ավելի քան 2000 տեղեկագրեր, թարմացվել է դրանց արտահանման մոդուլը:
- Անհատական տեղեկագրերը ձևափոխվել և հարմարեցվել են նոր պահանջներին (տարանջատվել են անհատական տեղեկագրերը՝ տեղեկագրի տրամադրման պատճառը, կրեդիտային պարտքով ուսանողների համար ստեղծվել է բացականների տոկոսի մուտքագրման հնարավորություն և այլն):
- Ավտոմատացված եղանակով ստացվել են քննաշրջանի արդյունքները, տարեկան գնահատականների մատյանները:
- Ագրորեզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի օրինակով թեստավորվել են հաշվետվությունների 34 և 10 ձևերը:
- Ավտոմատացված եղանակով կատարվել է ուսանողների շրջափոխման գործընթացը, ավտոմատացված եղանակով ստացվել են դիպլոմների հավելվածները (միջուկները) բակալավրի (առկա ուսուցում) և մագիստրոսական կրթական աստիճանների համար:
- Թարմացվել է ամբիոնների ծանրաբեռնվածության մոդուլը:
- Ավտոմատացված եղանակով ստացվել է կրեդիտային (12 կրեդիտ) պարտք ունեցող ուսանողների ցանկը:

Կատարվել են նաև 2021-2022 ուստարվա հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- 2019 թ. և 2020 թ. հաստատված ուսումնական պլանների երկրորդ և երրորդ տարվա մուտքագրման աշխատանքների (թվով 37 հատ) վերահսկողություն:
- Ֆակուլտետների աշխատակիցների հետ միասին 2021թ. հաստատված մագիստրոսական կրթական աստիճանի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանների մուտքագրման աշխատանքները (թվով 27 հատ):
- Մուտքագրվել են նախնական բոլոր տվյալները, որոնց հիման վրա իրականացվել են ավտոմատացված եղանակով ամբիոնների ծանրաբեռնվածության ստացման և դասացուցակների մուտքագրման աշխատանքները:
- Թարմացվել է դասացուցակի մուտքագրման մոդուլը (հաշվի են առնվել սեպտեմբերի 1-ից ուշ սկսվող կուրսերը, կիսամյակի ընթացքում պրակտիկաների առկայությունը և այլն):
- Մուտքագրվել են բազմագործոնային համակարգով գնահատման նոր գործոնները:

Պարբերաբար իրականացվել է նաև պահանջվող տվյալների ընթացիկ ստուգում և հսկողություն.

- ☑ առցանց անցկացվող քննությունների համար տոմսերի առկայության ապահովում՝ ներկայացված պահանջներին համապատասխան,
- ☑ տեղեկագրի և բազմագործոնային բաղադրիչների ստուգում:

